ISSN 1829-2003

ՎԱՐՁՔ

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԳՐԱՄ

RESEARCH ON ARMENIAN ARCHITECTURE

VARDZK

DUTY OF SOUL

N 17 2022

Աշոտ Հակոբյան
ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԸ

էջ 1

Գրիգորիս եպիսկոպոս Աղվանեանց
ՓՈԽԱՆՈՐԴԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ Ի ՎԻՃԱԿԻՆ ԳԱՆՁԱԿՈՒ

էջ 11

Ռաֆֆի Քորթոշյան
ԱԲՈՒՂԱՄՐԵՆՑ ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԻՄԱԳՐԵՐԸ



էջ 33

Էմմա Աբրահամյան
ՍՈՎԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՀՐԱՎԱՐԻ ՎԻՄԱԳՐԵՐԻՑ ՄԵԿՈՒՄ



էջ 44

Արսեն Հարությունյան
ԶՈՒԱՏ ՆԱՀԱՏԱԿԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՏԱՊԱՆԱԳԻՐԸ ԴՍԵՂԻ ԲԱՐՁՐԱՔԱՇ ՍԲ. ԳՐԻԳՈՐ ՎԱՆՔՈՒՄ

էջ 46

Ռաֆֆի Քորթոշյան
ՓՐԿՎԱԾ ՄԱՍՆԻԿՆԵՐ ՀՈՇՈՏՎԱԾ ՄՇԱԿՈՒՅԹԻՑ

էջ 52

Սամվել Կարապետյան
ՈՒՇԱԳՐԱՎ ՏԱՊԱՆԱՔԱՐ ՂԶԼԱՐԻՑ

էջ 55

Էմմա Աբրահամյան
ՔՅՈՒՐԱԹԱՂ

էջ 56

ՎԱՐՁՔ
ARCHITECTURE
RESEARCH ON ARMENIAN ARCHITECTURE
ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

N 17 2022

ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄ
EDITORIAL BOARD
ԷՄՄԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
EMMA ABRAHAMIAN
ՌԱՖՖԻ ՔՈՐԹՈՇՅԱՆ
RAFFI KORTOSHIAN
ՀԱՍՄԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
HASMIK HOVHANNISSIAN

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕԳՆԱԿՈՐՈՂՆԵՐ
ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԼԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ-ՔՈՐԹՈՇՅԱՆ
Designers
ARMEN GEVORGIAN
LIANA
HOVHANNISSIAN-KORTOSHIAN

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱՐԱՄ
RESEARCH ON ARMENIAN ARCHITECTURE FOUNDATION
Engaged in informational Activity

ՎԿԱՅԱԿԱՆ N 03U089223
ՏՐՎԱԾ 13.10.2010
Certificate No. 03U089223
Given 13.10.2010

ՀԱՄԱՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ
ՌԱՖՖԻ ՔՈՐԹՈՇՅԱՆ
Responsible for this issue
RAFFI KORTOSHIAN

ԵՐԵՎԱՆ, ԲԱՂՐԱՄՅԱՆ 24/4
Baghramian 24/4 , Yerevan, RA

http://www.armenianarchitecture.am
http://www.raa.am
raayer@sci.am, raatransfer@yahoo.com
ՀԵՌՈՒ Հայաստան RAA Armenia
010 52 15 25

© ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱՐԱՄ
© Research on Armenian Architecture

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԸ

Աշոտ Հակոբյան

Տիգրան Մեծ

Հայոց արքա Տիգրան Մեծը (մ.թ.ա. 95-55 թթ.) գահակալության շրջանում իր անունով Մեծ Հայքում հիմնադրել է չորս բնակավայր: Գրավոր սկզբնաղբյուրներից հայտնի են Տիգրանավանը Գողթնում, երեք Տիգրանակերտ Արցախում, Ուտիքում և Աղձնիքում: Վերջինիս տարածքում է տեղակայված նրա քաղաքաշինության պսակը՝ Տիգրանակերտ մայրաքաղաքը:

Արցախի Տիգրանակերտը[1] գտնվում է ԱՀ Ասկերանի շրջանի Վանքասար լեռան արևելահայաց թեք լանջին (N 40.069956, E 46.901414, ծ. մ.՝ 440 մ): Ուտիքի Տիգրանակերտը (տեղացի հայերը կոչել են Տկռակերտ) Հյուսիսային Արցախում է՝ Շամխորի շրջանի Բարսումշեն գյուղից 3 կմ հյուսիս-արևելք՝ Շամքոր գետի ձախափնյա թեք լանջին (N 40.669431, E 46.014283, ծ. մ.՝ 680 մ)[2]: Տիգրանակերտի՝ այս տարածքում գտնվելու կարևոր կռվան է նաև Բարսումշեն գյուղի հարավային կողմում՝ Շամքոր գետի աջ ափին եղած Տկռուկի վանքը[3], որի անվանումը ծագել է Տիգրանակերտ-Տկռակերտից:

Հայտնի է, որ Տիգրան Մեծն իր տերության սահմանները Մեծ Հայքից դուրս ընդարձակելուց և հարևան երկրները նվաճելուց հետո՝ մ.թ.ա. 83 թ., երկրի մայրաքաղաքն Արտաշատից տեղափոխում է Անտիոք քաղաք, որը, սակայն, գտնվում էր ծայրամասում՝ Մեծ Հայքի սահմաններից դուրս, ուստի նոր մայրաքաղաք կառուցելու անհրաժեշտություն էր առաջացել: Այդ պատճառով էլ այն հիմնադրվում է երկրի կենտրոնական հատվածում՝ Մեծ Հայքի հարավային եզրին՝ Աղձնիք նահանգում՝ Տիգրիս գետից հյուսիս:

Սկզբնաղբյուրների (հիմնականում՝ հունահռոմեական) տեղեկությունների հիման վրա քաղաքի տեղադրության հարցում ձևավորվել են իրարամերժ չորս մոտեցումներ, ըստ որոնց՝ Տիգրանակերտը համապատասխանում է Ա) Մայաֆարկին-Նփրկերտ (այժմ՝ Սիլվան) քաղաքին, Բ) «Արզանի ավերակներ» կոչվող քաղաքատեղիին, Գ) Թիլ-Էրմեն (Ղըզըլ-Թեփե) ավանին և Դ) Ամիդ-Դիարբեքիր քաղաքին[4]:

Արցախի Տիգրանակերտի արբանյակային լուսանկարն ըստ Google Earth-ի (2021 թ.)

Ուտիքի Տիգրանակերտի արբանյակային լուսանկարն ըստ Google Earth-ի (2012 թ.)

1 Պատմական գիտությունների դոկտ.-պրոֆ. Համլետ Պետրոսյանի ղեկավարությամբ 2005 թ. հայտնաբերել է Արցախի հնագիտական արշավախումբը, իսկ 2006 թ.-ից սկսվել են պեղումներ:

2 Տեղեկությունը մեզ է փոխանցել բանանցեցի քարգործ-վարպետ Մարտիրոս Չալումյանը:

3 **Կարապետյան Ս.**, Հյուսիսային Արցախ, Երևան, 2004, էջ 474: Նաև **նույնի**՝ Արցախի մանրատեղանունները, Երևան, 2022, էջ 31:

4 **Ղազարյան Վ.**, Տիգրանակերտ մայրաքաղաքի տեղորոշման շուրջ, «Հայաստանը և արևելաքրիստոնեական քաղաքակրթությունը», Բ գիտաժողով, Երևան, 2017, էջ 153:

Համակարծիք ենք այն հեղինակների հետ, ի մասնավորի՝ Վ. Ղազարյանի[5], որոնք քաղաքը տեղորոշում են Մեծ Հայքի Աղձնիք նահանգում՝ նույնացնելով «Արզանի ավերակներ» անվամբ հայտնի ընդարձակ քաղաքատեղիի հետ: Ի դեպ, քրդերն այն կոչում են Խարաբ-բաժար (թրգմ.՝ ավերակ քաղաք):

Նման տեսակետի համար հիմք են ծառայում Տիգրանակերտ մայրաքաղաքի առանձնահատկությունները՝ 1. ընդարձակ դաշտում գտնվելը, 2. մեծ մակերեսը, 3. բարձր պարսպապատով շրջապատված լինելը՝ մի մասը եզերված գետով, իսկ մնացած հատվածները՝ պաշտպանված խանդակով, 4. ամֆիթատրոնի առկայությունը, 5. փոխուղղահայաց փողոցային ցանցով կանոնավոր կառուցապատումը:

Հաշվի առնելով Տիգրանակերտի տեղորոշման մասին հրապարակումների բազմաքանակությունը, առավել ևս Վ. Ղազարյանի հանգամանալից քննությունը՝ շրջանցում ենք այն՝ համառոտակի անդրադառնալով այդ խնդրին և գլխավորապես ներկայացնում մեր կողմից[6] կատարված դաշտային ուսումնասիրությունների արդյունքները:

Ուշագրավ է 1860-ական թթ. քաղաքատեղի այցելած Ջ. Թեյլորի նկարագրությունը. «Ավերակները չափազանց ընդարձակ են. պարզորոշ նկատելի են քաղաքը շրջառող հին պարիսպների մնացորդները՝ հիմքում 20, իսկ բարձրությամբ 8 ոտնաչափ, կառուցված շաղախով ամրացված անտաշ, անկանոն քարաբեկորներից: Քիչ թե շատ բարվոք պահպանվել են գետահայաց պաշտպանական կառույցները՝ բաղկացած ավելի հաստ պարիսպներից և մի շարք փոքրագմբեթ շինություններից: Պարսպապատ տարածքը մոտ 2700 քառ. յարդ է: Հյուսիս-արևմուտքում և հարավում պարիսպներն ուղիղ են ու կանոնավոր, բայց դեպի արևմուտք նեղանալով՝ ստանում են անկանոն ձև՝ հետևելով գետի հունին: Առկա է 4 դարպաս, մեկական հատ՝ 3 կանոնավոր պարիսպներում, չորրորդը՝ դեպի գետը: Հարավային կողմում երևում է պարսպին հարող ավերակաթումբ, որը, ըստ երևույթին, եղել է ամրացված մեծ բերդաշտարակ: Ավերակն ամբողջովին շրջապատված է խորը խրամով, որը հատում են երեք կամուրջներ՝ տանելով դեպի երեք դարպասները: Կամուրջների հիմքերը գետնից բարձր են: Այցիս օրոք պարսպապատ տարածքը ցորենի մի բերրի արտ էր, որում դեռ կարելի էր տեսնել փողոցների կանոնավոր շարքերը և որոշ ավելի մեծ շինությունների հիմքերը»[7]:

Ի դեպ, հեղինակը, «մի շարք փոքրագմբեթ շինություններ» ասելով, նկատի ունի պարիսպների աշտարակները, որոնց մեջ ներքուստ թաղակապ սենյակներ են: Հարկ է նշել նաև, որ Թեյլորի նկարագրականում և հատակագծում առկա են որոշ անհամապատասխանություններ: Այսպես՝ նկարագրականում խոսում է 4 դարպասների մասին, այնինչ գծագրում ցույց է տալիս նաև հինգերորդը միջնաբերդի մոտակա աղբյուրի մոտ: Կան նաև մի քանի անճշտություններ. հարավային կողմում երևացող պարսպին կից ավերակաթումբը, որը նա համարում է «ամրացված մեծ բերդաշտարակ», իրականում բլրի վրա գտնվող միջնաբերդն է, իսկ քարտեզում նշված եռանկյունաձև հրվանդանի եզրի «բերդը» համապատասխանում է Տիգրան Մեծի ապարանքին: Վերջինս էլ տեղակայված է ոչ թե բարձունքի վրա, այլ հարթ վայրում: Թատրոնն էլ համարել է որպես պարսպապատի անկյունային հատված:



Տիգրանակերտի հատակագիծն ըստ Ջ. Թեյլորի (արտատպություն՝ Taylor J., նշվ. աշխ., էջ 26)

Թ. Սինկլերը Տիգրանակերտը նույնացնում է «Արզանի ավերակներ» քաղաքատեղիի հետ և տալիս է հետևյալ նկարագրականը. «Գրեթե անկասկած, Արզան-սուի ափի պարսպապատ քաղաքը Հայաստանի մայրաքաղաք Տիգրանակերտն է՝ հիմնադրված մ.թ.ա. I դարում Հայոց պատմության հզորագույն միապետի՝ Տիգրանի կողմից: Ինչևէ, Դ դարից մինչև Զ դարի վերջը քաղաքը հայտնի է եղել որպես Արզոն կամ Արզուն (ասոր.) և Արզն (հայ.)՝ ըստ շրջակա գավառի («Արձն») անվանման: Վաղ քաղաքի արվարձանները և ճառագայթները (զբոսայգիներ, պալատներ և այլն) ձգվել են գետահունի արևելակողմով վեր, և 12 կմ հյուսիս՝ Գոլամասիայում երևացող ավերակները դրանց մի մասն են՝ շինությունների խումբ, որն իր տեղադրությամբ օգտվում էր ծծմբային աղբյուրից սնվող արհեստական լճակից: Գոլամասիայի դիմացի բարձր, հարթ կատարով բլրին գտնվող բերդը («Զերջել կալե»), ըստ երևույթին, կառուցվել է ոչ վաղ, քան Դ դարում:

5 Նշվ. հոդվ., էջ 153-164:

6 ՀՃՈՒ հիմնադրամի 2018 թ. արշավախումբ:

7 Նշվ. հոդվ., էջ 155-156: Բնօրինակը տե՛ս **Taylor J.**, "Travels in Kurdistan with Notices of the Sources of the Eastern and Western Tigris and Ancient Ruins in Their Neighbourhood", The Journal of the Royal Geographical Society of London, vol. 35, 1865, p. 27.

Ընդարձակ պարսպապատ տարածքը շարունակաբար բնակեցված է եղել մինչև դրա վերջնական կործանումը 1349-50 թթ., թեև Ժ դարում քաղաքի բնակչության հիմնական հատվածը, թվում է, տեղակայված է եղել Զերջել կալեի դիմացի Գոլամասիա բաց տեղանքում: Պարսպապատ տարածքը լքվել է քաղաքի վերջնական ավերման արդյունքում, իսկ մնացած բնակիչները տեղափոխվել են Զերջել կալե, և հավանաբար Զոկ ավանի (Յանարսու) բերդը: ԺԲ-ԺԳ դդ. Արզան կենտրոնով իշխանապետությունը պատկանել է թրքական փոքր մի իշխանատոհմի, որին մոնղոլական նվաճումների օրոք (Ժ դ. վերջ - ԺԴ դ.) փոխարինել է այլ իշխանատոհմ: Քաղաքի վերացումից հետո իշխանությանը տիրացել են քուրդ բեկերը՝ դառնալով Հասանքեյֆի իշխանների հպատակներ»[8]:

Հենվելով Թ. Սինկլերի այն տեղեկության վրա, որ Տիգրանակերտից մինչև Գոլամասիա ձգվել են գետափնյա արվարձաններ, հավանական ենք համարում դրանց առկայությունն առավել ևս սաստիկ շոգ եղանակային պայմանների պատճառով: Մեր այցելության ժամանակ՝ 2018 թ., եղանք նաև վերոնշյալ Գոլամասիա (քրդերենից թարգմ.՝ Ձկնալիճ) գյուղի՝ քրդերի կողմից սրբացված լճակի մոտ, որի ձուկն անգամ չեն ուտում: Ափին տակավին պահպանվում էին աղյուսի հին պատի մնացորդները, իսկ արևմտյան եզրին՝ կամրջի խելը: Միևնույն ժամանակ մեր արշավախումբն ուսումնասիրեց նաև Գոլամասիայից 1,3 կմ հյուսիս-արևմուտք՝ բարձրադիր բլրի գագաթին գտնվող Սինկլերի հիշատակած *Զերջել կալե* (Կալե) միջնադարյան բերդի ավերակները: Տարածքում պահպանվել էր որպես շինաքար գործածված անտիկ շրջանի սյան խարիսխ: Կարծում ենք, որ այս բերդը եղել է Աղձնիք նահանգի Արզան-Էրզան կենտրոնը (քրդերը կոչում էին «Էրզան անտիկ քաղաք»), քանզի համընկնում է ամուր վայրում բերդեր և բնակավայրեր կառուցելու՝ մինչ Տիգրան Մեծը եղած սկզբունքներին:

Հիմնադրում. հռոմեացի պատմիչ Ապպիանոս Ալեքսանդրացին ուշագրավ տեղեկություններ է փոխանցում քաղաքի հիմնադրման մասին. «...Կապադովկիան պաշարելով՝ մոտ 30 բյուր (300.000) մարդ տեղահանեց ու տեղափոխեց Հայաստան և նրանց, այլոց հետ միասին, համաբնակեցրեց մի վայրում, որտեղ նա առաջին անգամ հագավ Հայաստանի թագը և (այդ) վայրը իր անունով կոչեց Տիգրանակերտ կամ Տիգրանապոլիս»[9]:

Գոլամասիա լիճը և լճափնյա աղյուսե շարվածքը (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2018 թ.)

Անշուշտ, այս փաստը, որ մինչ քաղաքի հիմնադրումը Տիգրան Մեծն այդտեղ է կատարում իր թագադրության հանդեսը (մ.թ.ա. 95 թ.), ցույց է տալիս՝ նախապես ծրագրել էր Հայաստանի սահմաններն ընդարձակել Մեծ Հայքից դուրս և հետագա սահմանների կենտրոնական այս վայրում կառուցել Տիգրանակերտ մայրաքաղաքը:

Հիշատակելի է նաև Ստրաբոնի տեղեկությունը. «...կառուցեց քաղաք, որն անվանեց Տիգրանակերտ, և իր ավերած 12 հելլենական քաղաքների մարդկանց այնտեղ հավաքելով (բնակեցրեց)»[10]:

Պլուտարքոսն էլ հավելում է. «Տիգրանակերտում ապրում էին մեծ թվով հույներ, որոնք բռնագաղթվել էին Կիլիկիայից, և բարբարոսներ՝ ադիաբենացիներ, գորդիեններ, կապադովկիացիներ...»[11]:

Քաղաքի շենացման նպատակով Տիգրան Մեծը կիրառում է հին աշխարհում տարածված երևույթներից մեկը՝ իր ենթակայության ներքո գտնվող տարածքներից մարդկանց հոծ խմբերի բռնի վերաբնակեցում: Այնուամենայնիվ, Տիգրանակերտում մեծամասնություն են կազմել Մեծ Հայքի քաղաքային բնակչությունն ու վերնախավը, մանավանդ՝ Արտաշատ մայրաքաղաքից: Օրինակ, ըստ Ապպիանոսի հաղորդման՝ «...(երկրի) լավագույններին կանչում էր այնտեղ՝ սպառնալով, որ այն, ինչ չեն բերի իրենց հետ, կբռնագրավվի»[12]:

Ավերում. որքան է գոյատևել Տիգրանակերտը՝ դժվար է ստույգ ասել առանց հնագիտական լուրջ ուսումնասիրությունների: Ըստ հունահռոմեացի պատմիչների՝ քաղաքի հիմնադրումից մոտ 10 տարի անց հռոմեացի զորավար Լուկուլլոսը մ.թ.ա. 69 թ.,

8 **Ղազարյան Վ.**, նշվ. հոդվ., էջ 157-158: Ընդհանրապես տե՛ս **Sinclair T.**, "The Site of Tigranocerta". I, Revue des études arméniennes, t. 25 (Paris, 1994-1995): **Նույնի**՝ "The Site of Tigranocerta". II, RÉArm, t. 26 (Paris, 1996-1997). Eastern Turkey: An Architectural & Archaeological Survey, vol. III, London, 1989.

9 Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1 (այսուհետ՝ ՀԺՊՔ 1), Երևան, 2007, էջ 347:

10 Նշվ. աշխ., էջ 312-313:

11 Նշվ. աշխ., էջ 330:

12 Նշվ. աշխ., էջ 348:

«Զերջել կալե» բերդի ընդհանուր տեսարան (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2018 թ.)

Եփրատ գետն անցնելով, հարձակվում է Հայաստանի վրա և հասնելով մայրաքաղաք Տիգրանակերտ՝ պաշարում այն: Սակայն քաղաքը հզոր պարսպապատի, գետով և խանդակով ամրացված լինելու շնորհիվ մի քանի ամիս հերոսաբար պաշտպանվում է զորավար Մանկայոսի գլխավորությամբ: Տիգրանակերտի մոտ տեղի ունեցած ճակատամարտում հայոց զորքի պարտությունից հետո Տիգրան Մեծը ստիպված հեռանում է դեպի Տավրոսի լեռներ: Իսկ Լուկուլլոսի զորքերը, շարունակելով պաշարումը, քաղաքի հույն բնակիչների դավադրությամբ գրավում են այն: Այդ մասին Ապպիանոսը նշում է. «Մանկայոսը Տիգրանակերտից տեսնելով այդ պարտությունը, կասկածելով հելլենների վրա, որոնք նրա մոտ վարձկաններ էին, բոլորին զինաթափեց: ... երբ, այսպիսով, նրանք հնարավորին չափ իրենց բավարարեցին (զենքով), գրավեցին միջաշտարակային մի քանի մասեր և դրսից հռոմեացիներին կանչելով, բարձրացողներին ներս թողեցին»[13]:

Ստրաբոնի հաղորդած տեղեկությամբ «Միհրդատին հաղթած Լուկուլլոսն արշավելով հասավ և վերաբնակիչներին արձակեց յուրաքանչյուրին իր երկիրը, իսկ քաղաքը, որ դեռ կիսավարտ էր, հարձակմամբ կործանեց և փոքր գյուղ թողեց, իսկ իրեն (Տիգրանին) դուրս քշեց Ասորիքից և Փյունիկեից»[14]:

Պլուտարքոսն այսպես է նկարագրում քաղաքի գրավումը. «Իսկ Տիգրանակերտում հելլեններն ապստամբել էին բարբարոսների դեմ՝ քաղաքը Լուկուլլոսին հանձնելու նպատակով. ուստի և սա հարձակվեց ու գրավեց այն: Վերցնելով Տիգրանակերտում գտնված գանձերը՝ նա քաղաքը թողեց զինվորների թալանին, որոնք, բացի այլ բարիքներից, այնտեղ գտան նաև 8 հազար տաղանդ դրամ: Այս ամենից բացի՝ նա ռազմավարից նրանց տվեց յուրաքանչյուրին 800 դրաքսե: Տեղեկանալով, որ քաղաքում գտնվում էին մեծ թվով դերասաններ, որոնց Տիգրանն ամեն կողմից հրավիրել էր իր կառուցած թատրոնի հանդիսավոր բացմանը, Լուկուլլոսը օգտագործեց նրանց՝ ի պատիվ իր հաղթանակի կազմակերպված խաղերում ու հանդիսություններում»[15]:

Այսպիսով, փառահեղ մայրաքաղաքը Լուկուլլոսի կողմից գրավվելով՝ ենթարկվում է հռոմեական զորքերի ավերմանը և թալանին: Այնուհետև՝ ազատագրվելուց հետո, վերաշինվում է՝ վերականգնելով նախկին փառքը: Սակայն կարճ ժամանակ անց՝ Պոմպեոսի արշավանքից և Արտաշատում կնքված պայմանագրից հետո, Տիգրան Մեծը հրաժարվում է իր նվաճած երկրներից՝ Կիլիկիայից և Ասորիքից, և Տիգրանակերտը հայտնվում է Մեծ Հայքի սահմանամերձ հատվածում:

Պատմիչ Փավստոս Բյուզանդը, նկարագրելով Դ դարում Շապուհի ասպատակությունները Մեծ Հայքում, նշում է. «Նրանք առան Տիգրանակերտ մեծ քաղաքը, Աղձնիք գավառում՝ բդեշխի իշխանության մեջ, և այնտեղից քառասուն հազար ընտանիք անմիջապես գերի քշելով՝ իրենք արշավեցին Մեծ Ծոփք գավառը»: Այսինքն՝ Դ դարում արդեն մայրաքաղաքի նշանակությունը կորցրած Տիգրանակերտը դեռևս պահպանում էր մեծ քաղաքի դերը և ուներ ավելի քան 100000 բնակիչ[16]:

Հետագա դարերում, ենթարկվելով տարբեր նվաճումների և ավերումների, հետզհետե խամրելով, անհետանում է պատմության թատերաբեմից:

Ինչպես արդեն նշեցինք, հնավայրը մեր օրերն է հասել խիստ ավերակ վիճակում: Դրա գլխավոր պատճառներից են տարածքի օգտագործումը գյուղատնտեսական նպատակներով և անդադար գանձախուզությունը, որի առաջին փաստագրողն ու ականատեսը Ջ. Թեյլորն է դեռևս 1860-ական թթ.

13 Նշվ. աշխ., էջ 349-350:
14 Նշվ. աշխ., էջ 312-313:
15 Նշվ. աշխ., էջ 335:
16 **Փավստոս Բյուզանդ**, Հայոց պատմություն, Երևան, 1987, էջ 221:

Տիգրանակերտից հայտնաբերված հելլենիստական սյան խոյակ, խարիսխներ, մարտակառքի անիվներ և գամեր (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2018 թ.)

«Այցիս օրոք պարսպապատ տարածքը ցորենի մի բերրի արտ էր...: Այստեղից այնպիսի քանակությամբ ոսկյա և արծաթյա դրամներ են գտնվում, որ տերը ոչինչ չի վճարում մշակ ֆելլահներին գործի համար, դեռ ավելին՝ վերջիններս են նրան հանձնում հնարավոր գտածոյի կեսը»[17]:

Ցարդ շարունակվող գանձախուզության մասին մեզ տեղեկություններ փոխանցեց բոզիյուկցի քուրդ Ալի Յըլմազը: Ըստ նրա՝ քաղաքատեղիի տարածքից հայտնաբերվում են Տիգրան Մեծի, փռյուգիական և սելջուկյան դրամներ, օձագլուխ, ինչպես նաև ապակյա ապարանջաններ, օղեր, մատանիներ և այլն: Բացի այդ՝ թատրոնի մոտակա իր հողամասում ցույց տվեց հնավայրի տարածքից փոխադրված սյուների խարիսխներ, հելլենիստական խոյակ, տարբեր բեկորներ, մարտակառքերի մետաղական անիվներ ու գամեր, որոնք քաղաքի երբեմնի փառքի լուռ վկաներն են: Տիգրանակերտից տեղահանված մի սյան խարիսխ էլ հայտնաբերեցինք հարևան Ակդամ գյուղում:

Հնավայրի ավերման հաջորդ պատճառը ճանապարհաշինությունն է. միջնաբերդի բլրի արևմտյան եզրի ավտոճանապարհն անցնում է քաղաքատեղիի միջով, իսկ վերջինիս հարավային եզրով երկաթգիծն է: Բացի այդ՝ գրեթե ողջ տարածքն օգտագործվում է որպես եգիպտացորենի դաշտ:

Մեր ուսումնասիրությունները. այժմ անդրադառնանք մեր դաշտային ուսումնասիրությունների ժամանակ ի հայտ եկած մանրամասներին, որոնք նոր լույս են սփռում քաղաքի շինությունների վրա:

Տիգրանակերտ մայրաքաղաքի ավերակները գտնվում են Մեծ Հայքի Աղձնիք նահանգի հարթավայրային հատվածում՝ Տիգրիսի ձախ վտակ Նիկեփորիոս-Արզան (այժմ՝ Յանարսու) գետի ձախ ափին, այժմյան Բաթման քաղաքից՝ 25 կմ հյուսիս-արևելք, իսկ Բոզիյուկ (հնում՝ Թելիբա) գյուղից՝ 2 կմ հարավ-արևմուտք (N 37.972950, E 41.390089, ծ. մ.՝ 560 մ):

Ըստ Պլուտարքոսի բնորոշման՝ «Տիգրանակերտ հսկա քաղաքն» ընդգրկել է մեծ մակերես, որի պարսպապատ հատվածը զբաղեցնում է 150 հա տարածություն (արտաքին չափերն են՝ 1,58 x 1,43 կմ): Այն ավելի մեծ է Մեծ Հայքի բոլոր մայրաքաղաքներից (օրինակ՝ Վանի բերդը 17 հա է, Արմավիրի բլուրները՝ մոտ 60 հա, Արտաշատի բլուրների պարսպապատ տարածքը՝ մոտ 65 հա, Դվինը՝ 11 հա, Բագարանը՝ 22 հա, Կարսը՝ 16 հա, Անիի պարսպապատ մակերեսը՝ 80 հա), ուստի այն համարել որպես Աղձնիք նահանգի կենտրոնական քաղաք կամ բերդ՝ ուղղակի անտրամաբանական է:

Ի տարբերություն արքայաշեն Արցախի և Ուտիքի Տիգրանակերտների, որոնք կառուցված են թեք լանջերի վրա՝ ամենաբարձրադիր մասում ունենալով միջնաբերդեր, այս մայրաքաղաքը կառուցելիս կիրառվել է քաղաքաշինության այլ սկզբունք: Այն է՝ կառուցված է ոչ թե բարձունքին, այլ ընդարձակ դաշտի ամենացածրադիր հարթ վայրում՝ Նիկեփորիոս-Արզան գետի ձախ ափին:

Այժմ անդրադառնանք քաղաքի և նրա պահպանված շինությունների ճարտարապետական նկարագրություններին:

Քաղաք. Տիգրանակերտը հատակագծված է հելլենիստական քաղաքաշինական սկզբունքներով, այսինքն՝ փոխուղղահայաց փողոցների ցանցի կանոնավոր կառուցապատմամբ (հիպոդամյան համակարգ) և հունական ամֆիթատրոնով: Արևմուտքից և հյուսիսից եզերված է եղել 20 մ միջին լայնությամբ գետով, իսկ արևելյան և հարավային կողմերից պաշտպանական նպատակով անցկացվել է գետից սնուցվող լայն խանդակ, որի մասին հին հռոմեացի պատմիչ Պուբլիոս Կոռնելիոս Տակիտոսը հաղորդում է. «Նա (Տիգրանը) զբաղեցրել էր Տիգրանակերտը՝ բազում պաշտպաններով և հսկայական ամրություններով հզոր քաղաքը:

17 **Ղազարյան Վ.**, նշվ. հոդվ., էջ 155-156: Բնօրինակը տե՛ս **Taylor J.**, նշվ. հոդվ., էջ 27:

Տիգրանակերտի ընդհանուր տեսարանն արևելքից (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2018 թ.)

Ահավասիկ, քաղաքի պարիսպների մի մասի մոտով հոսում է ոչ սակավ լայնության Նիկեփորիուս գետը, և (քաղաքը) ունի հսկայական խանդակ այնտեղ, ուր գետի հոսանքի պաշտպանությանը չեն վստահել»[18]:

Պետք է նշել, որ ժամանակի ընթացքում Նիկեփորիոս-Արզան գետը, բացառությամբ արքունի ապարանքի հյուսիսային հատվածի, հունը փոխել է: 2018 թ. այն շեղված էր առավելագույնը 1 կմ դեպի հյուսիս-արևմուտք: Ինչ վերաբերում է պատմիչի հիշատակած խանդակին, ապա դրա հետքերը մինչ այսօր տեսանելի են:

Պարսպապատ քաղաքի մակերեսն ունի հյուսիս-արևմուտքում գետի հունի եզրագծին համապատասխան եռանկյունաձև հրվանդան, իսկ հարավ-արևելքում՝ խանդակով պաշտպանված ուղղանկյուն եզրագիծ: Քաղաքի կառուցապատման երկայնական առանցքն արևելք-արևմուտք ուղղությունից շեղված է մոտ 45^0 անկյունով դեպի հարավ-արևելք–հյուսիս-արևմուտք: Այս առանցքի վրա է գտնվում քաղաքի գլխավոր փողոցը, որը տանում է դեպի արքունի ապարանք և ամֆիթատրոն: Երկայնական գլխավոր փողոցին ուղղահայաց անցնում է քաղաքի լայնական առանցքով գլխավոր փողոցը: Դրանց զուգահեռ՝ ավելի նեղ փողոցների կանոնավոր ցանցով քաղաքը բաժանվել է ուղղանկյուն թաղամասերի: Կառուցապատված է եղել շքեղ տաճարներով, ապարանքներով և բնակելի ու հասարակական շինություններով: Գլխավոր փողոցների հատման վայրում գլխավոր հրապարակն էր (ագորան)՝ հելլենիստական քաղաքներին բնորոշ հասարակական, առևտրական, տնտեսական կենտրոնը: Ըստ ամենայնի, այն նույնպես քաղաքի հատակագծային կանոնավոր ցանցին համապատասխան պետք է լիներ ուղղանկյուն:

Քաղաքի շքեղության մասին վկայում է Պլուտարքոսը. «Տիգրանակերտում կային առատ գանձեր և աստվածներին նվիրված թանկարժեք ընծայաբերումներ, քանզի ամեն մի հասարակ մարդ և իշխանավոր արքայի հանդեպ ունեցած հարգանքի պատճառով իրար հետ մրցում էին քաղաքի ընդարձակման և բարեկարգման համար»[19]:

Իսկ Ապպիանոսը Լուկուլլոսի կողմից քաղաքի գրավումը նկարագրելիս նշում է. «Այսպիսով գրավվեց Տիգրանակերտը և կողոպտվեց մեծ հարստություն, ինչպիսին կլիներ նորակառույց և փառասիրությամբ բնակեցված քաղաքում»[20]:

Պարիսպ. քաղաքի կարևոր շինություններից էր նաև այն շրջապատող բարձր պարսպապատը, որի մասին Ապպիանոսը նշում է. «Նա քաղաքը շրջապատեց 50 կանգուն բարձրության պարսպով, որի հաստության մեջ կային ձիերի բազմաթիվ ախոռներ»[21]:

2018 թ. մեր դաշտային ուսումնասիրություններով պարզվեց, որ պարսպապատը (ունի մոտ 3,6 մ լայնություն, իսկ ուղղանկյուն աշտարակները՝ 9,1 x 8,12 մ հատակագծային արտաքին չափեր) կառուցված է եղել կրաշաղախի միջուկով, կիսամշակ սպիտակ կրաքարերի շարվածքով: Աշտարակների ներսում գտնվում էին 5 x 2,52 մ ներքին չափերով ուղղանկյուն թաղակապ, բազմահարկ սենյակներ: Պետք է ասել, որ Ապպիանոսի նշած ձիերի ախոռները ոչ թե պարիսպների «հաստության», այլ ուղղանկյուն աշտարակների մեջ էին տեղավորված, որոնց մյուս հարկերում զորանոցներ էին և պահակակետեր: Քաղաքի հյուսիսային, հարավային և արևելյան կողմերում՝ գլխավոր փողոցների սկզբնամասերում՝ պարսպապատի մեջ, բացված է եղել երեք գլխավոր դարպաս, և դրանց առջևում՝ խանդակի վրա՝ երեք կամուրջ:

Ցավոք, այսօր քաղաքատեղիից շատ քիչ մնացորդներ են պահպանվել: Ողջ տարածքը մինչ այժմ

18 **Ղազարյան Վ.**, նշվ. հոդվ., էջ 162:

19 ՀԺՊՔ 1, էջ 330:

20 Նշվ. աշխ., էջ 349-350:

21 ՀԺՊՔ 1, էջ 348:

Տիգրանակերտի արբանյակային լուսանկարն ըստ Google Earth-ի (2009 թ.)

Տիգրանակերտի հատակագիծը (վերակազմությունը՝ հոդվածագրի, 2022 թ.)

Հյուսիսարևելյան դարպասի արևելյան աշտարակը և միջնաբերդի բլուրը հյուսիսից (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2018 թ.)

օգտագործվում է գյուղատնտեսական նպատակներով: Պարսպապատերից միայն պահպանվել են հյուսիսարևելյան դարպասին կից զույգ աշտարակների ավերակները և հարավարևելյան դարպասին կից զույգ աշտարակների ավերակաթումբը, իսկ մնացած հատվածներում հողի մակերեսին միայն հետքերն են նշմարվում:

Միջնաբերդ. Ապպիանոսը միջնաբերդն այսպես է նկարագրում. «Մերձակայքում նա բարձրացրեց նաև հզոր մի բերդ»[22]:

Քաղաքի միջնաբերդը գտնվել է արևմտյան եզրին՝ տարածքի միակ բարձունքին՝ գետի և խանդակի միացման անկյունում զետեղված 2,4 հա մակերեսով բլրի վրա: Միջնաբերդի տարածքը քրդերը կոչում են Դերոք, իսկ նրա հյուսիսային ստորոտից հոսող և քաղաքը սնուցող հորդառատ սառնորակ աղբյուրը՝ Դերոք փնար: 2018 թ. այն վերակառուցված էր: Խիտ կառուցապատմամբ միջնաբերդում, ամենայն հավանականությամբ, բնակվել է քաղաքի վերնախավը: Կառույցներն այժմ չեն պահպանվել, միայն նրանց պատերի ուրվագծերն են նշմարվում: Միջնաբերդում բացված էր գանձախուզության ենթարկված մի շինության պատի մնացորդ, իսկ բերդի տարածքում կային խեցեղենի, ինչպես նաև կղմինդրի բազմաթիվ բեկորներ: Միջնաբերդի ստորոտով անցնող ասֆալտապատ ճանապարհը վնասել է արևմտյան և հյուսիսարևմտյան հատվածները:

Տիգրան Մեծի ապարանք. զարմանալիորեն Տիգրան Մեծն իր ապարանքը կառուցել է ոչ թե միջնաբերդում, այլ քաղաքի եզրին: Նրա տեղորոշման հարցում կարևոր են Ապպիանոսի տեղեկությունները, որոնցից մեկում նշում է. «Քաղաքի արվարձանում նա կառուցեց պալատ՝ ընդարձակ զբոսայգիներով, որսատեղերով և լճերով»[23], իսկ երկրորդում՝ «...Սեքստիլիոսը Մանկայոսին Տիգրանակերտում փակելուց հետո կողոպտեց արքունի պալատը, որը պարսպապատ չէր, քաղաքի և բերդի շուրջ խանդակ փորեց, (պաշարողական) մեքենաներ պատրաստեց և պարսպի տակ ականներ փորեց»[24]:

Հենվելով այս հաղորդումների և մեր դաշտային ուսումնասիրությունների վրա՝ եզրահանգում ենք,

22 ՀԺՊՔ 1, էջ 348:

23 Նույն տեղում:

24 Նույն տեղում:

Միջնաբերդի աղբյուրը և տարածքում գանձախուզության ենթարկված շինության մնացորդը (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2018 թ.)

Միջնաբերդի տարածքում առկա կղմինդրի բեկոր (լուս.՝ Ռ. Քորթոշյանի, 2018 թ.) և Տիգրան Մեծի ապարանքի պարսպապատի հյուսիսային մնացորդները (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2018 թ.)

որ արքունի ապարանքը (զբաղեցրել է 8,4 հա) գտնվել է գետի շրջադարձման հարթ հատվածում՝ եռանկյունաձև հրվանդանի անկյունում: Հարկ ենք համարում նշել, որ, ի հակադրություն պատմիչի տեղեկության, ապարանքը շրջապատված է եղել պարսպապատով, քանի որ գետահայաց պռնկին տակավին պահպանվում են հյուսիսային պարսպի մնացորդները: Մնացած հատվածներում նշմարվում են միայն հետքերը՝ սպիտակ կրափոշու տեսքով, որոնք վերջին շրջանում ավերումների հետևանք են: Ապարանքի արտաքին պարսպապատն ունեցել է գետի հունին համապատասխան անկանոն եզրագիծ, իսկ քաղաքից բաժանված է եղել վերջինիս փողոցային ցանցի համեմատ անկյունային դիրք կազմող առանձին պարսպով: Ըստ Թեյլորի հատակագծի՝ ապարանքն ունեցել է նաև արտաքին դարպաս դեպի գետի կողմը, որի վրա հավանաբար եղել է կամուրջ:

Ներկայումս արքունի ապարանքից պահպանվել է գանձախուզությունների հետևանքով տակնուվրա արված աննշան ավերակաթումբ:

Ամֆիթատրոն. կառուցված է արքունի ապարանքից 600 մ հյուսիս-արևելք՝ քաղաքի հյուսիս-արևմտյան եզրի գետափնյա թեք լանջին: Նրա մասին վկայող միակ աղբյուրը Պլուտարքոսն է: Ըստ նրա հաղորդման՝ Տիգրան Մեծը թատրոնի հանդիսավոր բացման ժամանակ հրավիրել էր հույն դերասանների[25]:

Կիսաշրջան հատակագծով և 91 մ տրամագծով ամֆիթատրոնի կենտրոնական առանցքը հյուսիս-հարավ ուղղությունից ունի 16^0 շեղում դեպի հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք: Բլրի թեք լանջը ծառայեցվել է որպես բնական ամֆիթատրոն, իսկ նրա վրա ձևավորած մոտ 33 շարք կիսաշրջանաձև աստիճանները՝ նստարաններ հանդիսատեսի համար: Կենտրոնում 10 մ շառավղով կիսաշրջանաձև օրքեստրան էր (նվագախմբի և երգչախմբի համար նախատեսված հրապարակը), որին հաջորդում էին պրոսկենեն (սկենեի առջև գտնվող հարթակ, որի վրա կատարվում էին բեմականացումները) և սկենեն (դերասանների հանդերձարանը): Քաղաքի կողմից թատրոնը հարավարևելյան և հարավարևմտյան հատվածներում ունի 2,9 մ լայնությամբ երկու թաղակապ մուտքեր, որոնք բացվել են դեպի

25 ՀԺՊՔ 1, էջ 335:

Տիգրան Մեծի ապարանքի ավերակաթումբը (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2018 թ.) և թատրոնի արբանյակային լուսանկարն ըստ Google Earth-ի (2009 թ.)

Թատրոնի ընդհանուր տեսքը հյուսիսից (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2018 թ.)

նստարանների շարքերի միջև գտնվող կիսաշրջանաձև անցուղին: Ըստ ամենայնի, թատրոնի և պրոսկենեի միջև՝ հյուսիսարևելյան և հյուսիսարևմտյան անկյուններում, բացված են եղել մուտքեր:

Պետք է նշել, որ Տիգրանակերտի ամֆիթատրոնը չափերով մոտ էր Փոքր Ասիայի Ասպենդոս քաղաքի թատրոնին (տրամագիծ՝ 96 մ, նստատեղ՝ 7000), Հիերապոլիսի թատրոնին (տրամագիծ՝ 91 մ) և ավելի մեծ էր Աթենքի մեծ թատրոնից (տրամագիծ՝ մոտ 80 մ), իսկ Մերձավոր Արևելքում ամենամեծն էր (օրինակ՝ Հորդանանի Ջարեշ քաղաքի թատրոնը՝ 77 մ, Սիրիայում Բոսրա քաղաքինը՝ 88 մ տրամագիծ, Պալմիրայինը՝ 48 մ): Այսպիսով, կարող ենք ասել, որ անտիկ ամֆիթատրոնների շարքում Տիգրանակերտինը խոշորներից էր՝ շուրջ 7000 նստատեղով:

2018 թ. թատրոնից պահպանվել էին կիսաշրջանաձև նստատեղերի թեք հողածածկ լանջը, արտաքին եզրագծի պատի կրաշաղախ միջուկը, որոնց մեջ բացվող երկու թաղակապ մուտքերի ավերակները մասամբ կանգուն էին: Ամենալավ պահպանված հատվածները հյուսիսարևմտյան անկյան մեծածավալ ուղղանկյուն քարերի կանոնավոր ութ շարքերն են և հյուսիսարևելյան անկյան զանգվածեղ կրաշաղախ միջուկը: Օրքեստրայի և սկենեի հետքերն անգամ չեն պահպանվել, միայն պեղումների շնորհիվ կարող են ի հայտ գալ դրանց հիմքերը: Թատրոնի տարածքում հայտնաբերեցինք արձանագիր խիստ մաշված, անընթեռնելի մի քար:

Ի դեպ, մինչ այսօր հայտնի կրաշաղախի հնագույն կիրառումներն անտիկ Հայաստանում հայտ-



Ամֆիթատրոնի հատակագիծը (վերակազմությունը՝ հոդվածագրի, 2022 թ.)

Թատրոնի հյուսիսարևմտյան անկյունը (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2018 թ.)

նաբերվել են Արտաշատում և Արցախի Տիգրանակերտում: Վերջինում կրաշաղախը գործածվել է արտաքին քարաբլոկների և ժայռե հիմնատակերի միջև, պարսպի միջուկի անմշակ քարերի արանքներում իբրև կապակցող նյութ, նաև առաջին շարքի քարերի և ժայռերի միջև իբրև ջրամեկուսիչ շերտ[26]:

Իսկ մայրաքաղաք Տիգրանակերտում կրաշաղախի կիրառումն ավելի է կատարելագործվել և դարձել շարվածքի միջուկի հիմնական զանգված. պարիսպների արտաքին շարքերի կոպտատաշ քարերի միջև անմշակ կրաքարերի լիցքով զբաղեցրել է պարիսպների լայնքի մեծ մասը: Իսկ ամֆիթատրոնի կանոնավոր քարաբլոկների միջև անմշակ քարի լիցքով և կրաշաղախով ստեղծվել է զանգվածեղ միջուկ (եթե Արցախի Տիգրանակերտում արտաքին քարաբլոկները զբաղեցրել են պարսպի լայնության 60-70%-ը, իսկ միջուկը՝ 30-40%-ը, ապա մայրաքաղաքի պարիսպներում և ամֆիթատրոնում կրաշաղախ միջուկն է շարվածքի մեծ մասը): Հավելենք նաև, որ ի տարբերություն Արտաշատի և Արցախի Տիգրանակերտի՝ մայրաքաղաքի ամֆիթատրոնի շարվածքում ուղղանկյուն քարաբլոկների միջև ծիծեռնակապոչ կապեր մեզ չեն հանդիպել:

Ամփոփելով այս ամենը՝ կարող ենք արձանագրել, որ հայ ճարտարապետության անտիկ ժամանակաշրջանի գլուխգործոց Տիգրանակերտ մայրաքաղաքը, որը հելլենիստական քաղաքաշինության լավագույն օրինակ էր և եզակի տեղ ունի համաշ-

Թատրոնի հարավարևմտյան թաղակապ անցուղի (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2018 թ.)

խարհային ճարտարապետության մեջ, այսօր, ցավոք, շարունակաբար անխնամ մնալով և ավերվելով ու թալանվելով առավել ևս վերջին մի քանի հարյուր տարվա ընթացքում տեղաբնակ օտարազգիների կողմից, ինչպես նաև թուրքական իշխանությունների՝ հուշարձանին միտումնավոր հատուկ կարգավիճակ չտալու պատճառով գտնվում է իսպառ անհետացման եզրին:

Տիգրանակերտը կարոտ է պեղումների և գիտական առավել մանրակրկիտ ուսումնասիրությունների, որոնք նոր լույս կսփռեն երբեմնի հռչակավոր մայրաքաղաքի անցյալի վրա:

26 **Petrosyan H.**, "Tigranakert of Artsakh", Aramazd Armenian Journal of Near Eastern Studies, vol. 10, issues 1-2 (2016) 2020, p. 333.

ՓՈԽԱՆՈՐԴԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ Ի ՎԻՃԱԿԻՆ ԳԱՆՁԱԿՈՒ

Գրիգորիս եպիսկոպոս Աղվանեանց

Սկիզբը՝ № 15-ում և № 16-ում

ԻԸ

Նիւզգեար[113]

Ամսոյս 19-ին այցելեցինք *Նիւզգեար* գիւղը, որ կբաղկանայ 76 տուն զուտ հայ բնակիչներէ՝ 301 արական, 261 իգական: Սոյն գիւղացիներ 70 տարի առաջ Երևանէն գաղթեր են ի Գանձակ և այնտեղէն մի հատուած՝ 17 տուն, եկած է այս գիւղ:

Գիւղս ունի հարթ-հաւասար սարահարթի վրայ դաշտային ընդարձակ և պատուական վարելահողեր՝ աշխատասէր հայ գիւղացւոյ, միայն հայ գիւղացւոյ գործունէութեան վայելուչ ասպարէզ: Մեր այցելած բոլոր գիւղերու մէջ սա միայն է, որ իւր բոլոր հունձեր սայլերով կփոխադրէ գիւղամէջ: Գիւղս ունի *Ս. Գէորգ* անուամբ մի հնաշէն եկեղեցի[114], որ սոքա աւերակ գիւղատեղիս գաղթելու միջոցին վերանորոգեր են: Թէև այժմ չունի վարժարան, բայց երբեմն ունեցեր է, որ ասուպի պէս երևացեր ու անհետացեր է:

ՆՈՒԿԶԱՐ. Սբ. Գևորգ եկեղեցին (լուս.՝ Ա. Օհանյանի, 1980-ական թթ.)

Գիւղիս արևելեան հարաւակողմ՝ ձորի մէջ բարձրացած մի բլրակի կողքին, կգտնուի մի փոքրիկ աւերակ վանք՝ *Ամենափրկիչ* անուամբ[115], որ հայազգի Ծերալովի կալուածքի մէջ ընկած է: Վանքի շուրջը կգտնուին միաբանութեան աւերակ խցատեղին, ձիթահանքի աւերակ եւ գերեզմաններ: Կպատմեն (թէ որչափ արդար է, մենք չգիտեմք) յիշեալ վանքի հիւսիսային դռան կողքին՝ մի մեծ քարի վրայ, կայ եղեր ընդարձակ արձանագրութիւն, որուն մէջ կբովանդակուէր վանքապատկան անտառի և վարելահողերու յիշատակարան: Յիշեալ հայազգի Ծերալովն կասկածելով, որ այս յիշատակարան մի օր իւր ընդարձակ սահմանի մի մասը իր ձեռքէն կորզել պիտի տայ, ուստի այդ յիշատակարան անելանելի դժոխքն է իջուցեր:

Գիւղիս սահմանի արևելակողմ՝ երկու վերստ հեռաւորութեամբ, մի աւերակ գիւղատեղի կայ, որուն գիւղացիք *Կուճուր* (փոքրիկ) *գիւղ* կանուանեն, իսկ շրջակայ թուրքեր՝ *Քիսոլար*: Յիշեալ աւերակի մէջ կայ մի խոնարհուած եկեղեցի՝ իւր կանգուն սեղանաքարով, և եկեղեցւոյն արևելակողմ՝ գերեզմանոց:

ՆՈՒԿԶԱՐ. Ամենափրկիչ վանքը (լուս.՝ Ա. Օհանյանի, 1980-ական թթ.)

Գիւղիս բնակչաց մէջ տակաւին ուսումնասիրութեան հոգի չէ մտել, ուստի և շատ դժուարութեամբ յանձնառու եղան վարժարան շինելու: Բայց ի վերջոյ սոյն շինութեան համար հոգատար յանձնաժողով ընտրեցին 4 անձինք՝ Սիմէօն Յարութիւնեան, Նահապետ Սարդարեան, Աւետիս Բադալեան և Սարգիս Մարտիրոսեան, որոնց յանձնեցին հասարակական վճռով առաջիկայ սեպտեմբերէն սկսեալ մինչև միւս սեպտեմբերի սկիզբն լրացնել վարժարանի շինութիւն՝ խոստանալով վճարել նորա վերաբերեալ բոլոր ծախքեր և այնուհետև բաժանորդագրութեամբ կալե մասն արմտիք հաւաքելով՝ վարժարանի գոյութիւնը ապահովացնել:

113 Գտնվում է Շամխորի համանուն շրջկենտրոնից 17 կմ հարավ-արևելք (ծ. մ. բարձր է 1340-1410 մ):

114 Ծխական եկեղեցին գտնվում էր գյուղամիջում և մինչև 1989 թ. բռնագաղթը կանգուն էր (մանրամասն տե՛ս **Կարապետյան Ս.**, Հյուսիսային Արցախ, էջ 500):

115 Սբ. Ամենափրկիչ վանքը գտնվում էր Նուկզարից մոտ 5 կմ հարավ-արևմուտք՝ միջնադարյան գյուղատեղիի հարավ-արևմտյան եզրին: 1984 թ. դեռևս պահպանվում էին եկեղեցին և գավիթը (մանրամասն տե՛ս նշվ. աշխ., էջ 500-504):



Գրիգորիս Աղվանյանցի երթուղին (քրտզ.՝ Լ. Հովհաննիսյան-Քորթոշյանի, 2022 թ.)

Գիւղացւոցս մեծագոյն մասն զարմանալի ճարպիկութեամբ որսորդութիւն անել գիտէ, որոյ մէջ կարի արագաձեռն, յաջողակ և վստահ են մարդիկ, այնպէս որ առաւօտեան պահուն պատուաւոր հիւրեր ճաշի հրաւիրելէն զկնի, անտառ կդիմեն՝ կա՛մ եղնիկ, կա՛մ նորա ձագ և կա՛մ մի այծեամ ճաշին խորոված ացու հասցնելու:

Զարմանալիները կպատմեն իրենց անվրէպ հրացանաձգութեան մասին: Երկու եղբայրներ, արջ որսալու դէպքին մէջ, մին հրացանով կվիրաւորէ արջը: Վէրք մահառիթ չլինելու համար որսն կյարձակի եղբոր վրայ և տակով կանէ անոր՝ ջարդ ու փուրդ անելու: Վտանգեալ անձն վստահութեամբ կքաջալերէ իւր եղբօր, որ իւր վրայ ընկած արջին հրացանով սպանէ, անկասկած լինելով, որ ինքը կազատուի նորա անվրէպ նշանառութեամբ: Եւ, արդա՛ր, ճշգրտութեամբ արջն կսպանէ՝ եղբօրն ազատութիւն տալով:

Գիւղիս եկեղեցւոյ արդ ի գանձապահ, որ մի կարճահասակ և նիհար մարդ է, 75 տարեկան, որոյ միրուքի և գլխի մազերու մէջ առանց չափազանցութեան ճերմակ մազի խայտ չէ ընկել տակաւին, կյիշէ իւր այս գիւղատեղին գաղթելու մանրամասն պատմութիւնը: Սոյն երեցփոխանն օր մի իւր 2 շներով կյարձակի վայրի վարազին վերայ, և այնինչ շներն առ երկիւղի խոյս տուած են, որով և ինքն վտանգի մէջ ընկած էր, սակայն սատանայի ճարպիկութեամբ կթռչի վարազի քամակի վրայ և նորա երկու ականջներ բռնելով՝ կմխուի նորա վրան և վարազի ամէն ջանքերը ի դերև հանելէն զկնի, կիրաւիրէ երկչոտ շները և կխրախուսէ նորա գաւակի մսերը պատառոտել: Եւ երբ այսպիսով վարազն բաւական կտկարանայ, կքաշէ դաշոյն, վարազի փորն կմխէ և կսպանէ: Այս օրինակ քաջասրտութեամբ եղնիկ, այծեամ, արջ և վարազ որսալ սոյն որսորդ գիւղացւոց սովորական գործն է, իսկ գայլ սպանելն իրենց համար ամօթ համարելով՝ իրենց «գէլ-խեղդ» շներու պարտք և բաժին կթողուն: Սոյն քաջարի գիւղացւոց պարծանք և հպարտ խօսքեր միշտ իրենց գերազանց ուժերով գազանաց հետ մարտնչելու և որսալու պատմութիւն ընելն է: Սոյնպիսի պատմութիւններ արած ժամանակը կյարեն, անմիջապէս և չովդառեցւոց քաջագործութիւնները, թէ նոքա այս մասին մեզմէ աւելի ճարտար և արագաձեռն են: Սոյն երկու գիւղացւոց տնային և դաշտային գործիքներ, կերակուրի պղնձեղէններ, ափսէներ, կապերտներ, գերանդի և մանգաղներ և այլ սոցա նմանները գիշերներն իրենց տան առջև ցան ու ցիր դուրս կմնան, ինչպէս և անասուններ, զի առակ եղած է, որ սոյն երկու գիւղացւոց գողցուած ապրանքները գողերն իրենց գրպանի մէջն անգամ չեն կրնար պահել: Սոյն երկու գիւղացւոց շրջապատող դրացի թուրք գիւղացիներու և իրենց մէջ կռիւներ յաճախակի կպատահեն, զի աւետարանի խո-

ՓԻՔ. գյուղը հարավ-արևելքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1980-ական թթ.) և Սբ. Ստեփանոս եկեղեցին հյուսիս-արևմուտքից և հարավ-արևելքից (լուս.՝ Ա. Օհանյանի, 1980-ական թթ.)

հական աշակերտներ, մահմեդականաց դէմ միշտ ընչից և անձնապաշտպանութեան ձիրք կբռնեն:

Սոքա արդարև անձնապաշտպանութիւնը յարգող գիւղացիներ են, զի երբ իրենց ուժին չափը ո՛չ պակաս, այլ թշնամու ուժին հաւասար կգտնան, երբէք չեն զիջաներ, իրենց բաճկոն հանողներուն թոյլ տալ, որ շապիկ ևս հանեն, ի վնաս իրենց աստանական ապրուստին:

ԻԹ
Փիք[116]

Ամսոյս 21-ին այցելեցինք ի *Փիք* գիւղ, ըստ թիւրքաց՝ *Զագլիկ* (Պաղլեղի գիւղ), որ շինուած է մի բարձր լերկ քարաժայռի դժուարակոխ լանջի վրայ և կբաղկանայ 318 տուն զուտ հայ բնակիչներէ՝ 1464 արական, 1328 իգական: Ունի գիւղս երկու եկեղեցի, մինն է նորաշէն, գմբէթաւոր, *Ս. Ստեփանոս*[117] անուամբ, որոյ մէջն կկատարուի ժամասացութիւնն, իսկ միւսն է մի հնաշէն, փայտածածկ եկեղեցի՝ *Ս. Աստուածածին*[118] անունով, որոյ մէջն ժամերգութիւն չեն ըներ: Գիւղի մէջտեղ կայ մի ուխտատեղի՝ *Ս. Գէորգ* անունով, որ ո՛չ այլ ինչ է, եթէ ոչ մի հաց թխելու փոքրիկ տուն: Սորա մէջ կայ հողով լցուած մի թոնիր: Ուխտաւորներ սորա միջի հողը կշաղախեն և մկնատամ անունով վէրքի վերայ կքսեն բժշկելու: Թոնրի տան կծառայեն երկու կանայք և կվայելեն նորա արդիւնքը:

Գիւղս ունի միդասեան ծխական վարժարան, որոյ մէջ կուսանեն 60-ի չափ աշակերտներ, որ թէև 1877 թուականէ ի վեր բացուած է[119], բայց ժամասացութիւն այնքան խեղճ և անկանոն է, որ կարծես թէ գիւղիս մէջ երբէք վարժարան ու ձայնաւոր վարժապետ եղած չլինի: Վարժարանի անցեալն այնչափ առանց հոգատարութեան մնացած է եղեր, որ այն ժամանակէն ցայսօր երկու տող գրելու համար գրիչ բռնող չէ ունեցեր: Վարժարանի շինութեան նախապատճառ և մեծ բաժին ծախք մատակարարող եղած է Չարեքայ վանից վանահայր արժ. Աստուածատուր վարդապետ Տէր-Յարութիւնեանց[120] և հանգուցեալ Արարատեան Աղէքսանդր վարժապե-

116 Գտնվում է Դաշկեսանի համանուն շրջկենտրոնից 7 կմ հյուսիս-արևմուտք՝ Շամքոր գետի աջակողմյան և Արթինաջուրի ձախակողմյան վտակների միջև (ծ. մ. բարձր է 1360-1620 մ):

117 Սբ. Ստեփանոս եկեղեցին կառուցվել է 1849 թ. գյուղի հասարակության և տփխիսեցի Ստեփան Միրիմանյանցի նյութական աջակցությամբ (մանրամասն տե՛ս նշվ. աշխ., էջ 265):

118 Ըստ ամենայնի՝ ԺԷ դարի կառույց է (մանրամասն տե՛ս նշվ. աշխ., էջ 264-265):

119 Կրում էր Սբ. Գևորգյան անունը: Դպրոցի շինարարական երկու արձանագրությունը մեզ է հասել Հովհաննես քահանա Խոջայանցի շնորհիվ (ՀԱԴ, ֆ. 461, ց. 1, գ. 9, թ. 187: **Կարապետյան Ս.**, նշվ. աշխ., էջ 263):

120 Սղնախցի Աստվածատուր վարդապետ Տեր-Հարությունյանցը Գետաբեկի շրջանի Չարեք վանքի վանահայրության պաշտոնը վարել է 1875 թ.-ից մինչև սպանվելու օրը՝ 1902 թ. օգոստոսի 21-ը (մանրամասն տե՛ս նշվ. աշխ., էջ 116):

ՓԻԲ. Հին Փիբ գյուղատեղին հարավից (լուս.՝ Ա. Օհանյանի, 1980-ական թթ.)

տը[121] իւր ուսուցչութեամբ, բայց, ափսո՜ս, որ քիչ միջոց վարժապետութիւն արած է այստեղ: Սորա անձնուիրութեան յիշատակ գիւղացիներ զմայլմամբ կպատմեն:

Գիւղիս արևելեան լեռնակատարի վերայ կայ մի մատուռ՝ *Քարհատի խաչ* անուանուած ուխտատեղի[122], որոյ մէջ՝ և նահատակի գերեզման իւր տապանաքարով: Սոյն ամբողջ լեռը պաղլեղի հանք է և իւր ներքև ունի դադարեալ գործարան: Կտրելու պաղլեղաքար ուխտատեղւոյն մօտ լինելով՝ յիշեալ ուխտատեղին Քարհատի խաչ անուանուած է:

Գիւղիս հարաւակողմ՝ մի վերստ հեռաւորութեամբ, կայ *Մանդուռ* (թերևս մատուռ) անունով ուխտատեղի, որոյ ներքև շինուած օճախի մէջ խունկ ու մոմ կվառին: Ըստ աւանդութեան բնակչաց՝ անգիր ժամանակէն ի վեր եղած է ուխտատեղիս: Սոյն օճախին կհովանաւորեն նոյնպէս անյիշատակ ժամանակէ ի վեր երկու կաղնիներ՝ հայր և որդի անուանուած: Ասոնցմէ առաջինը, կարի հաստաբուն, չորացած ու փտած բազմաճղի, զառամած ու գոսացած լինելով, ասկէ 20 տարի առաջ, ուժգին քամիին այլևս չդիմանալով, կործանուեր է՝ բացօդեայ թողնելով իւր ներքև եղած օճախ և խաչաքարերն: Իսկ փոքր-ինչ հեռու եղող որդի կաղնին, թէպէտև շատ ծերացած, բայց դեռևս շատ դարերով մահուան դէմ մաքառելու յոյս կտայ, զի իւր արմատներ երկարացուցած է՝ իրմէն քիչ մի հեռու ձորակի մէջ գտնուած սառնորակ և բարեհամ աղբիւրի ջրէն ծծելու, զովանալու և կենսաւորելու:

Հարաւարևմտեան կողմ՝ նոյնպէս մի վերստ հեռաւորութեամբ, նոյն ձորակի ձախ ափին, կայ մի տապան-ուխտատեղի՝ *Ճգնաւոր* անուանուած: Գիւղիս բնակիչները, յիշեալ տապանաքարին կից օճախ շինած, խունկ ու մոմ կվառեն և ամէն տարի՝ զատկի տօնին, մետաքսի հիւսուածքի մէջ կարմիր ձու դրած՝ կկախեն տապանաքարին հովանաւորող թխկի ծառի ճիւղերէն: Թէ ի՞նչ պատճառաւ այդ սովորութիւն մտած է իրենց մէջ, իրենք էլ չգիտեն:

Նոյնպէս գիւղիս արևելահարաւային անտառի մէջ՝ 4 վերստ հեռաւորութեամբ *Չարեքայ վանքը* տանող ճանապարհի վրայ, կայ ուխտատեղի մատուռ իւր միջի տապանաքարով՝ *Գուզուլ-խաչ* անուանուած[123]: Ամառնային ամպերու կայծակ սկսելու միջոցին անմիջապէս գիւղէն մատաղ կտանեն յիշեալ ուխտատեղին, որ կարկուտը իրենց գիւղի անդաստանի վրայէն անցնէ, ինչպէս որ այս տարի ևս այդ ուխտադրութիւն կատարելով՝ իրենց յոյս պսակուեր է:

Սոյն կողման վրայ՝ գիւղէն 8 վերստ հեռաւորութեամբ, կայ մի շինատեղի՝ *Աղուէսաշէն* անունով[124], ըստ թուրքաց՝ *Թիլքի-քէնդ*, որոյ մէջ կան խոնարհուած եկեղեցի և գերեզմանոց:

Գիւղիս արևմտակողմը՝ Շամքոր գետի աջ ափին, կայ հին շինատեղին՝ *Փիբ* անուանեալ[125]: Սոյն աւերակի մէջ կայ մի կանգուն և առողջ, սագաշէն եկեղեցի, որոյ հարաւային կողմը կգտնուի մատուռ՝ Բարսամ ճգնաւորի դամբարանով[126], և արևմտահիւսիսի կողմը՝ բլրակի գլխին, կան երկու ուխտատեղի մատուռներ՝ *Քոյր-եղբայր*:

Յուսկան-նահատակ անուանուած եղբօր մատուռը[127] պարսպապատած է, որոյ կապալառուն ուխտաւորաց նուէրներէն տարին տասն ռուբլի փող կտայ գիւղիս ուսումնարանին: Դարձեալ հիւսիսա-

121 Ալեքսանդր Արարատյանը դասավանդել է 1876-1878 թթ. (մանրամասն տե՛ս նշվ. աշխ., էջ 263):

122 Գտնվում էր Փիբի հարավային կողմում՝ Շիբասարի վրա (նշվ. աշխ., էջ 268):

123 Գյոզալ քար անվամբ հայտնի այս խաչքարը գյուղացիները փոխադրել էին գյուղամեջ, որտեղ և պահպանվում էր մինչև բռնագաղթը: Կերտվել է 1292 թ. (նշվ. աշխ., էջ 273):

124 Աղվեսաշենը՝ որպես ամառանոց, հիշվում է 1905 թ. քաջարի փիբեցիների՝ թուրք ավազակախմբին արժանի հակահարված տալու առնչությամբ (մանրամասն տե՛ս նշվ. աշխ., էջ 258):

125 Հին Փիբ գյուղատեղին գտնվում է բնակավայրից 5 կմ հյուսիս-արևմուտք: Եկեղեցին, որը հայտնի էր Սբ. Փեփրոնյա անվամբ, մինչև 1989 թ. բռնագաղթը գրեթե կանգուն էր (մանրամասն տե՛ս նշվ. աշխ., էջ 266-267):

126 Բարսամ ճգնավորի մատուռը գտնվում էր վերոնշյալ եկեղեցուց հարավ: Ներսում պահպանված խաչքարերից մեկը կրել է 1457 թ. (նշվ. աշխ., էջ 268):

127 Հայտնի էր նաև Ռուսկան նահատակ անվամբ (**Քարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 300):

կողմ՝ 5 վերստ հեռաւորութեամբ, կայ հին շինատեղի՝ *Սվրեցիք*[128] անունով, որոյ մէջ կգտնուին աւերակ եկեղեցի և գերեզմանոց: Մամռապատ տապանաքարերու վրայ, խաչերէն ի զատ, հոտաղ իւր եզներով, մահակալ իւր գութանով և այլ արհեստաւոր իւր գործիքներով քանդակուած պատկերներ կտեսնուեն: Սոյն շինատեղի արևմտեան կողմ՝ մի վերստ հեռաւորութեամբ՝ բարձր սարի հարթավայրի վրայ, կգտնուի մի մատուռ՝ իւր միջի խաչանիշ գերեզմանաքարով՝ *Եղբայր* անուանուած: Ասորմէ քիչ մի վայր՝ դժուարամատչելի ժայռագլխին, կայ *Քոյր* անուանեալ մատուռ՝ իւր գերեզմանաքարով: Երկուքն ի միասին *Մաղթում զաղա* կանուանուեն: Հին Փիբ գիւղատեղւոյ և Յուսկան նահատակի մէջտեղ բարձրացած բլրալանջի վրայ կայ բերդատեղի՝ *Գառանտավանք*՝ անուանեալ *դալէ*[129]:

Գիւղիս արևմտահարաւ կողմը՝ 6 վերստ հեռաւորութեամբ, *Աղուէսաշէնի* ջրի ձախ ափին, կայ մի սեպացեալ քարասար, որ բաղկացած է բազում խաւերէ, շերտ-շերտ իրարու վրայ գոյացած ուղղաբերձ բարձրութեամբ: Այդ բարձրութեան մէջտեղի՝ երկու կանգնաչափ հաստութեամբ եղած շերտն փուխր լինելու համար մաշած և մէկ կանգնաչափ խոր ընկած է, որոյ վերի և վարի շերտերը, երկու շրթունքներու պէս դուրս մնալով, մի երկարաձիգ, հորիզոնական դիրքով բերան ձևացուցեր են: Այդ երկոքին շրթանց կամբիրնեն մէջը 7 բնակավայրեր կան՝ փուխր քարի մէջ փորուած փոքրիկ խցերու մեծութեամբ, իրարմէ հեռու, ասոնցմէ ոմանց մէջ՝ 5, ոմանց՝ 10 մարդ հազիւ կարող են պարունակել: Այդ բնակավայրի վերի և վարի բարձրութիւնները այնչափ ահարկու են, որ վերուստ ի վայր նայողին սոսկումն կտիրէ: Այդ տեղէն եթէ մարդ վարի կողմը նայելու լինի, խելքը պտոյտ կու գայ և չի կարող ինքն իրեն կանգուն պահել: Խցակներու քամակի կողմը նախապէս երեք կանգնաչափ փորուած և իրաքանչիւրի առջև քարուկրով պատ շարած՝ 2 շրթունքներ իրարու հետ միացուցեր և բնակավայր ըրած են, որոնց ամէնքն ի միասին տեղական բնակիչներէն կանուանուի *Օխտը եղցի (եօթն եկեղեցւոյ) քար*: Պարսից և լէզգիների արշաւանքի ժամանակ նոցա իւրաքանչիւրի մէջ մի-մի գերդաստան ապաստան եղած է: Եւ այդ միջնաշերտի մի կողմ, որ հիւսիսէն արևելք դարձած է, կերկարի մինչև կէս կանգուն լայնութեան և 2 կանգնաչափ բարձրութեան, ճանապարհի մէջ մտնելով՝ կերթան այդ բնակավայրեր: Մինչև չհասնեն այդ բնակավայրերը, նոյն բնակավայրի հակառակ կողմէն մարդ կարող չէ նոյն նեղ շաւղով դուրս գալ: Որդւոյ որդի աւանդութեամբ մեզ հասած կպատմեն, թէ մի հարս այդ շաւղէն իջնալու ջուր բերելու միջոցին վարի անտառի մէջ թագնուած լեզգին հրացանաձգութեամբ ի վայր կգլորէ զհարսն: Եւ թէ շաւիղի անցքը պահպանող երիտասարդն գնդակահարութեամբ սպանուելու և ի վայր կործանուելու միջոցին աղեկտուր մայրն ինքն զինք ի նոյն բարձրութենէ հոսեցուցեր է ի վայր, և նորա մարմին քարերուն զարնուելով քանի մը կտորի բաժնուեր է: Ահա գիտնալու է, թէ 30.000.000 հայի մնացորդն ինչ ահռելի միջոցներով ապրեր և հասեր է մինչև մեր ծնունդ: Այսպիսի ողբալի ազգին պահպանութեան համար ինձի պէս ողորմելի արարածներ եպիսկոպոս եղած և նորա եկեղեցւոյ տեսուչ հաստատուած են՝ ժողովուրդ կառավարելու:

Այնինչ մենք Գետաշէնու և բանանցեցւոց շինատեղւոյ անձկութեան, հետևապէս և տներու ու փողոցներու խոնաւութեան, անկանոնութեան և աղտոտութեան վրայ զարմացած էինք, այս գիւղի մէջ աւելի վատթարագոյն տեսանք: Եւ սորա պատճառը մեզ կթուի, թէ հետևեալն է: Պարսից տիրապետութեան ժամանակի վատթար վարչութեան երեսէն յառաջ եկած արշաւանքներու, հարստահարութեան, գերութեան, հրոյ և սրոյ, բարբարոսական արարմունքներու պատճառաւ հայերը ձորամէջ և անփոյթ տեղեր իրանց գերեզմանոց ընտրեր են, քան թէ շինատեղի, և այս մահառիթ տառապանքներու կենցաղավարութիւն այնչափ երկար տևեր և սովորութիւն դարձեր է չարքաշ հայերին, որ այսօր իսկ մահու և կենաց մէջ ընտրութիւն անելու զգացումն անգամ կորսնցուցեր են: Եւ այն ժամանակի մոլեկրօնութիւնն էլ, այդ գազանական մարմնոյ մէջ իբրև հոգի մտնալով, իրաւունք տուեր է այլակրօնի ընչից և ստացուածոց կողոպտման հետ և իգական սեռէն գեղանի կանայք և աղջկունք յափշտակելով՝ Մահմեդի քարոզած արքայութիւնը այս աշխարհի մէջ էլ վայելել: Պարտուց և իրաւանց ճանաչման համար յատկացեալ արդարաքարոզ կրօնի փոխարէն Մահմետի Ղուրան (օրինագիրք) իրաւունք տուած է իր հետևողաց այս աշխարհի մէջ իգամոլական տոփանք յագեցնող արքայութիւն վայելելու, հարկ եղած կենսական պիտոյքներ ևս ձեռք բերել այլակրօններէն, իսկ եթէ նոքա դիմադրութիւն կանեն, անխնայողաբար փողոտել և գէշագէշ պատառոտել հրամայած է, որպէսզի այսօր և ընդմիշտ գեաւուրն մահմեդականի համար և մահմեդական Աստուծոյ համար ապրեն: Տեսնելով սոյնպիսի եգիպտական, յանուն աստուծոյ անաստուած արարքները՝ ընդդէմ մեր համազգի իսրայէլաորդւոցն, ինչո՞ւ տօնելի Մովսէս չլինել:

Ասոնք լոկ խօսքերու բարդութիւն չեն, ուշադի՛ր ընթերցող, այլ իրականութիւն, եթէ դու ևս յանձառու

128 Նաև Սավուրեցիք անվանաձևով հայտնի գյուղատեղիում, որը գտնվում էր Ղոթյուլ գյուղից 2,5 կմ հարավ-արևմուտք, ուսումնասիրություններ են կատարել հիմնականում Մակար Բարխուտարյանցը ԺԹ դարավերջին և Սեդրակ Բարխուդարյանցի գլխավորած արշավախումբը 1960-ական թթ. (նշվ. աշխ., էջ 299-300: Դիվան հայ վիմագրության, պր. 5, Երևան, 1982, էջ 256-257: **Կարապետյան Ս.**, Հյուսիսային Արցախ, էջ 321):

129 Հայտնի էր նաև Կեռստավանք անվամբ (**Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 304: Տե՛ս նաև **Կարապետյան Ս.**, Հյուսիսային Արցախ, էջ 268):

լինես ամառնային շոգ ժամանակին այցելել Գանձակու գաւառի մահմեդականաց և հայոց գիւղեր և ուշի ուշով քննես քո համարիւն եղբարց դառնադառն աղէտներու մնացեալ պատկերները, որ մենք չենք կրցեր նկարագրել՝ մեր զգացման արտայայտութիւն ընելու բառեր պակսելու համար, դու մեր գրածի բազմապատիկն պիտի տեսնաս և դու ևս անկարող պիտի լինես նկարագրել: Պիտի տեսնաս, որ հայոց տիրապետութեան ժամանակ, երբ այս կողմերը պարսիկներ չկային, բոլոր արգաւանդ արտօրէից կենտրոնի և հարթավայրերու մէջ հայ քրիստոնէի շինատեղիներ, նոցա կանգուն եկեղեցիներ և խաչքարերով լի գերեզմանոցներ, որք այժմ բոլորն էլ մահմեդականաց բնակավայրեր դարձեր են, իսկ հայերն իրենց արիւնաքամ եղած գերդաստանի մնացորդներ պահպանելու համար առ երկիւղ պարսիցն ընտրեր են խորաձորերու մէջ, առիկող տեղեր բնակութիւն հաստատել՝ գազանակենցաղ լինելու: Բոլոր հայ գիւղերու հետ դու պիտի տեսնաս և Փիբ գիւղի աւելի մահառիթ շինատեղին, որոնց տներ աւելի իրարու վրայ դիզուած կհամարուին, քան թէ կողքէ կողք շինուած: Վերևի տներու մեծ մասի ճանապարհները վարի տներու տանիքներու վրայէն կանցնին:

Տներու երեք կողմի պատեր առապար կողմէն այնչափ գետնափոր և հողի մէջ թաղուած են, որ դրսի գետին և տան տանիք բոլորովին հաւասար են իրարու: Մարդ չի կարող որոշել իրարմէ երկուքի՝ գետնի և տանիքի երեսին հաւասարապէս խոտ բուսած լինելու համար: Միայն նոցա տներու առջևի կողմէն մի փոքրիկ նեղուցած դուռ կայ, որ աւելի գազանային որջի անցքի, քան մարդաբնակութեան կնմանի: Տան ներսի կողմը այնչա՜փ խոնաւ և մութ է, որ մահու, քան թէ կեանքի բնակավայր կհամարուի – մեղա՜յ, մեղա՜յ, շներու բոյներէն աւելի վատթարագոյն: Անտանելի ցաւ է մեզ տեսնել կեղեքիչ օսմանցւոց փաշաներու և հարստահարող պարսից խաներու որսորդական շներու և թռչնորս բազէներու լաւ կեանք ունենալ, քան հայ քրիստոնէին: Ինչո՞ւ թոյլ տալ այդ անարդար ազգերուն, որ հազար մարդու կեանքը մի մարդու ուտել տան: Հազար մարդիկ չարաչար աշխատութեամբ հիւրաքանչիւրն տարեկան 100 մանեթով ապրեն, իսկ մի մարդ շուայտութեամբ 100.000 մանէթով զեղխանայ և ծիւրի: Զառ ի վերէն զառ ի կող իջնող խոնաւութենէն տան կողքերու, գետնի և տանեաց վրայ բուսած աւելուկ, պատատուկ (բաղեղ), փիփերտ (մոլոշ), բլիբիստրի (աւել) և այլ խոտեր և զանազան փշեր, եթէ ոտնակոխութեան ենթակայ չեն եղած, մանգաղին առատ հունձ կուտան: Շինավայրին անձկութեան և առապար լինելու պատճառաւ անասնոց և մարդկանց աղբակոյտեր տներու առջև և կողքին և կամ ձորի և խորդուբորդ տեղերու մէջ այնչափ դիզուած են, որ անձրևներու և վազող ջրերու մէջ աղբատեղն դարձած են և արևու ջերմութեան ներքև տաքանալով, ամպանման գոլորշեաց հետ տոգորուած՝ կենասպառ գարշահոտութիւն կբարձրացնեն:

Շատ գիւղեր, մանաւանդ Փիբ, սայլի ճանապարհ չունենալու համար աղբեր արտերու վրայ տանելու և արտերէն որայներ և խոտեր գիւղամէջ իջեցնելու անկարելութեան մէջ կգտնուին, հազիւ հազ գրաստուց կռնակով իրենց հնձանները փոխադրել կհնարաւորին, իրենց մեռելասարաս կեանք բտելու: Մանաւանդ, որ կեղտասիրութիւնը ունակութիւն դարձած է սոցա: Տիրող իշխանութեան ազդու հոգատարութեամբ առ այժմ միայն կբուժի այս կերպ ընդհանրացած մոլորութիւնը:

Շատ տեղեր քարոզեցինք, որ իրարմէ բաժանուող եղբայրներ փոխադրուին արտօրէից կենտրոնատեղիներ բնակութիւն հաստատելու, որ դժուարութիւններ դիւրանան, և մահառիթ կենցաղավարութենէն ազատուին: Նոքա կպատճառեն. «Ինչպէ՞ս թողունք մեր պապի օճախն, մեր եկեղեցին, մեր հարց գերեզմանները, և այս վերջիններն ո՞վ պիտի օրհնել տայ և ողորմի հանէ նոցա հոգւոյն»:

Տգիտութիւնը ժողովրդին այն աստիճան վայրենի և սնապաշտ դարձուցած է, որ գիւղի մօտակայ պատուական արտերէն չորսն մեռելոց գերեզմանատեղի լինելու համար նուիրած է գեղական համայնութիւն, իսկ կենդանի մարդկանց կեանքի բարեկեցիկ լինելու համար մի արտ անգամ չեն տար տուն շինելու: Թող հասկանան գաղթական պօլսեցի, տփխիսեցի, նոր-նախիջևանցի և այլ տարագնաց հայերը, որոնց թեթևամտութեան առջև «խրմբրլ ու կռոյ» կհամարուին Հայաստանի մէջ մնացող և իրենց դռներ պանդխտող վանեցի, մշեցի և այլ հայերը, թէ Հայաստան որոնցմով հայաբնակ մնացեր է, իրենցմո՞վ, թէ՞ այս չարքաշներով:

Մինչև ցայժմ մեր շրջագայած գիւղերէն միայն Նիւզգեար գիւղ սայլի գործածութիւն կընէ՝ իւր սահմանն կարի հարթ լինելու համար: Միւս գիւղերէն ոմանց սահմաններ կա՛մ բոլորովին սար ու ձոր և առիկող են, որ սայլ գործածելն դժուարացած է, կա՛մ կիսով չափ ունեն այդ բնական դժուարացուցիչ պատճառներ, սակայն բոլոր հայոց գիւղեր, իրարու աչք տալով, սայլի գործածութիւն անհետացուցած են, իրենց հունձերը գրաստի քամակով կփոխադրեն, որով նոցա գործերն 3-6 անգամ դժուարացած է և դժուարանալով 3-6 անգամ ժամավաճառ կլինեն՝ սայլի «աղուրներ» (սայլի գնալու ճանապարհին վանեցիք «աղուր» կասեն) չպատրաստելու համար:

Կարի առիկող և շատ ելևէջ ճանապարհով փոխադրող գրաստուց 10 խուրձ օրան հազիւ կարող են բառնալ, այնինչ սայլին՝ 3 բարդ, այսինքն՝ 90 խուրձ կբառնան, որ երկու եզնով կփոխադրուի: Երկրագործներ այսպիսի խիստ և դժուարին աշխատութեան պատճառաւ թէ՛ արդիւնքին մի մասն կկորսնցուցեն և թէ՛ նիհարած, կաշի և ոսկոր մնացած են:

Դիցուք թէ երկրագործն իր շօշափելի տգիտութեամբ իւր շահն և վնասն չի ճանաչիր և կշռադատելու մտքի զօրութիւն կորսնցուցեր է: Հապա հարկահան կառավարիչներու խղճին ի՞նչ եղած է, տիրելու և կառավարելու շնորհք ո՞ւր մնացեր է, որ այսպիսի տգետաց վրայ իրենց խնամք չեն ցոյց տար գէթ տիրող իշխանութեան շահուն համար, որպէսզի իրենց կաթնատու բանական անասուններ թէ՛ իրանց և թէ՛ տիրող իշխանութեան աւելի օգտաբեր լինէին:

Ոչ ապաքէն անհատական հարստութիւն և ոյժն տիրող իշխանութեան հարստութիւն և ոյժ կկազմեն: Ես ստուգիւ վերահասու եղած եմ և կճանաչեմ այնպիսի կառավարիչներ, որ երկրագործ մշակէն աւելի անխելք և անհեռատես կհամարուին շնորհիւ իրենց անփոյթ և անհաւատարիմ գործավարութեան: Զի երկրագործ գիտէ իւր կաթնատու կովեր, ոչխարներ, աշխատող եզներ և գրաստներ բտել և գիրացնել, որպէսզի ժամանակին առատ կաթն և բուրդ ստանայ, և նոցա աշխատակցութեամբ դիւրացնէ իւր անհրաժեշտ գործեր, իսկ տիրող կառավարիչներ ոչինչ չեն մտածեր:

Կառավարիչներ, եթէ իրաւունք կհամարեն իրենց միմիայն գաւազանի հարուածի վարձատրութեամբ տեղական բնակչաց հարկադրելով՝ մարտկոցներու և պատերազմական պիտոյից փոխադրելու ճանապարհներ, մանաւանդ թէ ծառայող աստիճանաւորներու զբօսավայրի կառուղիներ շինել տալ, հապա ինչո՞ւ միևնոյն մտրակի (եթէ չկան մարտավայել այլ միջոցներ) վարձատրութեամբ չեն շինել տար երկրագործ մշակներու երկրագործութեան ճանապարհները, որոնցմով մարդկային ազգի կենսական պիտոյքներ կառատանան և կկշտանան թէ՛ երկրագործը և թէ՛ իշխանութիւնը:

Փիբ գիւղի երկրագործական ճանապարհներու քիչ տեղեր հարթելու և ուղղելու պէտք ունեն, այնպէս որ, եթէ գիւղացիք, տուն գլուխ մի մշակ տալով, առ առաւելն երկու շաբաթ միայն աշխատեն, սայլի աղուրն և ճանապարհներ կուղղուեն, որով մշակական գործերն վեցէն հինգ մասն կզեղչուին և հնգիւ չափ կդիւրանայ: Մենք այս մասին թէ՛ առտնին խրատներ և յորդորներ կարդացինք և թէ՛ եկեղեցւոյ բեմէն խրատեցինք ժողովրդականաց: Թէև համոզուեցան մեր քարոզի օգտակարութեան, բայց գիւղացի անզարգացած ժողովուրդը, անսովոր աշխատութեան մէջ, ինքնուրոյն գործելու շնորհք չունի, մինչև որ իրեն գլխին կանգնող հրամանատար չի լիներ: Ուստի երբ մենք գիւղէն հեռացանք, մեր քարոզները լոկ քարոզ մնացին՝ առանց գործադրութեան:

Ուրեմն տիրող իշխանութեան պարտք կմնայ գործել տալ գիւղացւոց՝ յօգուտ ընդհանուր մարդկութեան: Թոյլ կտամք մեզի, մանաւանդ թէ պարտք կհամարեմք իբրև երդուեալ պաշտօնակատար, յօգուտ բարեխնամ տէրութեան և հպատակաց, ասել, թէ ինչպէս անցեալ տարի կառավարող իշխանութիւն իրաւունք համարեց ինքեան՝ միմիայն Փիբ գիւղէն 3000 մշակ և 800 ռուբլի փող առնել[130] գաւառի ծառայող աստիճանաւորների *Հաճի-քէնդ* անուանեալ ամարանոցի կառուղիներ հարկելու համար, թող պարտք համարէ ինքեան և երկրագործներու սայլուղիներ հարթել տալ, որով տէրութեան առ իւր հպատակս ունեցած փոխադարձ պարտիք կատարուած կլինի:

Փիբ գիւղի ամբողջ իգական սեռ՝ թէ՛ հարուստ և թէ՛ աղքատ, առհասարակ բոկոտն կշրջին, ինչպէս և այս կողման բոլոր հայ-գիւղացի կանայք: Ոտնաման չունենալու պատճառաւ չէ այս չարքաշութիւնը, այլ ընդհանրացած մի սովորութիւն է դարձեր: Ի՞նչ կկարծէք, որչա՞փ հեռու տեղեր կգնան: Ճիշտ երկու ժամու ճանապարհ՝ ահագին սարեր ու ձորեր անցնելով, մինչև իրեանց բինա (հանգրուան) ասած տեղեր, որտեղ տարեկան իւղ և պանիր կշինեն: Առանց այր մարդու և երկիւղ կրելու բինաներու մէջ կբնակեն գիշեր ցորեկով կանանց մի մասն իրենց փոքրիկ զաւակներով մայիսի սկզբէն մինչև սեպտեմբերի վերջը: Գիւղիս մէջ մնացեալ կանայք զբաղուած են կալ կալսելու գործողութեամբ, ամենայն ամենայնիւ՝ ցվերջ գործոյն և բանջարանոցներ մշակելու:

5-10 բինա իրարու մօտ մի սառն աղբիւրի գլխին կառուցած են սարերու լանջի վրայ, 4-5 բինա՝ այլ տեղ՝ բոլորովին հեռու առաջիններէն, միւս երկուերեքներ այլ տեղ կբնակին ցան ու ցրիւ, ուր որ սառն աղբիւր կամ վտակ կգտնան՝ նոյնպէս առանց այր մարդու: Սոքա՝ բինաներու բնակիչ կանայք, շաբաթ 2-3 անգամ իսկ ոտքով գիւղ կուգան՝ իրենց հետ բերելով շալակած իւղ, պանիր, չորթան և այլ բաներ, վեր առած գիւղի իրենց տներէն իրենց պիտոյից չափով հաց՝ կվերադառնան բինաները՝ դարձեալ բոբիկ ոտքով այն քարքարուտ ու խիճ քարերով լի ճանապարհը, շատ անգամ իրենց 5-8 տարեկան զաւակաց ձեռքէն բռնելով, որ դարձեալ իրենց նման բոկոտն են, մինչև հասնեն իրենց բինաներ: Միգուցէ քիչ չափազանցութիւն թուի, անտես և անսովո՛ր ընթերցող, 5-8 տարեկան մանկանց բոկ ոտամբ, 2 ժամու ճանապարհ քալելու խօսքեր: Մենք բինա ասուած տեղեր գնալու ժամանակ քանի-քանի կիներ և մանուկներ տեսանք երթալու-գալու ճանապարհի մէջ:

Գիւղիս պաղլեղի հանքը նախապէս տեղական հայեր կհրահալէին իրենց պապենական սովորութեան կերպով, և այն ժամանակ թէ՛ իրենք կշահուէին և թէ՛ տէրութեան բաւական շահ կուտային՝ փութ մի մնթ. ծախելով: Անցեալ վերջին տարիներու մէջ նախ մի հրէա և ապա տփխիսեցի հանգուցեալ Միրզայօվն պաղլեղի հանք կապալով վերցուցին

130 «Ըստ այսմ հաշուելու է և այլ գիւղերու բաժ, հաս, հարկ, կոռ և բեկար» (ծնթ. հեղինակի):

տիրող իշխանութենէն: Սակայն երկուքն ևս վնասուեցան, և այս պատճառաւ հանքն 5 տարիէ ի վեր գործադուլ եղած է: Գործարանը, որոյ շինութիւնները 50.000 ռուբլիով հազիւ կառուցուած են, այժմ բոլորովին քայքայման վիճակի մէջ կգտնուի, ուստի և հանքահանութիւնն դադարած է՝ ի վնաս տէրութեան գանձուն:

Փիբ գիւղացիք համայնական գործակցութեամբ իրարու օգնելու սովորութիւն ունեն, բայց, ափսոս, որ միմիայն նոր կալատեղեր պնդացնելոյ գործին մէջ, ոչ երբէք ճանապարհաշինութեան համար, և այն էլ դժբախտաբար կիւրակէ օրերին: Թմբուկի և շեփորի հրաւիրական ձայնով գիւղի երկսեռի բազմութիւնը նոր շինուած կալի վերայ կժողովուին: Անոնցմէ երկու սեռի ամուրիներ պար կկազմեն և զանազան կերպ պարախաղերու միջոցաւ նոր կալատեղը կոխ տալով՝ կը պնդացնեն: Երբ մենք բինաներէն կվերադառնայինք, հանդիպեցանք այդ խայտաճամուկ պարահանդէսով կալահանդէսին և մի կողմ քաշուած հետաքրքիր կլինէինք: Հպարտ գիւղացի ամուրիներ սկսեցին մանէքներ տեղալ, իւրաքանչիւր իւր հաւանած պար եկող աղջկան ձեռին: Եղան աղջիկներ, որոնց ձեռքին 4-6 մանէքներ մատուցուեցան:

Այսպիսի գնահատուած աղջիկներ, պարէն դուրս գալով, փոխանակ թաշկինակի՝ մանէքներ իրենց մատներու մէջ բաց բռնած, օդին մէջ ծածանեցնելով կկաքաւէին, և իւրաքանչիւրն առանձինառանձին իւր նազախաղը լրացնելէն զկնի ի պատիւ ինքեան նուիրուած մանէքները բաշխեց շեփոր ածողին: Ես, այդ առատաձեռնութեան վրայ զարմացած, պախարակեցի նոցա շռայլութիւնը, բայց ինձ մեկնեցին այդ շռայլութեան գաղտնիքն այսպէս: Պարահանդէսէն վերջը իւրաքանչիւր մանէքը իւր տիրոջ կդարձնէ շեփոր ածողն՝ մէն մի մանէքէն 2 կոպէկ վարձ վերցնելով իրեն: Բոլոր իգական սեռը այդ օրը իրենց պատուաւոր զգեստներ հագած էր, որոնց վերնազգեստի կախթևանի արխալուղի (չափքեան) թևերու վարի կողմը, սկսեալ կռնատակէն մինչև ձեռքի մօտը, կարգ մը փայլուն աբասիներ կարուած կային: Նազախաղը ըրած միջոցին, երբ թևերնին սիգապանծ շարժումներով վեր ի վայր կխաղացնէին, փայլուն աբասիները, արեգական շողերն իրենց մէջ հատանելով և անդրադարձ ցոլացումն տալով, գեղեցիկ փայլք կուտային: Բայց յայսմանէ, իրենց երեսների, օձիքներու, կուրծքերու և լանջերու վրայ զանազան ձևերով շինուած արծաթեայ զարդեր կարած ունէին, որոնք նոյնպէս փայլք կուտային իրենց շախկ ու շուխկ ձայներու հետ: Բայց, ափսո՜ս, որ այդ զարդերու անունները բոլորն էլ թուրքերէն էին, ուստի և ես չկարողացայ քանի մի հայկական բառեր գիւղական մութ անկիւնէն ի լոյս բերել:

Այդ չափ արծաթեայ զարդարանքեն հակառակ՝ ոչ միոյն ոտքին ոտնաման չկար, լինէր դա հարուստ թէ աղքատ, պառաւ թէ մանկամարդ, տհաս թէ նշանած աղջիկ՝ բոլորն էլ, առանց բացառութեան, բոկոտն էին:

Փիբ գիւղէն 5 ուսանող կայ Գանձակու արհեստաւորաց ուսումնարանի մէջ, մինն էլ՝ Տփխիսու:

Լ
Վերին Ղոյթիլ

Ամսոյս 29-ին Փիբէն մեկնեցանք *Վերին Ղոյթիլ* ասուած աւերակ շինատեղին, որուն շրջապատ անդաստաններ ու անտառներ իբրև ագարակ, սեպհականութիւն են Բարսում գիւղացի Մելիք-Ռոստոմեանց հին և բազմաթիւ գերդաստանին, որ 50-ի չափ անձինքներէ կբաղկանայ: Սոյն գերդաստան, ասկէ երկու տարի առաջ բաժանուելով, եօթն տուն եղած են[131]:

Կպատմեն, թէ Մելիք-Ռոստոմեանցի ծագումը Բագրատունի ցեղէն սերած է, և այդ ազգաբանական ծագումն հաստատելու համար ռուսերէն մի տետր հրատարակուած է անցեալ մօտակայ ժամանակի մէջ: Ռոստոմեանց ներկայ գերդաստան թէպէտև բաժանուած է անդամոց շատութեան համար, բայց իրենց հայրենական հողային կալուածները ի միասին կմշակեն, և նոցա կալատեղին և տաւարեղենաց նախիր, ոչխարաց հոտ և գրաստուց ջոլիր կգտնուին սոյն Վերին Ղոյթիլ ըսուած կալուածին մէջ, որ ամէն կողմանէ երկու-երկու ժամու ճանապարհաչափ հեռի կգտնուի ամէն կերպ դրացիական օգնականութենէ և կպաշտպանուի միմիայն իւր գերդաստանի արի և թիկնաւէտ երիտասարդներով: Սոյն կալատեղի մէջ հիւրընկալուեցանք մէկ գիշեր և ննջեցինք բարձրավանդակ լեռնադաշտային բացօդեայ վայրի մէջ, որուն ընդարձակ հորիզոնի, ջինջ օդի և աղբիւրաջրի պատուականութեան հետ կփայլէին ամէն կերպ մաքրութիւն և բնակչաց սրտի սրբութիւն: «Այսպէս օրհնեսցի ամենայն մարդ, որ երկնչի ի տեառնէ»:

Սոյն ագարակի արևելեան կողմը կայ մի աւերակ շինատեղի՝ *Հնգշափոր* անուամբ, որոյ մէջ կգտնուին հայոց կիսափուլ եկեղեցի և գերեզմանոց: Ագարակիս հարաւակողմը կայ մի *Կարմիր եկեղեցի* անունով ուխտատեղի, որ մօտ ժամանակներս փայտայարկով նորոգուած է սոյն ցեղի ձեռքով: Եւ այնտեղէն վայր կայ մի մատուռ՝ *Թռած խաչ* անունով: Արևմտեան կողմը՝ Շամքոր գետի աջ ափին, կայ մի մատուռ՝ *Տուկսիկայ խաչ* անուանեալ, այսինքն՝ փոշտանգի խաչ, ուր ուխտի կտանեն փոշտանգուած մանուկները: Նոյն ափին մօտ կգտնուի *Ներքի Ղոյթիլ* անունով աւերակ շինատեղին, որոյ միջի *Ս. Յովհաննէս* անուն եկեղեցին կանգուն կայ մինչև ցայսօր, որոյ արևմտեան լու-

131 «Մելիք-Ռոստոմը թաղուած է Գանձակու Ս. Յովհաննէս մայր եկեղեցւոյ գաւթի մէջ (ծնեալ՝ 1722 թ., վախճանեալ՝ 1794-ին» (ծնթ.՝ հեղինակի):

սամուտէն ներս կանցնեն այն ամէն երեխաներ, որոնք ուշ ոտքի կելնեն: Կայ այդտեղ և գերեզմանոց: Իսկ սորա հիւսիսային կողմը՝ գմբէթաձև բարձրացած սեպացեալ սարագլխին, կայ *Ս. Մինաս* անունով ուխտատեղի՝ Ճգնաւորի գերեզմանով, որուն կդիմեն փորացաւ ուխտաւորներ, զոր անցեալ մօտ ժամանակի մէջ նորոգեր է տփխիսեցի Մինաս Յակովբեան Կօլատեանցը: «Հիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»: Իսկ հիւսիսարևելեան կողմը կայ *Քարայատակ* անունով աւերակ շինատեղի, որոյ մէջ կան գերեզմանոց և կիսափուլ քարուկիր եկեղեցի:

ԼԱ
Բարսում[132]

Ամսոյս 30-ին այցելեցինք Բարսում գիւղը՝ յիշեալ Մելիք-Ռոստոմեանցներու բնակավայրը, որ կգտնուի Շամքոր գետի ձախ ափին՝ ձորավայրի մէջ, որ չորեքկուսէ շրջապատուած է լեռներով: Այնչափ նեղ և անձուկ է վայրն, որ նորա բոլորակաձև և ամփոփ հորիզոնով երկինքէ էլ նոյնպէս փոքր կերևի: Գիւղիս մօտակայ շրջապատող լեռներու անտառները, բոլորովին անհետացած լինելով, գիւղս կգտնուի բուսականութեամբ մեռած կեանքի մէջ, իսկ գիւղի ներքև Շամքոր գետէն հանուած առուով ուռճացած, պերճացած խաղողի և մրգեղենաց ծառաստանի այգիներ իրենց կենդանութեամբ բոլորովին հակապատկեր կներկայացնեն գիւղի մեռելատիպ կերպին: Գիւղացիներ, իրենց արածականներով մի ժամու ճանապարհ հեռու, հովասուն լեռնադաշտեր գնացած լինելով, բոլորովին տխրութեամբ համակուած էր Բարսում գիւղ: Գիւղիս մէջ կգտնուէին միայն քանի մի զառամեալ ծերեր և պառաւներ, զիրենք կերակրող քանի մի հաւերով:

Գիւղս կբաղկանայ 155 տուն զուտ հայ բնակիչներէ՝ 617 արական, 556 իգական: Ունի մի հին, փայտայարկ, խոնաւ և նսեմ եկեղեցի՝ *Ս. Աստուածածին* անունով: Այնչափ ցած է, որ իր առապար կողմի երեք պատերը թաղուած են հողի մէջ, գրեթէ հաւասար են դրսի մակերևոյթին: Արտաքուստ եկեղեցի լինելու ոչինչ նշան չունի, բացի մի տախտակաշէն զանգակատունէ: Սակայն երեք տարիէ ի վեր սկսած են շինել քարուկիր և հոյակապ եկեղեցի, ձեռներեցութեամբ և հոգատարութեամբ Մելիք-Ռոստոմեան արժանապատիւ Եփրեմ քահանայի, որ տակաւին անաւարտ կմնայ:

Սոյն քահանայն այս կողման հոգ. գործոց գործակատարն է, պաշտօնը ճշտութեամբ վարելու համար ստեղծուած մարդ՝ հասակ՝ վայելուչ, արծուաքիթ, ծանրաբարոյ, քահանայավայել համեստութեամբ, հետևապէս և պատկառելի մի անձնաւորութիւն է: Յայտնապէս կտեսնուի իւր վրայէն ազնիւ ցեղի արեանասութենէ գոյացած լինելն: Երբ հարց առաջարկուի իրեն, նա լուրջ դէմք կստանայ և կշռադատելով կպատասխանէ: Ամբողջ գաւառին յարգելի եղած է, առանց խտրութեան կրօնի: Կարծես ամէն մարդու բարերարութիւն ըրած լինի:

Գիւղն ունի երկու դասարանով մի գեղեցիկ վարժարան, որոյ մէջ կուսանէին երբեմն գիւղի մանուկներ, բայց քանի տարիէ ի վեր գիւղի ցանքերն բաւականացուցիչ բերք չունենալու համար վարժարան դադարած է:

Գիւղս գետափի վերի կողման այգիներու մէջ ունի մի փոքրիկ եկեղեցի՝ *Ս. Յովհաննէս* անուն, որուն կդիմեն ականջացաւ ունեցող ուխտաւորներ: Վարի կողման այգիներու մէջ կայ *Հռիփսիմէ* անունով խոնարհուած վանք և իւր շուրջը՝ փոքրաթիւ գերեզմանոց: Այգիներու ճանապարհի վերև գտնուող առուակի վրայ կայ մի խոնարհուած փոքրիկ եկեղեցի՝ հանդերձ գերեզմանոցով: Փիբեցի հանգուցեալ Յարութիւն վարդապետ Մամիկոնեան իւր ծերութեան ժամանակին յայտնել է սոյն գիւղացւոց, թէ «Մշու Ս. Կարապետ վանքէն բերածս մասունք թաղել են նոյն եկեղեցւոյ մէջ»: Գիւղիս հարաւային կողման տներու մէջ կայ մի փոքրիկ եկեղեցի՝ *Գիսաբեր* անուն: Անորմէ վեր՝ տներէն դուրս, կայ մի փոքրիկ կիսաւեր մատուռ՝ *Թառան եկեղեցի* անունով: Գիւղիս կալատեղեր բարձրացող ճանապարհի մէջտեղ կայ մի փոքրիկ մատուռ, փոքրիկ կաղնի ծառի ներքև՝ *Կաղնախաչ* անունով, որուն հայ ուխտաւորներէն աւելի կյաճախեն թուրք ուխտաւորներ յօդացաւ ասուած հիւանդութիւնէ բժշկուելու հաւատքով: Գիւղիս կալատեղւոյ հիւսիսային կողմն կան մի փոքրիկ եկեղեցի՝ *Խաթունքեր (քոյր)* անուն և գերեզմանոց:

Գիւղն ունի 8 ուսանող՝ 1-ը՝ Գանձակու գիմնազիոնը, 1 արհեստաւորաց, 1 քաղաքական, իսկ 4-ը՝ Փիբ գիւղի ուսումնարանը:

ԼԲ
Գառնակեր[133]

Ամսոյս 31-ին այցելեցինք ի *Գառնակեր* գիւղ այն պահուն, երբ արևն ի մուտ խոնարհուած էր:

Գիւղս կբաղկանայ 84 տուն զուտ հայ բնակիչներէ՝ 380 արական, 360 իգական: Գիւղն հաստատուած է Շամքոր գետի ձախ ափին՝ Բարսումէն քիչ վեր՝ շրջապատող լերանց ծնկան վերայ, որտեղ գետնափորի աջ ու ձախ կողմերն ևս դէմ առ դէմ ձոր լինելով, ուղղաբերձ չորս լերանց մէջ գիւղավայրն խաչաձև կերևնայ: Խաչաձև հորիզոնի պատճառաւ երկինքն էլ խաչաձև է, լաւ ևս է ասել՝ չորս խորդուբորդ, բարձր պատերու վրայ ձգուած

132 Գտնվում է Շամխորի համանուն շրջկենտրոնից 20 կմ հարավ՝ Շամքոր գետի ձախակողմյան ձորալանջին (ծ. մ. բարձր է 770-850 մ):

133 Գտնվում է Շամխորի համանուն շրջկենտրոնից 23 կմ հարավ՝ Շամքոր գետի ձախակողմյան ձորալանջին (ծ. մ. բարձր է 800-870 մ):

կապտագոյն քառակուսի առաստաղ ձևացեր է: Այս երկնային առաստաղն այնչափ փոքր է, որ աստղատան գլխաւոր լուսագունդերէն շատ քչեր կտեսնուէին: Այնպէս զարմանալի ձև ստացած են Գառնակերի գիւղատեղին և նորա հորիզոնը, որ եթէ, երբևիցէ գիւղաբնակութիւն իսպառ անհետացած լինի, խաչաձև վայրէն կարելի կլինի հաստատապէս գիւղատեղն մատնանիշ անել ապագայի մէջ:

Դոյն չորս բարձրաբերձ լեռներ աշխարհիս չորս կողմը մեր դէմ փակելով՝ մի անհերևակայելի մտաշրջութիւն կազմուեցաւ մեր մէջ: Կարծես թէ այդ վայրը մեր բնակած երկրագնդէն դուրս՝ մի այլ աշխարհ լինէր, և կամ մենք մի այլ նոր լոյս ընկած աշխարհի մէջ յանկարծ տեղափոխուած լինէինք: Այնպիսի՜ տրամադրութեան ներքև ընկած էր մեր յեղաշրջեալ միտքը, որ կարծես թէ մեր ծանօթ աշխարհի ունեցած բոլոր կառավարչական կերպեր, զանազան ազգաց իրարու դէմ լարած խաբուսիկ քաղաքականութիւններ, կերպ-կերպ պատրուակաւ տոգորուած նենգամտութիւններ, մարդկային բարոյականութիւնը քայքայող կեղծ ու պատիր վարմունքներ և գայթակղեցուցիչ կենցաղավարութիւններ, զիրար եղծանող օրէնքներ և վերջապէս սրբութեան կեղծ քողով գործուած սրբապղծութիւններ իսպառ արտահալած եղեր էին այս ատենական դար ներկայացնող պարզավայրէն:

Գիւղի միակ քահանայն՝ տէր Յովսէփ Պալեանց, Քրիստոսի հաւատարիմ փոխանորդն էր և երկնից պատգամաբերն այդ անբիծ հաւատաւոր ժողովրդեան համար: Նա ինքն է միանգամայն աստուածապաշտութեան և ժամասացութեան ուսուցիչ գիւղի մատաղ սերնդին: Գիւղի բնակչաց պարզ կենցաղավարութիւն կարծես թէ ցոյց կուտար, որ երբէք տեղւոյն ժողովուրդ հաղորդ եղած չէ եղեր աշխարհիս խաբուսիկ քաղաքականութեանը: Հոգևոր և մարմնաւոր իշխանութեանց հրամաններ անմիջապէս կատարուած էին և կկատարուէին փութով սոյն գիւղի մէջ՝ իբրև իրենց անհրաժեշտ պարտուց հատուցումն:

Գիւղի տներ հին նահապետական ձևով շինուած են, բայց փողոցներ թէև նեղսագոյն, սակայն մաքուր էին: Բնաւ մի աթոռ չգտնուեցաւ մեզ համար գիւղի մէջ, այլ փոխանակ աթոռի՝ բակերու առջև քառակուսի տաշուած հաստ գերաններ պառկեցուցեր էին կամ կոճղի բոլորշի կտորներ դրած՝ նստելու համար և կամ հողէ թումբեր շինած: Թթենեաց ծառերու ճիւղեր խառնուած էին տանց կտուրներու ցուիկներու գերանածայրերի հետ: Սքանչելի էր այդ աչքապարար տեսարանը և ամէն բան պարզ ատենական տարու կեանքի պատկերը կներկայացնէր:

Գիւղացւոց մտքեր զբաղուած են միմիայն իրենց ապրուստի միջոցներով, զի այր և կին ամենայն չարքաշութեամբ և անտրտունջ կերպով կկատարեն լծորդակցաբար իրենց պարտաւորութիւններ՝ ապրելու համար:

ԳԱՌՆԱԿԵՐ. հատված գյուղից (լուս.՝ Ա. Օհանյանի, 1980-ական թթ.)

Գիւղի անդնդախոր ձորի մէջ, իրենց գիներեր և մրգատու այգիներէն և բահէզներէն զատ, ուրիշ մշակելի վայր չունեն, զի վարելահողեր, ճիշտ մի ժամու ճամփայ հեռի, ուղիղ զառիվերութեան բարձր սարադաշտի վրայ կգտնուին, որտեղ և իրենց կալատեղերն են: Ուստի ամէն օր՝ հնձաժամանակ, մրջիւնի կարավանի պէս այր և կիներ շարունակ երթևեկութիւն կանեն այդ ահագին զառիվերութեան վրայ՝ գիւղից կալատեղեր և անտեղից ի գիւղ:

Մանաւանդ թէ քանի դժուարութիւն է, երբ շատեր իրենց արմտեաց հետ և դարմաններն էլ գրաստով կամ շալակով ի վայր՝ գիւղատեղին կիջեցնեն: Կարծես թէ սոցա սահմանուած լինեն երկնքէն ամէն տեսակ նեղութիւններ:

Գիւղի հանդէպ՝ գետի աջ ափին, կամուրջին կից, կայ մի *մատուռ*՝ ջղացաւութեան բժշկիչ: Արևմտակողմ՝ գիւղէն կալատեղ գնալու ճանապարհի զառիվերութիւն լրանալուն տեղը, երեք խաչեր կան՝ քովէ քով կանգնած *Կաղնո խաչ* անունով, որոնց վրայի զորացեալ մեծ կաղնին 3 տարի առաջ կտրեր են գիւղացիք:

Կալատեղերուն կից մի մեծ բոլորշի խաչաքար կայ, որոյ երեսին վրայ՝ թզաչափ լայնութեամբ և կէս կանգուն խորութեամբ ծակ փորուած, վնասաբեր անձրևային տարիներն կրակ կվառեն նոյն քարին վրայ՝ անձրև նուազեցնելու, իսկ երաշտ տարիներ ջուր կածեն գլխին՝ տարին անձրևաբեր ընելու:

Յիշեալ ծակ քարէն դէպի արևմուտ՝ մի վերստ հեռաւորութեան վրայ գտնուած աղբիւրի գլխին, երկու *խաչաքարեր* կան, քոսոտներ (բորոտ), նոյն աղբիւրի մէջ լողանալով, կսրբուեն:

Կալատեղեաց հանդէպ՝ հիւսիսային կողման քարափի գլխին, *դղեակի մնացորդներ* կերևին: Նոյն կալատեղւոյ արևմտակողմը՝ 1 1/2 վերստ հեռաւորութեամբ, սարագլխին կգտնուեն նոյնպէս դղեակի մնացորդներ, որ *Գեաւուր-Ղալէ* կանուանուեն:

ԳԱՌՆԱԿԵՐ. Ծաղկոցավանքը հարավ-արևմուտքից (լուս.՝ Ա. Օհանյանի, 1980-ական թթ.)

ԼԳ
Ծաղկոցավանք

Օգոստոս ամսոյ 1-ին դիմեցինք *Ծաղկոցավանք*, որ Գառնակեր գիւղէն վեր 1 1/2 վերստ հեռաւորութիւն ունի, կառուցուած է Շամքոր գետի ձախ ափին:

Սա մի փոքրիկ տաճար է, տաճար կըսեմ, զի առաքելական դարու ձևով շինուած է: Ունի մի մեծ, բարձր դուռ: Իւր մէջ կկրէ աւագ-խորանը: Տաճարի մէջ եկեղեցական պաշտօնեաներ դպիրներով պատարագ կմատուցանեն: Տաճարի մեծ դրան առջև շինուած է ժամատուն՝ աղօթաւոր ժողովրդեան նորա մէջ կանգնելու, որք տաճարի մեծ դռնով կտեսնէին նորա մէջ մատուցուած պատարագ: Հայաստանի մէջ աւանդութեամբ կպատմեն, թէ առաքելական դարու տաճարներ այս կերպ կշինուէին, այսինքն՝ տաճարի դռնէն դուրս և՛ ժամատուն, ինչպէս որ Վան քաղաքի մի քանի եկեղեցիներ և այն կողման վանքեր այդ կերպ շինուած են Արծրունեաց տիրապետութենէն առաջ: Ի նշան առաքելական դարու շինութեան՝ տաճարի մէջ՝ մի յայտնի տեղ, յից (յէց) ի յորմն խաչ կկանգնեցնէին և նոյն խաչի կենտրոնի ակն-խաչի ըսուած տեղ մի բևեռ կմխէին, ինչպէս որ ցայսօր ժամանակի կտեսնուի Վանայ «Յայն կոյս- ձորոյ» Ս. Աստուածածնայ տաճարի արևմտեան որմի խաչին վրայ: Նոյնպէս անդ ի Վանս Կարմրուորայ Ծաղկոցավանքէն դուրս՝ եկեղեցւոյ դրան հիւսիսային կողմ՝ մի մեծ կաղնի ծառի ներքև, կայ մի խաչակիր պատուհան, որտեղ ուխտաւորներ խունկ ու մոմ կվառեն և իրենց շորի կտորներ կկապեն նոյն ծառի ճիւղերի վրայ՝ ի փարատումն իրենց ցաւոց:

Ծաղկոցավանքէն դէպի վեր՝ 1/4 վերստ հեռաւորութեամբ՝ նոյն գետի ձախ ափին, կայ շինուած մի միաբանական *վանք*, որ ունի մի քանի անձուկ խցեր: Յիշեալ երկոքին վանքերու ամբողջ միջնավայր կկազմէ վանական այգին, որ երկոքին վանքերու միջի հորիզոնական գծէն սկսեալ իջանելով՝ կվերջանայ Շամքոր գետի ափը: Յիշեալ այգիի ստորին մասը գիւղացիք իւրացուցեր են վանքերու անմարդաբնակի եղած միջոցներին: Վանքն ունի երեսնաչափ օրավար վարելահողեր, որ այժմ վիճելի է քաղաքական կառավարութեան հետ:

Այն վանքերուն 8 տարիէն ի վեր վանահայր կարգուած է վանասէր Յովհաննէս ծերունազարդ վարդապետ Բարաղամեանց: Սա ունի երկու ծառայ, որք այգին կպահպանեն, և՛ բանջարանոց կմշակեն, և՛ մի ձի: Ո՛չ եզ, ո՛չ ոչխար և ո՛չ հողային կալուած: Ունի 6 մեղրի փեթակ, 20-ի չափ հաւ, տասն կտոր պղնձեղէն և երկու ձեռք անկողին, ահա նորա բոլոր ապրուստի միջոցներ, որոնցմով կտնտեսուի վանահայր ուտիք և պահք օրերը: Իւր բոլոր ստացուածոց պսակն կհամարուի մի փայլուն սամովար, որ իւր միակ մխիթարութիւն է՝ ընծայուած գանձակեցի պ. Մկրտիչ Նաբաթե անձէն:

Վանահայրն 73 տարեկան ժիր, ջլապինդ, արագաքայլ, փոքրիկ ծեր մի է, որ երբեմն կվազէ ալ, երբ վանքի կարևոր մի գործ մտքին կուգայ[134]:

Վանահօր ատամներ սպիտակագոյն են, քան միրուքի մազերն: Սա, լինելով այսչափ չքաւորութեան մէջ, 3 տարի առաջ 150 ր. փող տալով, այգիի վերի կողմը քարերով ցանկապատեր է, գիտե՞ս, ո՞ր տեղէն, իմ պ. ընթերցող, այսչափ փող տուեր է, և գիտե՞ս, թէ ինչո՞ւ իւր մէկ հատիկ ձին չի ծախեր երկու կով առնելու, իւր բարեկեցութեան համար, որպէսզի վանքի այսպիսի կարևոր պիտոյից համար այդ ձիով գնայ մեր բարեպաշտ շինական եղբայրներէն քանի մի փութ ցորեն մուրայ՝ այս կիսակործան վանքեր պահպանելու: Գիտե՞ս, իմ զուարճասէ՛ր ընթերցող, կիսակործան տաճարներ չեն պահպանուիր՝ խրախճանական սեղաններու շուրջը բազմած երգելով՝ «Ողջոյն տուէ՛ք մեր հայրենեաց կիսակործան տաճարներուն», այլ այսպիսի անձնուրաց, չարքաշ աբեղաներու թշուառակեցութեան նահատակութեամբ:

ԼԴ.
Գառնակեր գիւղի կալեր

Նոյն օրը Ծաղկոցավանքէն վերադարձանք ի նոյն *Գառնակեր* գիւղ և անմիջապէս ձիաւորեալ, զի օրն տարաժամեալ էր, բարձրացանք գիւղի կալեր:

Դեռ նախիրը չէր եկած: Տեղւոյն գործողութիւն խուճապ վիճակի մէջ էր, և ամէն գործողութիւն իւր կարգն ունէր: Կալաեզներ թող տուին: Հասակաւոր աղջիկներ անմիջապէս ջուր բերելու գնացին. ոմանք ցիր ու ցան խմբերով իրենց ծաղր ու քրքիջ բարձրացուցած, ոմանք առանձին-առանձին և տխուր, ոմանք սրտակից և հասակակիցներ զոյգզոյգ ընկերացած կերթային: Վերջիններէս մինը յանկարծ խորհրդաւոր խտիտ տուաւ իւր ընկեր աղջկան կողքին, որ բոլոր մարմնով ցնցուեցաւ և ամօթահար աչքի ճոթով այս ու այն կողմ դիտել սկսեց: Խտիտ տուող աղջիկն գողի պէս մատնացոյց արաւ առջևի կողմ նայելու, և երկուքն ի միասին սկսեցին քայլերնին յամրացունել՝ վայրկեան մի ուշ հասնելու, որպէսզի ցնցուող աղջիկ դաշտէն եկող փափախը ծուռ, գերանդին ուսին, հպարտ-հպարտ ձիու վրայ հեծած ու ձին կատաղեցնող ու փնչացնող երիտասարդին տեսնայ ու դիտէ կշտանալու չափ: Ձիաւոր երիտասարդը, այս ամէն տեսնալով, իւր վրայ նայող աչքին մի համապատասխան հայեացք ձգեց և կամեցաւ իւր ձին օդաչու ընելու հեռանալ: Սոքա արդէն նշանուածներ էին:

Հեռուէն ամպի պէս փոշի բարձրացնող նախրի կովեր, իւրաքանչիւր իւր հորթին բառաչելով, նախապէս աւետեցին իւրեանց վերադարձը: Հորթերու նախիր մէկ ժամ առաջ արդէն եկած և փոքր աղջկանց հոգացողութեամբ ցանկապատ բակերու մէջ զետեղուած էր, որ նախիրի գալու ժամանակ չխառնուէր նախրի մէջ և չծծէր իրենց մայրեր, առանց տանուտէր կնոջ ագահ կթոցն փրփրացնելու: Կալապան մեծ աղջիկներ ու կիներ թող տուին անմիջապէս իրենց կալապանական ձեռքի գործ, իւրաքանչիւր աղջիկ նախիրէն զատեց իրենց կովեր, կիներ տնէն կթոց բերելու փութացան, փոքրիկ աղջիկներ հորթեր մէկիկ-մէկիկ թող տուին բակէն դուրս գալու: Կթող կինն մի փոքր ծծեցուց հորթին, որ կովի պտուկներ կակղեն ու թուլանան կթուելու: Կինն կթել սկսեց: Մեծ աղջիկ, որ կովի գլուխ բռնած էր, նորա պոզատակեր, ճակատ և պուճուճակ (ծոծրակ) կքերէր իւր մատներով, որ կովն այդ հեշտասիրութենէն գրաւուած հանդարտ մնայ կթուելու: Բայց փոքրիկ, զուարճասէր սերունդ, մի-մի վարոց ձեռքերնին բռնած, անցնող նախրի երինջներուն, արջառներուն, զամբիկ ձիերու մտրուկներուն խռիկ տալով (հալածել), նոցա ոստիններու վրայ զուարճացած, աղմուկ կհանէր իրենց ճվճվոցներով: Մեզ հետ նստող ծերունի և պատկառելի անձինք որչափ ջանացին սաստել, որ լռեն, ի հարկէ ի պատիւ մեր, նոքա բնաւ յետ չկասեցան իրենց զուարճասիրութենէ: Սոքա թագաւորական հրովարտակին նշանակութիւն չտուող անմեղ հրեշտակներէն էին:

Նախրակիթ գործէն լմննալէն զկնի, գործօն կանայք և աղջկունք սկսեցին վերջնալուսով աւուր կասածն կալերն թեղել, ոմանք սրբուած ատոր ցորեան և գարին չուալներով ամբար տանել, այլք քամուած (էրան եղած) յարդն կալատակի մարագ լեցնել, այլք ճախաւելով (ցախաւել) կմաքրէին կալատակ՝ վաղուեան աւուր աշան (կալատեղի վրայ պարզուած որայն) պատրաստ անելու: Վերջնալուսով ընելու գործեր լմննալուն պէս ընթրիք արին և բնութեան օրինակ այդ հաւատարիմ հպատակներ, առանց Մորփէոսի թմրեցուցիչ ներգործութեան սպասելու, քնացան: Կոպեր ծանրացնող նիրհն, աստուածային օրհնառաք աշխատասիրութեան, ինքնին հետևեց՝ քաղաքացւոց դժխէմ սովորութիւնը այպանելով: Արշալոյսին ամէն կարգի աշխատաւորներ (բացի մանուկներէն) վեր կացան իրենց խոնջեալ անդամոց այնպիսի կազդուրմամբ, որ նախանձելի է փափկակեաց քաղաքացի հարուստներուն, որք անհանգիստ քնով աւելի կթմրեն և կխոնջեն, քան թէ կկազդուրուին: Արևածագէն առաջ հարուստ գիւղացիք, ձիերնին հեծած, գերանդին ուսին, աղքատներ հետիոտն արտօրայք գնացին: Կանայք և աղջկունք կալատեղի վրայ որաներ աշան ըրին, որ մի փոքր չորանայ՝ դիւրաւ կասուելու: Կալեր կասուել սկսեցին: Առաջին տարիներ այս կողմի բոլոր գիւղերը եզներով կշրջեցնէին կամերը, իսկ մօտ տարիները, Ռուսաց տիրապետութենէ զկնի, իւրաքանչիւր ձիու ետև մի կամը քաշ արած, ոմանք աղջիկներ 2-3 ձիոց սանձեր ի բռին,

134 «Իսկ Բարում գիւղի կալատեղերը գնալու ժամանակ մեզ ուղեկցող ձիաւորներու ձիարշաւին Խաչէն ալ յետ չմնաց» (ծնթ.՝ հեղինակի):

միւս ձեռքին՝ խարազան, կալամէջ տեղ կանգնած, ձիերը կվարեն շրջելու՝ իրենք էլ փոքր պտոյտ տալով նոցա հետ: Կանայք, հորսելին բռնած, անդադար կուղղեն կալամիջի աշանի խորդուբորդ եղած տեղերը, կալափերն վրայ կուտան և աշանը կշրջեն՝ խոշոր մնացած ցողունները կալերեսը հանելով (օրական 14 ժամ աշխատութիւն ընել, իգական սեռի համար, հաւատալի՞ է քեզ, քաղաքացի՛ ընթերցող):

Արևածագէն պահ մի ետք նախիր եկաւ գիւղագլուխ կթուելու: Կանանց և աղջկանց մի մասն այնտեղ դիմեց, բայց, ափսո՜ս, որ մենք էլ հեծանք և հեռացանք՝ *Ջագիր* գիւղ գնալու, թող տալով այն հովասուն կալատեղը, որ այնչափ բարձր էր, որ արեգակը ուղիղ հորիզոնական գծով բարևեց մեզ առաւօտեան: Երբ մենք ճանապարհին կանանց ծանր աշխատութեան մասին մեր նկատողութիւններ կիաղորդէինք գործակատար Եփրեմ քահանային, նա պատասխանեց մեզ, թէ շատ օգտակար է կանանց աշխատութիւնը, զի նորանով թէ՛ իրենք կուժովանան, թէ՛ իրենց գեղեցկութիւն ու թարմութիւն ընդ երկար կպահպանուի, հակառակ քաղաքացի կանանց, որք շուտով կթառամին, և թէ՛ աշխատութեամբ նոցա կազմուածքը ջլապնդելով՝ ծննդեան ժամանակը թէ՛ երկունք թեթև կլինի, և թէ՛ հարիւր զաւակաբեր կանանցից մինն հազիւ մանկաբարձի կկարօտի: Սի՞թէ այդպէս, ըսի ես անոր: Հապա՜, պատասխանեց նա, զի բնականապէս ինչպէս որ կովեր, ոչխարներ ենք, իրենց կծնանին, առանց ուրիշի օգնութեան, այնպէս էլ գիւղի կանայք: Օրինակ, ըսաւ տէր Եփրեմ, գիշեր՝ եկեղեցին գնալիս, տեսայ, որ մի կին իւր անպատ բակի մէջ տղան ծնանելիս, ինձի որ տեսաւ, հեռացաւ՝ ծնած երեխան մնաց տեղն ի տեղ լաց լինելով: Գառնակերցի Յովսէփ քահանայն վրայ բերեց. «Ես այգին գնալիս տեսայ մի կին, միայնակ իւր այգւոյ մէջ մի մեծ ընկուզենիի ետև քաշուած՝ ծնաւ իր զաւակը»: Դարձեալ տէր Եփրեմը մէջ մտաւ. «Մի կին միայնակ սար գնացած էր շուշան քաղելու (աղաջրի մէջ դնելու հաստացողուն բանջար մի է՝ պահոց կերակուր, որուն վանեցիք մանդակ կըսեն) և այնտեղ իւր ծնած տղան, քաղած շուշանի հետ միասին շալակելով տուն բերաւ, զոր մկրտելիս անուն Շուշան կնքեցինք»:

ԼԵ
Ջագիր[135]

Ամսոյս 2-ին հասանք *Ջագիր* գիւղ, որոյ բնակիչք 54 տարի առաջ 37 տուն, *Գիլամբարէն* և փոքր մաս մի զանազան գիւղերէն այստեղ գաղթելով, այժմ 104 տուն զուտ հայ բնակիչներ եղած են՝ 437 արական, 369 իգական: Գիւղն ունի մի եկեղեցի՝ *Ս. Աստուածածին* անունով[136]: Գիւղասահմանի տեղ լեռնադաշտ է, և ունի արգաւանդ հողեր, բայց զուրկ անտառներէ:

ՋԱԳԻՐ. հատված գյուղից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1980-ական թթ.)

Գիւղացիք ունին լոբիի և գետնախնձորի բահէզներ: Պտղատու ծառերէն աճեր են այստեղ ձորերի մէջ միայն թթենին և ընկուզենին: Խելացի մտածութեամբ մշակեր են և՛ վայրի տանձենին, և՛ խնձորենին, զի լեռնցի պտուղներ լեռնային կեանքի դիւրաւ կյարմարուին:

Գիւղի տեսարանը զուարճալի կկացուցանեն ուռի և բարդի մշակուած ծառեր:

Հայոց վարժարաններ անցեալ 1884-ին ընդհանրապէս փակուելէն առաջ 2 տարւոյ չափ ուսուցիչ ունեցեր է այս գիւղ: Այն ժամանակ գիւղիս ժամասացութիւնը սովրեցնող վարժարան խափանուեր է՝ ընդհանուր վարժարանաց փակման պատճառով, որ և կտևէ մինչև ցայսօր: Ժամասացութիւնը կկատարէ միմիայն քահանայն, իսկ երբ պատարագ ընելու հարկ լինի, Գառնակեր գիւղէն կհրաւիրուեն դպիրներ, որք շատ անգամ գալու անկարող լինելու համար պատարագ կխափանուի (ինչպէս իրենք ասացին): Աստուա՜ծ, դու չխափանես «զայս արարէք առ իմոյ յիշատակ» քո աշխարհակեցոյց պատուէրդ...

Գիւղիս արևելակողմ՝ մի վերստ հեռաւորութեամբ, կայ մի մատուռ՝ *Կարմիր եկեղեցի* անուամբ, որտեղ կդիմեն լուսնոտներ և քամոտ հիւանդներ: Եւ արևմտեան կողմ՝ 2 վերստ հեռաւորութեամբ՝ մի մատուռ, որոյ մէջ կայ և տապան՝ *Կենտ ծառ* անունով, ուր կդիմեն հիւանդներ:

Բարսում և Գառնակեր գիւղերու բնակիչները իրենց կալատեղեր գնացած լինելու համար գիւղերու մէջ գրեթէ ոչ ոք չէ մնացեր, բացի տնանկ ծերունի այրերէն և պառաւ կնիկներէն, ուստի և՛ քարոզ խօսելու, և՛ կարգադրութիւն ընելու յարմարութիւն

135 Գտնվում է Շամխորի համանուն շրջկենտրոնից 16 կմ հարավ-արևմուտք (ծ. մ. բարձր է 1300-1420 մ):

136 Ծխական եկեղեցին ԺԷ-ԺԸ դդ. կառույց է: 1985 թ. թաղն ամբողջությամբ փլվել էր (մանրամասն տե՛ս **Կարապետյան Ս.**, նշվ. աշխ., էջ 520-525):

չկար: Վասնորոյ յիշեալ գիւղերու քահանայք, տանուտէրեր, իրենց փոխներ և իշխանաւորներ (ինչպէս որ իրենք կըսեն համբա մարդիկ[137]) մեզ հետ կշրջէին Ջագիր գիւղի եկեղեցւոյ մէջ՝ քարոզ և խրատներ լսելու, որպէս թէ իրենց գիւղերու կալատեղերու մէջ առ տնին խօսածներս քարոզ և խրատ չլինէին:

Ուստի Ջագիր գիւղի մէջ մեր քարոզ ու խրատներ խօսեցանք՝ վարժարանաց վերականգման համար մեր սովորական միջոց ցոյց տալով, այն է՝ կալեմաս հաւաքել: Ըստ մեզ՝ վարժարանի համար այս միջոցը փող հաւաքելէն աւելի յարմարագոյն է գիւղացւոց համար, զի նոցա շրջանի մէջ սովորաբար հազիւ փող կգտնուի: Զի եթէ 2 աբասի փող ուզելու հարկ լինի, խիստ տհաճութիւն ցոյց կուտան, իսկ եթէ 2 աբասիի փոխարէն մի փութ ցորեան, որ 4 աբասի կանէ, մէն մի փութն ուզելու լինես, սիրով յանձն կառնեն: Պատճառն յայտնի է:

Ջագիր գիւղի եկեղեցւոյ մէջ խօսուած քարոզէն այնչափ զգացուեցան բարսումեցի և գառնակերցիներ (չնայելով, որ եկեղեցիէն դուրս մի քանի անգամ լսեր են աւելի ազդու քարոզ), դուրս գալուն պէս ուխտեցին գիւղը վերադառնալիս անմիջապէս կալեմաս հաւաքելու սկսեն ի նպաստ վարժարանին: Նոյնպէս ուխտեցին և ջագիրցիք:

ԼԶ
Գետաբէկի ճանապարհին

Երբ կդիմէինք դէպի Գետաբէկ, կէս ճանապարհին մեզ դիմաւորեցին տեղւոյն գիւղացի և քաղաքացի (որք տեղւոյն պղնձահանքի համար գիւղաքաղաք կկազմէին) 50-ի չափ զինակուռ երիտասարդներ՝ հայկական դրօշակով, որոնց կառաջնորդէր երիտասարդ և նորասէր Շմաւոն քահանայն Բօրեանց:

Այնտեղ՝ մարգագետնի վերայ, սառնորակ աղբիւրի գլխին պատրաստած ճաշն վայելելէն զկնի, սկսեց յառաջ խաղալ երիտասարդական գնացքը, որոյ ձիարշաւի փոշին, մինչև գիւղ հասնելը, շատ անգամ մեր ամբողջ կարաւան կծածկէր:

Մի քանի խօսք մեզ դիմաւորողներու շնորհքի մասին: Գետաբէկ գիւղէն մեզ դիմաւորող հեծեալներ իրենց ձիարշաւի զանազանակերպ կիրթ խաղերով մեզ կուրախացնէին ու կզարմացնէին: Մերթ իրենց արագաձեռն զինավարժութիւններ կներկայացնէին, իրենց կրած զէնքերի փոփոխ գործածութեամբ, ըստ պահանջին, ըստ տեղւոյ, մերթ որպէս թէ թշնամի մօտեցած լինի, հրացան ուսին անցնելով, ատրճանակ կգործածէին: Մերթ՝ որպէս թէ իրարու հակառակորդ թշնամի իրարու աւելի մօտիկցած միջոցին արագաձեռնութեամբ ատրճանակն գօտիի տակ անցնելով, սուր հանած, ճապուկն դարձուածքներով իրարու վրայ կյարձակէին: Միոյն բարձրացուցած սպառնացող սրի հարուածէն ազատուելու համար միւսն դիւրաթեկն շարժմամբ, ձիու աջ կողմէ ի ձախն, ձախէն ի յաջն և փորի տակն անցած, սրի հարուածն վրիպեցնելով, ինքն յանկարծ կրկին ձիու մէջքին նստած հակառակորդին հարուածներ կուտար՝ ձիէն վայր ձգելու, սպանելու:

Եւ երբ այս ամէն տեսնալով սաստիկ զգացուած մեր մտքի մէջ կնկարագրէինք այդ ազգօգուտ և հոգեգրգիռ խաղեր՝ ցոյց տալ ընթերցողին հայու շնորհքն և ճարպիկութիւն, որ այդ խարտեալ և սևաթոյր գանգուր մազերով, կրակ ու բոց աչքերով, ճկուն կազմուածքով երիտասարդներ գործեցին իրենց թեթև թաթուլ, ճոխարշաւ ձիերու վրայ... ափսո՜ս, որ նոցա մի անվայել արարք սառն տրամադրութեան ներքև ձգելով զիս՝ մտակապ ըրաւ նկարագրելու: Ինչո՞ւ և մինչև ցայժմ չեմ կարող նկարագրել, գիտե՞ս, հետաքրքի՛ր ընթերցող, երբ մեր և մեզ դիմաւորողներու մէջ սիրալիր ողջունի և ջերմեռանդութեամբ աջ համբուրելու ազգային յատուկ սովորութեան փոխադարձութիւններ կատարուեցան՝ աղբիւրի գլուխ, բնութեան կանաչ գորգերու վրայ մեզ բազմեցնելու ամէն կարգ ու սարք կատարեցին, զմեզ աւելի և աւելի գոհ ընելու նպատակով, այնուհետև ի՞նչ ընեն, որ հաւնիս, ընկերասէ՛ր ընթերցող... Քաղաքացիներ, զատուելով գիւղացիներէն, ուրիշ երախան կազմեցին, գիւղացիներն ուրիշ, մենք՝ հոգևորականներս, երեսփոխաններու հետ, յակամայից ուրիշ երախան մնացինք: Իւրաքանչիւր երախան՝ իւր պարզած սեղանասփռոցի վրայ իւր բերածը կերաւ, իւր առանձին սեղանակցի կենաց խմեց, երգեց, օտար ազգի պէս իրարմէ զատուած պահք և օրոճ բռնողներուն յատուկ խորշումով, հրէից և հեթանոսաց խտրութեամբ: Այս բաժանումն տեսնալով՝ իմ հոգին խռոված էր: Ջայրոյթէս այլևս չէի ուզեր նայել ինձ սիրելի երիտասարդական այդ ակմբին վրայ: Պահ մի առաջ իրենց ցոյց տուած շնորհք չէի ուզեր մտաբերել: Մինչև գրիչ ձեռքս առած ժամանակն անգամ չեմ ուզեր ոչինչ խօսել նոցա վերայ, բայց անոնց միջէն մի յոյժ կարի ձիավարժ երիտասարդի կրթութեան վերայ փոքր ի շատէ տեղեկութիւն չտալ՝ մեղանչել է:

Ձիարշաւական հանդէսներու մէջ ես հազարաւոր ձիավարներ տեսած եմ ժամանակին, բայց սորա նմանին չէի հանդիպեր: Վերոյգրեալ երիտասարդաց ձիարշաւական և զինավարժական խաղարկութեանց կատարելագոյնն էր սա՝ գանձակեցի Աբգար Լաչինեանցն: Ինքն իւր ձիէն, ձին իրմէն վարժ: Ձին իւր հեծեալի տակ, նորա ամէն մէկ շարժման նպատակի նշանակութիւն գիտնալով հանդերձ և մտադիւրութեամբ կարշաւէր՝ տիրոջն նորանոր ցոյց տուած նշաններուն ծառայելու: Հեծեալն գիտես թէ ձիարշաւի միջոցին ձիէն բաժ-

137 «Համբա մարդիկ, այսինքն՝ առաջին կարգի հարուստներ, որ առաջնակարգ հողատէրեր են և առաջնակարգ հարկ կվճարեն» (ծնթ.՝ հեղինակի):

նուած օդի մէջ սաւառնող մի հրեշտակ էր: Յանկարծ ինքն ձիու տակ, ձին իրեն տակ, աջէն ի ձախ, ձախէն ի յաջ շրջող ճախարակի անիւ կդառնար: Փոքր ասպարեզի մէջ փախչող թշնամւոյ ետևէն կհասնէր, մէկ ոտն իւր ձիու ասպանդակի մէջ թողած, իսկ ինքն յանկարծ թշնամու ձիոյ գաւակին հեծած կտեսնայիր, ձին թշնամւոյ ձիէն անբաժան հաւասար զուգընթացութեամբ արշաւելով: Ինքն թշնամու ետևէն նորա թեր պարաւանդել[138] կսկսէր կամ դաշոյն քաշած՝ նորա կողին մէջ կմխէր, եթէ չկամենար թշնամին կենդանի բռնել: Ես, զարմացման մէջ ընկղմած, մտքիս մէջ գոչեցի. «Աղասի՜, կենդանացի՜ր, տե՛ս, քո որոնածներէն մինն քիչ մատնացոյց անեմ, որ Հասան խանի սիրտը կրծքէն դուրս քաշէն քեզ թաւազա անելու[139]»:

ԼԷ

Գետաբէկ[140]

Ամսոյս 3-ին, Ջագիրէն *Գետաբէկ* գիւղ հասնելով, իջևանեցինք Տէր Շմաւոնի[141] տանը: Գետաբէկը կբաղկանար 44 տուն զուտ հայ բնակիչներէ՝ 178 արական, 149 իգական: Սոցա սահմանի մէջ կայ պղնձի հարուստ հանք, որ 20 տարի առաջ գերմանացի Սիմէնս անուն մի անձնաւորութիւն կապալով մեր առած է տեղական իշխանութենէն և հրահալելու համար գործարան հաստատեր է յիշեալ գիւղատեղւոյն մէջ[142]: Ուստի գետաբէկցիք պարտաւորուած թող տուեր են իրենց հայրենական գիւղատեղի շինութիւններ, եկեղեցին և գերեզմանոց և գաղթեր են 2 վերստ հեռու՝ նոր գիւղատեղւոյ վրայ բնակավայր հաստատեր են՝ հին գիւղի անունը նորի վրայ կնքելով: Հին գիւղատեղւոյ գերեզմանոց և եկեղեցին սեպհականութիւն մնալով գիւղացւոց՝ նոյն տեղ կկատարուեն իրենց հոգևոր պէտքեր: Յիշեալ եկեղեցին փոքրիկ և կամարակապ է՝ *Ս. Գէորգ* անուամբ, որ շրջապատած է ընդարձակ գերեզմանոցով:

Պղնձահանքի գործարանի կառավարիչ բարեկիրթ Պօլտոն անձը չի խղճահարեր մեր ազգային գերեզմանոցի եզերքներ քանդել և ննջեցելոց կմախքներ դուրս թափել, խանութներ շինել տալ այս ու այն վաճառականներուն, խանութավարձ առնելու համար, որով իւր իրաւանց սահմանից դուրս գալով՝ մեր ազգային սրբավայր կպղծէ՝ մի ամբողջ ազգի սիրտ վիրաւորելով:

Բաւական ժամանակէ ի վեր Գանձակու Հայոց հոգ. կառավարութեան հրամանով Գետաբէկու Շմաւոն քահանայն դատ կվարէ յիշեալ կառավարչին հետ: Քահանայն խանութներու շինութենէն առաջ զգացուցեր է կառավարչին, թէ իւր այդ մտադրեալ ձեռնարկութեամբ հայոց կրօնական զգացումներ վիրաւորած կլինի: Ի՞նչ արժանավայել պատասխան կյուսաս, կրօնասէ՛ր ընթերցող, այդ քաղաքակրթեալ անձի դրամախոհութենէն ու «Առաջուց խօսք տուած իմ խանութպանին, ուստի չեմ կարող խօսքս յետ առնել»:

Ի՜նչ զարմանալի իրաւագիտութիւն: Այլոց իրաւունք կողոպտել փոքր տմարդութիւն կհամարէ, քան իւր անիրաւացի բանատուութեան յետ առնել: Յիշեալ քահանայի ըսածին նայելով՝ նոյն պարոն այժմ որպէս թէ զղջացեր է և կառաջարկէ քահանային, թէ «Գերեզմանատեղւոյն վրայ շինուած խանութներու վարձ ես կառնեմ, իսկ նոցա գետնավարձ դուք ստացէք», այն է բերանացի խոստումով... Ի՜նչ մանկական խաղ: Այնուհետև յիշեալ քահանայն, ճարահատ լինելով, ննջեցելոց կմախքներ կթոցի մէջ ժողովելով, կդնէ եկեղեցւոյ խորանի մէջ իբրև ապացոյց և ապա կսկսէ դատ բանալ կառավարչի դէմ և պատիժ կպահանջէ մարմնաւոր իշխանութենէն՝ նոյն սրբապղծութեան համար: Իսկ դատաւորն քահանային պատասխաներ է, թէ «Գերեզմաններ շատ հին լինելու համար չարժէ դատ վարել և վիրաւորել կառավարչին»: Առ այս հարց է առաջարկեր Շմաւոն քահանայն, թէ որչա՞փ ժամանակամիջոց գերեզմաններ հինցած և իրենց յարգ կորսնցուցած կհամարուին օրինաց առջև: Սոյն խօսքին դիմաց դատաւորն տարակուսեալ և պարտասեալ կկրկնէ՝ դարձալ ի պաշտպանութիւն կառավարչին, ոչինչ, չարժէ: Այսպիսի դատաւորաց համար է մեր նախնեաց առածն, թէ «Ուր ոսկին բարբառ է, անդ ամենայն լեզուք լռին»: Այս առածն ի հարկէ մասնաւոր մարդկանց համար լինել կարծած էինք և չէինք յուսար, որ օրինաց արդար լեզուն ևս կխոնարհի և կլռէ ոսկւոյ բարբառի առջև:

Հին Գետաբէկի մէջ գործարան հաստատուելու պատճառաւ բաւական թուով գանձակեցի առևտրական հայեր կան այժմ: Սորանց հոգևոր պէտքեր ևս կմատակարարէ յիշեալ Շմաւոն քահանայն, որ այս կողման հայ ժողովրդաց մէջ նախանձելի ժողովրդականութիւն կվայելէ: Նոր Գետաբէկի հայեր սակաւաթիւ լինելու պատճառաւ չեն կարող վարժարան բանալ, բայց ոմանց որդիք ժամասացութեան համար կպատրաստէ յիշեալ քահանայն:

Գիւղի արևելահարաւ կողմ կգտնուի ուխտատեղի մի՝ խաչքար՝ *Կաղնախաչ* անունով, որուն կհովանաւորէ դարձեալ մի հինաւուրց և մեծ կաղնի ծառ: Երկրորդ ուխտատեղի մի ևս կայ գիւղի հարաւային կողմը՝ մի վերստ հեռաւորութեամբ, բլրակի գլխին: Սա ո՛չ խաչ ունի և ո՛չ այլ ինչ, բայց մի փոքրիկ շինութեան փլատակ՝ *Ղուտրի* անուն: Սորա ուխտատեղի լինելու գոյութիւնը արդիւնք է եղեր երազատեսութեան:

---

138 Կապել, շղթայել:

139 Հյուրասիրել, մատուցել:

140 Համանուն շրջանի կենտրոնն է: Գտնվում է Գանձակից 48 կմ, Շամխորից՝ 35 կմ հարավ-արևմուտք (ծ. մ. բարձր է 1380-1500 մ):

141 Շմավոն Բորյանը քահանայագործել է 1890-1903 թթ. (**Կարապետյան Ս.**, նշվ. աշխ., էջ 76):

142 «Սիմենս» ընկերության մասին մանրամասն տե՛ս նշվ. աշխ., էջ 69-71:

ԼԸ
Ղալաքեանդ[143]

Օգոստոսի 5-ին թող տալով Գետաբէկ գիւղը՝ տեղւոյն քահանայի առաջնորդութեամբ *Ղալաքեանդ* անունով թրքաբնակ գիւղի հին բերդի[144] գլուխ բարձրացանք, որ շրջապատուած է ամրապինդ պարիսպներով և մարտկոցի բուրգերով: Սոյն բերդ ի հնում մեր նախնիք կառուցեր են՝ ի պաշտպանութիւն նորա ստորոտ գտնուած Ղալաքեանդ գիւղաքաղաքին: Գիւղաքաղաք կըսենք, որ կստուգուի իւր մէջ գտնուած թէ՛ կանգուն և թէ՛ կործանուած վեց եկեղեցիներով[145]:

Գետաբէկի պղնձահանքի արտադրութեան մի մասը 2 ժամու հեռաւորութենէն երկաթուղիով կբերուի սոյն գիւղ՝ հրահալելու, զի սոյն տեղ ևս գործարանի մի ճիւղ հաստատուած է անտառի մօտաւորութեան համար:

Բայց մենք չմոռանանք մի միջնադէպ յառաջ բերելու: Փիբ գիւղի հարաւակողման անտառախիտ լեռան, որ պինդ ապառաժ քարից կբաղկանայ, նորա վերայ շատ ծակ քարեր կտեսնուին՝ զանազան լայն ու նեղ ձներով և առանց պատառուածք ունենալու, մարդ կկարծէ, թէ հաստ քղերով ծակուած լինեն: Այդ քարերու ծակ լինելու մասին հարց բարձրացաւ մեր այնտեղ եղած ժամանակ, թէ ի՞նչ պատճառաւ այդ ծակեր գոյացած են: Մենք տարակուսուած կանգ առինք մեր մտախուզման մէջ Քսանթոս փիլիսոփայի նման: Եւ որովհետև Եզովպոսի նման մի ծառայ էլ չունէինք, որ հարցն անոր յանձնէինք լուծելու, ուստի և հարցն մնաց անլուծելի, մինչև Ղալաքեանդ գիւղի բերդ բարձրանալն:

Սորա նոյնատեսակ ապառաժները նոյնատեսակ ծակեր ունէին, ինչպէս Փիբ գիւղինը:

Յիշեալ բերդի լերան լանջի վերայ, թէպէտ այժմ բնաւ անտառ չի տեսնուիր, բայց ստուգուեցաւ, որ առաջուայ ժամանակ անտառ եղած է այնտեղ, և անտառի ծառերն քարերու վրայ բուսած և նոցա արմատներ քարերին ծակելով խոր իջած են, հետևապէս որչափ որ ծառեր հաստացած են, հետզհետէ և քարածակերը մեծցած են ծառերու հաստանալու չափով: Զի մենք տեսանք այնտեղ մի արշին շրջագծի լայնութեամբ վերոյիշեալոց նման ծակ քար, որուն մէջ տակաւին կմնար հին ծառի փտած բունը ըստ որպիսութեան խոտածածկին, և սոյն քարածակն չունէր պատառուածք: Մենք այսպիսով համոզուած ենք, թէ՛ Փիբ գիւղի և թէ՛ այստեղաց ծակ քարեր պատճառուած են ծառերու արմատներէն:

143 Գտնվում է Գետաբեկի շրջկենտրոնից 11 կմ հարավ-արևմուտք՝ Շամքոր գետի ձախ վտակի՝ Փառիսոսի ափին:

144 Համապատասխանում է Փառիսոս բերդին. մանրամասն տե՛ս **Կարապետյան Ս.**, նշվ. աշխ., էջ 127-128:

145 Սամվել Կարապետյանը 1982 թ. արձանագրել է միայն երկու եկեղեցու գոյությունը (նշվ. աշխ., էջ 127):

ԼԹ
Չարեքայ վանք

Օգոստոսի 5-ին Ղալաքեանդէն հասանք ի *Չարեքավանք*՝ 5 ժամէն աւելի ձիու վրայ նստելով: Չարեքայ վանք շինուած է Շամքոր գետի ձախ ափին՝ խորագոյն ձորի մէջ, որ արևմուտքէն արևելք երկարացած է: Վանքն ամէն կողմէն երկու ժամու ճանապարհաւ հեռու է ամենայն մարդաբնակութենէ և դրացիական օգնականութենէ: Ի հնումն միաբանական ուխտի տեղ եղած է, որ կգուշակուի հիւսիսային և արևելեան կողմի վրայ եղած տասն և հինգ միաբանական կանգուն մնացած խուցերէն՝ ի բաց առեալ քանդուածները: Եկեղեցին, գաւիթ, դարպաս և մեկուսի զանգակատուն նոյնպէս և խցերն, տնտեսատուն, մառան, փռատուն և սեղանատուն քարուկիր և կամարակապ շինուած են մէկուկէս թիզ երկարութեամբ և մէկ թիզ լայնութեամբ նեղ լուսամուտներով: Սեղանատան 32 արշին երկարութիւնէն կհասկացուի, որ վանքն բազմաթիւ միաբանութիւն ունեցեր է իւր ճոխ ժամանակին, իսկ այժմ ունի միայն մի վանահայր՝ արժ. Աստուածատուր վարդապետն Տէր-Յարութիւնեանց, որոյ մականունը շրջակայ գիւղօրէից պարսիկներ Քոռ-օղլի դրած են իւր արի անձնապաշտպանութեան և վանքի և նորա անտառներու պահպանութեան համար:

Վանահայրն առանց վանաորդի վարդապետներու ունի միայն երկու ծառայ և մի անտառապահ, ընդամէնն չորս անձինքներէ կբաղկանան վանքի ամբողջ բնակիչներ, չըսեմ միաբանութիւն: Ինչպէս վերև ըսինք, վանքն, 2 ժամու ճանապարհաւ հեռու լինելով մարդաբնակութենէ, յանդուգն անձնապաստանութիւն է 4 հոգւով բնակել այսպիսի անպաշտպան և անապահով վիճակի մէջ, զի վանահայրն վայրենութեանց վայրենութեան տեղի է, ուր աւելի առիւծներու յարմար է, քան այսպիսի սակաւաթիւ մարդկանց բնակավայր լինելու:

Ռուսաստանի հայոց վանքերու մէջ միայն Սևանայ անապատ վանահայրական անուն կրելու իւր իսկական նշանակութիւնն ունի, զի վանահօր հովանաւորութեան և խնամոց ներքև կգտնուին և վանական որդի վարդապետներ, որոնք ամէնքն ի միասին իբրև ժառանգ նոյն վանական հաստատութեան ամէն ջանք և աշխատութիւն ի գործ կդնեն վանքն չէն պահելու, ճոխացնելու, և հարկ եղած ժամանակին կկարկատեն և կնորոգեն իբրև իրենց ժառանգութիւն:

Այսպէս են Տաճկաստանի հայոց գլխաւոր վանքեր, որք ունեն վանականութեան կանոնական օրէնք: Կյիշեմ Վարագայ և Տարոնի Ս. Կարապետի վանօրէից կանոնագրութիւն, որ քարտեզի նման շրջանակի մէջ առաջ կախեր են վանահօր սենեկի պատէն՝ իբրև յիշեցուցիչ վանահօր և միաբանութեան պարտուց և իրաւանց փոխադարձ յարաբերութեանց կանոն: Կարծեմ թէ Ս. Էջմիածնի Մայր Աթոռ տակաւին չէ ունեցեր ազգային սոյնպիսի

ԳԵՏԱԲԵԿ. Չարեքավանքը (լուս.՝ Ա. Օհանյանի, 1980-ական թթ.)

սահմանադրական օրէնք՝ բացի բոլոժէնիայից, որ ցոյց տայ հովուողի և ստորադրելոց պարտուց և իրաւանց փոխադարձ սահմաններ:

Հետևապէս և նոյն Մայր Աթոռի ստորադրեալ վանօրայք ևս չունեն մասնաւոր, իրենց համար կազմուած կառավարչական օրէնք, հաստատուած հոգևոր ծայրագոյն իշխանութենէ, որպէսզի վանականութիւնը իւր ամփոփ և պարզ օրինաց ուղեցուցիչ առաջնորդուէր միակերպ կառավարութեամբ՝ վանուցն յարատևութեան համար:

Տաճկաստանի գլխաւոր վանօրէից հաստատուն և յարատև մնալու պատճառն ինձ կթուի այն է, որ ունեն միաբանական ուխտ, ուխտին վանահայր և կանոնական օրէնք: Եւ երբ վանահայրն վախճանելու լինի, միաբանութիւն իւր միջէն կամ դրսէն կընտրէ յաջորդող վանահայրն, իբրև իւր հովիւ և վանական օրինաց օրինապահ և գործադրիչ, իսկ ինքն՝ միաբանութիւն, կլինի կամաւոր կատարիչ օրինաց և վանական հնազանդ որդի վանահօրն, և ամէնքն ի միասին, վանահայրն և վանաորդիք զինքեանս հարազատ ժառանգ կհամարեն նոյն միաբանական ուխտին:

Այսպէս եղեր է և է Վարագայ վանք («մայրաքաղաքն մենաստանաց»՝ ըստ Չամչեան պատմութեան, որ երբեմն ունեցեր է ութն հարիւր միաբանական եղբայրութիւն), Լիմ և Կտուց անապատներ Ս. Բարդուղիմէոս առաքելոյ և Մեծոփայ վանքեր, Տարոնոյ Ս. Կարապետի, Ս. Յովհանու և Թարգմանչաց[146], Արմաշու վանքեր, որոնց ամէնու մէջ կան ժառանգաւորաց վարժարաններ[147] մի որոշ նպատակի ծառայելու համար:

Ռուսաստանի հայոց բազմաթիւ վանքերու միաբանութիւն կբաղկանայ մի վարդապետէ միայն, որ և վանահայր անուն կկրէ՝ առանց վանաորդի ունենալու և կընտրուի ու կհաստատուի Ս. Էջմիածնի հոգ. բարձրագոյն իշխանութենէ, այն էլ շուտ-շուտ փոփոխուելու ենթակայ: Բնական է, որ այսպիսի վանահայր չի մտածեր վանքն բարեզարդել, ճոխացնել, քանդուածներ կարկատել և նորոգել, զի վանքն վարդապետի տուն (ըստ հայրենի առած են) լինելու ապահովութենէ դուրս եկած է: Ուստի այս իսկ պատճառաւ անտարակուսելի է, որ վանքեր միշտ քանդուելու և անհետանալու ենթակայ կլինեն իրենց ստացուածքով, հողային կալուածներով և սրբազան անօթներով: Քանդուած և իրենց կալուածներով ի միասին անհետացած վանքերու օրինակներ շատ են մեր աչքի առաջ: Ո՞ւր է վանքերէն հսկայն Սաղմոսավանք և նմանիքն, ի՞նչ վիճակի մէջ է Արտազու Թադէոս Առաքելոյ վանք, որ վանօրէից մէջ հսկայից հսկայն է իւր բերդանման շինութեամբ, ուր երբեմն կպատրաստուէին Ս. Էջմիածնի առաքելական յաջորդ գահակալներ, ո՞վ է նորա վանահայր: Վանքին շրջապատող 11 տունէն բաղկացեալ հայ գիւղի մէջ ծնած, սնած, զարգացած մի հայրենասէր վարդապետ՝ աղքատ և թշուառ, որ ամիսներով առանց վանք մտնելու, խունկ ու մոմ վառելու կթողու Հայաստանեայց աշխարհի նախկին լուսաւորիչ Թադէոս առաքելոյ սրբակիր գերեզման, զի վանքն ոչինչ չունի: Վանահայրն հազիւ հազ իւր ապրուստը կգտնայ իւրանման թշուառ աղքատ հայրենակից գիւղացիներէն:

146 «Թարգմանչաց, որ և Ղազարու և Առաքելոց անուանեալ վանուց տաճարի դրսի արևելակողմ կգտնուին մեր ազգալոյս թարգմանչաց Դաւիթ Անյաղթ փիլիսոփայի, Մամբրէ Վերծանողի, Եզնիկ Կողբացւոյ և այլոց պատկառելի շիրիմներ, որոնց մահարձաններ 4 կանգուն բարձրութեամբ կանգնած են 2 կանգուն քառակուսի մեծութեամբ պատուանդաններու վրայ, իրենց նուրբ (թարգմանչաց անուան վայելուչ) քանդակագործութեամբ, գողգոթայի հսկայ և հրաշատեսիլ խաչերով և տապանագրութեամբ: Եւ արդարև տապան և ոչ գերեզման թարգմանչաց, որք իրենց անմահ յիշատակաւ և ոսկեղենիկ գրչով կան և կմնան տապանի մէջ, ցերկրորդ գալուստ Քրիստոսի, ի յանդիմանութիւն մեզի պէս վանականաց ջախջախ եղեգնագրչի» (ծնբ. հեղինակի):

147 «Ըստ իմ դատողութեան՝ մեր նախնեաց գործածած վարժարան և վարժապետ անուններ շատ իրաւացի են արդի գործադրած «ուսումնարան և ուսուցիչ» անուններէն, որ կարծեմք, ուրիշ ազգերէն թարգմանաբար առած կգործածեն: Վարժապետն իւր գիտութիւնը ուրիշէն առած և վարժուած՝ կվարժեցնէ աշակերտներուն, բայց ուսուցիչն ինքնագէտ պիտի լինի, որ ուսուցանէ, ինչպէս տիեզերաց ուսուցիչն Յիսուս էր: Եւ այս սկզբունքով Յիսուս կպատուիրէ իւր աշակերտաց միջոցաւ մարդկային ազգի, ո՛չ զոք ուսուցիչ չկոչել, բաց յինքենէ» (ծնբ. հեղինակի):

Ռուսաստանի վանքերէն ոմանք թէ՛ ուխտատեղի են և թէ՛ հողային կալուած ունին, սակայն դարձեալ չեն ճոխանար, որովհետև չունեն վանական ուխտ և ուխտի հաստատութեան օրէնք: Թէպէտ ոմանց վանօրէից ջերմեռանդ հաւատաւորաց նուէրներու մի փոքր[148] մասն կընծայուին անդամ եղող վանքերու կողմանէ՝ ի շահ Ս. Էջմիածնի Մայր Աթոռին, իբրև վանօրէից գլխաւորին, որ շատ իրաւացի և պարտաւորիչ օգնութիւն է: Բայց միթէ նոյնպէս գլխաւոր վանքն ևս իւր կողմանէ չպէտք է, որ հոգատարութեամբ սնուցանէր և դարմանէր իւր խնամոց ենթարկուած անդամ եղող վանորայքը: Ինչպէս արիւն, սրտէն ելնելով, կմտնայ միւս արիւն երակներու մէջ և կանդրադառնայ ի նոյն տեղ՝ կենդանացուցիչ շրջան կազմելով, այնպէս և Ս. Էջմիածինը փոխադարձական պարտուց և իրաւանց ճանաչմամբ թէ՛ մասնաւորապէս կզօրացնէր և թէ՛ ինքն գլխաւորապէս կամրապնդուէր:

Ուրեմն ի՞նչ են Ռուսաստանի արդի վանօրայք, և ո՞ւմ կծառայեն նոցա կալուածներ: Ոչ այլ ինչ, եթէ ոչ միայնակեցարաններ, որք կծառայեն անհատական անձանց՝ հակառակ նախնական կանոնաւորեալ վանօրէիցն, որք կծառայէին եկեղեցւոյ ժառանգաւորացն: Օրինակ՝ բարեհռչակ Սանահին, արդիւնաշատ Հաղբատ, զինու հոգւոյց վառեալ Տաթևն և սոցա նմաններ կպատրաստէին զանազան կարգի հոգևորականներ հայոց ժողովուրդն լուսաւորելու, առաջնորդական, քարոզչական, կրօնասիրական և հայրենասիրական հոգւոյ ներշնչութեամբ:

Սոյն մտախոհութեանց առիթ տուաւ Չարեքայ վանուց այժմեան անկեալ դրութիւն, զոր վերականգնելու համար նորա արդի վանահայրն՝ արժ. Աստուածատուր վարդապետ, ճշմարիտ և անձնանուէր վանականութեան հոգւով, տասն և վեց տարիէ ի վեր երկաթի պնդութեամբ ամէն կերպ չարքաշութիւնը յանձն առած, ամենայն անձնանուիրութեամբ կաշխատէ վանքի յափշտակեալ հողային կալուածները՝ արտօրայք և անտառներ, վիճելութեան վիճակէն դուրս բերել և հաստատել տալ վանքի վրայ, վանքի նախնական հանրօգուտ նպատակն վերականգնելու:

Երկար ժամանակէ ի վեր վանքիս մէջ միաբանական ուխտ չի լինելու պատճառաւ (բացի մի վանահայր վարդապետէ) տաճարն իւր բոլոր շէնքերով խօրթացած է: Ուրտեղ մի փոքր վնասուած է եղեր, առանց կարկատելու և նորոգութեան մնալով՝ մերձ ի մահ խարխալուած է այնչափ, որ այսուհետև կարկատելն օգուտ չի բերեր և չի փրկեր վաղահաս մահուանէն, ինչպէս մեծաշէն Սաղմոսավանք և այլ սորա նմաններ փրկուած չեն եղեր՝ ժամանակի վանահարց անհոգութեան պատճառաւ:

Քանի՜ հոյակապ վանքեր գիտենք, ինչպէս Էջմիածնի մօտ Մուղնու Ս. Գէորգայ վանք, որ կողահերձ լինելով՝ քիչ ժամանակի մէջ կկործանի: Կկործանին և միւսներ, շնորհիւ անհոգութեան միայնակեաց վանահայրերուն:

Մօտ ժամանակներ հայ լրագրութեանց մէջ աղմուկ բարձրացաւ, թէ Չարեքայ վանից վանահայր Աստուածատուր վարդապետ վանքի անտառներ այնչափ փչացուցեր է և կփչացնէ, որոյ մէջ շրջագայող գազաններ ակներև կտեսնուին, և թէ, եթէ վանքն շուտով նորա ձէռքէն չառնուի, անտառներն իսպառ կանհետանան:

Սոյն չքննուած լուրը տուողներ արժանահաւատ անձինք համարուելով՝ վանահայրն փոխուեր և ուրիշն նորա տեղ յաջորդեր է, որ իւր անհոգութեամբ և ապիկարութեամբ անտառի մի մասն էլ սեպհականութենէ յափշտակուեր է և այնուհետև տեսնելով, որ տեղւոյն անօրէնք և անպրօկուրօր սար ու ձորերն իւր պահպանելու, կարողութենէն վեր է և չի պիտի կարողանայ առ երկիւղի երկար մնալ սոյն վանուց մէջ, քիչ մի ևս աւելի շտապեր է իւր ընելիքն ընելու և փոխադրուելու:

Հոգ. ծայրագոյն իշխանութիւն, այնուհետև ի փորձոյ վերահաս լինելով Աստուածատուր վարդապետի արժանաւորութեան վրայ, կրկին վանահայր հաստատեր է: Մենք, այցելելով սոյն վանքը, 8 աւուր չափ մնացինք, հետազօտեցինք անտառն, ոչինչ համաձայն՝ այն մեծ աղմուկին չգտանք, բացի վանքի առջև եղող պարտեզատեղիի կոտորուած ընկուզենիներէն, որ շատ լաւ հաշուով կտրատել տուեր է: Տեսնելով արդի վանահայրն, որ բոլոր ձորի բազմաթիւ ընկուզենիներով լի են, բանջարանոցի ընկուզենիքը կոտորեր և բանջարանոցն ընդարձակեր է (զի վարելահող չունի), ուր վարունկ, գետնախնձոր և լուբիս կցանէ, որոնց բերք ամէն օր ի վաճառ կհանէ ի Գետաբէկ՝ վանքի ապրուստ հոգալու: Մանաւանդ որ ամբողջ անտառն տակաւին վիճելի լինելով տէրութեան հետ՝ իշխանութիւն ևս իւր անտառապահներու հսկողութեան ներքև պահպանել կուտայ: Ուստի վանահայրն կարող չէր անտառն փչացնել:

Վանքիս արևելեան կողմը՝ մերձ ի պարիսպ, *Հայոց գերեզման* անունով մատուռ մի կայ, որ շինուած է վանքիս հինգ ճգնազգեաց վարդապետաց գերեզմանի վերայ, որոյ քարուկիր կամարի դրսի կողմը քանդած են բարձր կոչում ունեցող մի եկեղեցական և մի աստիճանաւոր, որ Գանձակէն այստեղ եկեր էին՝ բախտ որոնելու, բայց դժբախտաբար բախտ չգտնելէն յետոյ նոյն քանդուածն շինել տուած չեն, որ կմնայ ցայսօր ժամանակի ի նախատինս և վկայ իրենց բախտախնդրութեան: Դարձեալ և մօտ ժամանակներս, նոյնպէս բարձր կոչում ունեցող մի հոգևորական, Գանձակէն գալով, քան-

148 «Ուխտաւորաց նուիրաբերութեան մեծ մասն և կալուածոց արդիւնք կծառայեն անհաստատ վիճակ ունեցող վանահայրերուն և ո՛չ վանական ժառանգաւորներուն, որպէս ի հնումն, ժողովրդեան քարոզիչ վարդապետներ և քահանայացուներ պատրաստելու» (ծնթ. հեղինակի):

դեր է վանքի տաճարի տանիքը՝ նոյնպիսի շահասիրութեան պատճառաւ, և ինքն էլ չարաչար վիրաւորեր է նորա քամակը: Վանքից 2 վերստ հեռաւորութեան՝ նոյն արևելեան կողմը, գետի ձախ ափին, մի քարաժայռի գլխին, թրծեալ աղիւսներով շինուած, կայ մի պարսպաբերդ՝ *Նամրուք* անունով, որոյ պատեր ցայսօր կանգուն կմնան:

Վանքիս հարաւակողմը՝ 1/4 վերստ հեռաւորութեան, գետի աջ ափին, շինուած է մի փոքրիկ կամարակապ *եկեղեցի*, որոյ շուրջը կգտնուին բազմաթիւ բնակարանաց աւերակներ: Ոչ մի առանձին նշաններով յայտնի չեղաւ, թէ գիւղատեղի՞ է այդ վայր, թէ՞ վանքիս միաբանաց ճգնաւորական մասի աղօթավայր, միայն նոյն տեղ կգտնուեն իրարու կից շինուած վեց քարուկիր ամրապինդ սենեակներ՝ առանց լուսամուտի, չորս արշին քառակուսի մեծութեամբ, որոյ բոլորակ կամարներ ընկած են: Սոցա միայն արևելեան պատի մէջ կտեսնուի կրաշաղախով ամրապնդած խողովակներ, որք կարծել կուտան, թէ ի հնումն բաղանիք եղած են: Սոյն վայրի համար կաւանդեն, թէ կուսանոց եղած է. թերևս նոյն բաղանիք մաքրասէր կուսանաց ծառայած լինի:

Վանքի արևմտեան կողմը՝ երկու վերստ հեռաւորութեամբ՝ գետի աջ ափին, բարձր բլրակի գլխին, կտեսնուի բաւական մեծութեամբ *եկեղեցի*, որոյ վրայի կաթուղիկէի կէսը փլչած է: Նոյնպէս վանքի հիւսիսակողմ՝ 3 վերստ հեռաւորութեամբ մի բարձրաւանդակի վրայ, կգտնուի մի *եկեղեցի*, որոյ առաստաղը և մի պատ խոնարհուած են:

Դարձեալ վանքիս սահմանի մէջ՝ արևմտակողմը՝ 3 վերստ հեռաւորութեամբ, Այթալայ գետակի մօտ, կգտնուի հանքային երկաթի ջուր, որ թափուելով Այթալայ գետակի մէջ, եկուք ի միասին կօժանդակեն Շամքոր գետին: Սոյն Այթալայ անունով գետակի բոխման մօտեր կգտնուի *Այթալայ* անունով մի վանք, որ թէպէտ վանքիս սահմանից դուրսն է, բայց անոր համար կնշանակենք այստեղ, որովհետև կաւանդեն, թէ Այիթալայ սարկաւագ նոյն տեղի բնակիչներէն է:

Խ

Չարդախլու

Ամսոյս 13-ին Չարեքայ վանքէն մեկնելով՝ մի գիշեր օթեցանք Գետաբէկ գիւղը՝ դարձեալ տէր Շմաւոնի տանը և այնտեղից 14-ին հասանք ի *Չարդախլու* գիւղ[149], որ կբաղկանայ 202 տուն զուտ հայ բնակիչներէ՝ 753 արական, 561 իգական, որ Տփխիսէն այստեղ գաղթեր են 1822 թուականին:

Գիւղն ունի մի նորաշէն եկեղեցի՝ *Ս. Աստուածածին*[150] անուամբ, և մի քահանայ, սոյնպէս և մի

ՉԱՐԴԱԽԼՈՒ. Սբ. Աստվածածին եկեղեցին հարավ-արևելքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1980-ական թթ.)

նորաշէն վարժարան, որուն մէջ կուսանեն 45 աշակերտ: Երկուքն էլ օրինակելի են իրենց գեղեցկութեամբ:

Գանձակու 23 գիւղօրէից միայն 4-ի մէջ կգտնուեն եկեղեցական ծխական վարժարան, չորսն էլ միդասեան, թէպէտ և բաղկացեալ երեք-երեք բաժանմունքներէ, բայց դժբախտաբար մի-մի վարժապետ ունենալու պատճառաւ բոլորն էլ ապարդիւն կմնան: Ի շարս նոցա՝ և գիւղիս վարժարան ապարդիւն մնացած է՝ երկու վարժապետ պահելու կարողութիւն չունենալու համար:

Գիւղիս հիւսիսարևմտակողմ՝ երկու ժամու հեռաւորութեամբ, *Ոսկան-Նահատակ* ուխտատեղին՝ *Քոյր և եղբայր* անուանեալ, կգտնուի գիւղիս դրացի *Թերմաշտու* անուն թրքաբնակ գիւղի սահմանի մէջ:

Այստեղ տարին երեք անգամ, այսինքն՝ Յարութեան, Նոր կիւրակէի և Վարդավառի տօներին, բացի գաւառիս հայ և թուրք բնակիչներէն, Տփխիսու և Նոր Բայազէտու վիճակներէն անգամ ուխտի կդիմեն՝ գլխաւորապէս ամուլ կանայք: Այստեղ խաբեբայ «ընկնաւոր» կանայք գուշակութիւններ կընեն՝ նախապէս տեղեկութիւններ հաւաքելով ուխտաւորներէ, համախոհ և շահու բաժանարորդակից իւրեանց ընկերներու միջոցաւ: Երբ այս ու այն ուխտաւորաց ցաւ կիմանան, կսկսին յանկէ յանուանէ այս ու այն ցաւագար անձինք կոչել՝ իւրաքանչիւրին ունեցած ցաւի անունն յայտնելով, որպէսզի իրենց գուշակութիւնն ստուգուի:

Եւ այսպէս՝ չարահնար միջոցներով պարզամիտ ժողովուրդը կխելայեղեն՝ նուէրներ ստանալու:

Սոյն ուխտատեղին նախապէս հայոց շինատեղի եղած է՝ *Բուլանուղ* անունով, որոյ մէջ կայ մի կամարաշէն և անսիւն եկեղեցի, որ մինչև ցայժմ անվնաս մնացած է: Յիշեալ եկեղեցւոյ հիւսիսային կողմը՝ պատին կից, կայ մի մատուռ՝ ունենալով իւր մէջ տապան՝ *Ոսկան-Նահատակ* անունով[151]: Սոյն

149 Գտնվում է Շամխորի շրջկենտրոնից 15 կմ հարավ-արևմուտք (ծ. մ. բարձր է 1240-1360 մ):

150 Ըստ շինարարական արձանագրության՝ կառուցվել է 1872 թ. (**Կարապետյան Ս.**, նշվ. աշխ., էջ 515):

151 Վերանորոգել է Կարապետ Սաֆարյանցը 1884-1885 թթ. (**Գասպար. Յով.**, Չարդախլուն և նրա պատմութիւնը, «Նոր-Դար», Թիֆլիս, 1889, № 197, 25 նոյեմբերի, էջ 3):

ՉԱՐԴԱԽԼՈՒ. Հուսկան Նահատակ վանքը հյուսիս-արևելքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1980-ական թթ.)

մատուռին կից գանձակեցի Կարապետ Սափարեանցը երկու սենեակ շինած է ուխտաւորներուն բնակարան լինելու: Այդ ուխտատեղւոյ տարեկան 70 ռուբլի փող գոյացեալ նուէրներէն 20 ռուբլի Տըփխիսու Ներսիսեան դպրանոցին և 50 ռուբլի գիւղիս վարժարանին յատկացուցեր է հոգ. իշխանութիւն:

Գիւղիս սահմանի արևմտեան կողմը՝ 1 1/2 վերստ հեռաւորութեամբ, կայ մի ուխտատեղի՝ *Կաղնախաչ* անունով, ուր կգտնուի մի կենտ կաղնի ծառ՝ առանց ունենալու իւր ներքև խաչ կամ օճախ: Կաղնի ծառ, երկու ճիւղաթեր ունենալով, խաչաձև կերևի, ուր ևս սորա համար Կաղնախաչ անուն կկրէ:

Գիւղիս արևելահարաւային կողմը՝ 2 վերստ հեռաւորութեամբ, մի բարձր բլուրի գլխին, կայ մի խաչ-ուխտատեղի՝ *Բարձր-Խաչ*[152] անունով, որ և *Լուսաւորչայ-խաչ* անուն կկրէ: Հիւսիսակողմը՝ գիւղիս մօտ, կայ մի թեք կանգնած խաչ՝ *Մատուռ* անունով, շրջապատուած փոքրիկ պատով:

Գիւղիս բնակիչ Դանիէլի անձի տանը կայ մի արկղ՝ իբրու թէ Գետաշէնու աւագ Ս. Նշանի խորանէն բերուած, որուն տեղացիք, Աւագ Ս. Նշանի խուր անուանելով, ուխտի կերթան:

Նոյնպէս արևելահարաւ կողմ կայ մի հին շինատեղի՝ 1/2 ժամ հեռաւորութեամբ, որուն մէջ կայ յայտնի եկեղեցատեղի՝ իւր փլատակներով և գերեզմանոցով, *Կուճուր (փոքրիկ) Չարդախլու* անունով:

Գիւղիս հարաւակողմը՝ մի ժամու հեռաւորութեամբ, Չախր-եօլ ասուած տեղին մի ձորի մէջ, կայ մի հին շինատեղի՝ իւր եկեղեցու փլատակներով և գերեզմանոցով:

Գիւղիս բնակիչ Մանասեանց տնէն, որտեղ մենք հիւրասիրուած էինք, կայ մի համալսարանական ուսանող՝ Մոսկուայի համալսարանը, և մի ուրիշը՝ Տփխիսի գիմնազիոնը, իսկ այլ բնակիչներէն կան Գանձակու քաղաքական ուսումնարանի մէջ: Աւարտածներ կան Ներսիսեան դպրանոցէն՝ 2, Տփխիսու արհեստական ուսումնարանէն՝ 1, վիրաբուժական ուսումնարանէն՝ 2, Պետերբուրգի զինուորական բժշկական ճեմարանէն՝ 1:

152 Ուխտատեղին, որը գտնվում էր Չարդախլուից 1,5 կմ հարավ՝ Խաչի սեռ լեռան գագաթին, «...Բարձր Խաչ կամ սուրբ Գէորգ անունով մի մեծ երկար քար» էր՝ «խաչով և ուրիշ նկարներով..., որի վրայ բացի թուականից՝ ՌՀԸ (1629), ուրիշ արձանագրութիւն չկայ» (նշվ. հոդվ., նույն տեղում: Տե՛ս նաև **Կարապետյան Ս.**, Հյուսիսային Արցախ, էջ 517-518):

ՁԱՐԴԱԽԼՈՒ. Բարձր-խաչ խաչքարը (լուս.՝ անհայտ հեղինակի)

Եկեղեցին ունի մի ձեռագիր անթուական Աւետարան:

ԽԱ

Սարով

Ի վերջոյ այցելեցինք Գանձակու հիւսիսակողման վրայ գտնուող 3 գիւղեր, նախ՝ ի *Սարով*[153] գիւղ, որ կբաղկանայ 120 տուն բնակիչներէ, որոնցմէ 93 տուն մահմեդական թուրքեր և հայեր՝ 35 տուն՝ 83 արական և 72 իգական: Վիճակիս մէջ այս գիւղն է միայն, որ մահմեդականներու հետ խառն կբնակին: Հայերը 100 տարիի չափ առաջ 8 տուն գաղթեր են այստեղ Ջիւանշիրու գաւառի Սարով գիւղէ:

Այս գիւղը կգտնուի Գանձակու արևելահիւսիսային կողմ՝ 3 ժամ հեռաւորութեամբ, և որի հողային կալուածքը կպատկանի գանձակեցի հանգուցեալ Մինաս-բէգ Կամսարականի ժառանգներուն: Գիւղաբնակիչները իրենց արդիւնաբերութենէն տասնէն մէկը հողավարձ կուտան կալուածատիրոջ: Բնակիչ հայերը խաղաղասիրութեան և պարկեշտութեան տիպար ճանչցուած են մերձակայ գիւղերէն: Հայեր ամէն բանի մէջ բաւականութիւն կզգան, բացի ջրէն, որ սակաւութիւն կընէ, և դժգոհ են, որու համար զբրկուած կիամարեն ուժովներու ձեռքէն: Երկիրը սևահողէ և արգաւանդ ու բերքի պակասութիւն պատճառուեր է ջրի պակասութեան համար:

Գիւղի շուրջը զարդարուած է մասամբ պտղատու ծառերով և մեծ մասամբ թթենիներով, զի ունեն և շերամապահութիւն, որոյ արդիւնքից, այսինքն՝ շերամից կպատրաստեն գեղեցիկ ներկով և պինդ գործուածքով կապերտներ, որ կգործածուին սեղանի ծածկոցի, անկողիններու և բարձու երեսներու ու պատի գորգերու տեղ: Այս արհեստ տարածուած է այստեղ թէ՛ թուրքերու և թէ՛ հայերու իգական սեռի մէջ, որք կպատրաստեն թէ՛ իրենց պիտոյից համար և թէ՛ ի վաճառ կիանեն:

Հայեր ունեն մի փոքր, ցածր, փայտածածկ, անշուք եկեղեցի՝ *Ս. Աստուածածին* անուամբ[154]:

Ունին մի տգէտ քահանայ՝ տէր Մեսրովբ Տէր-Յովհաննիսեան անունով, որ դրացիական եզնակռիւներու պատճառաւ թողեր, լքեր է իւր եկեղեցի և ժողովուրդ, գաղթեր է Ջարգալար անուն գիւղ: Գիւղացւոց հին սերնդի մէջ երկու ծեր տիրացուներ կգտնուին, իսկ նոր սերունդի մէջ ոչ մի փոխասաց պատրաստեր է քահանայն՝ գէթ իրեն ժամասացութեան օգնելու:

Գիւղս ունի մի ուսանող Գանձակու արհեստաւորաց ուսումնարանը:

Ի հնումն որթատունկ այգիներ ունեցեր են, բայց այժմ անհետացեր են:

Քիւրակ-չայի վերի կողմերը գիւղերի շատնալու համար հետզհետէ ջրեր պակսեր են: Սոցա կանանց սեռը ձմեռ ժամանակ զբաղուած են մետաքս, բամբակ և բուրդ մանելով: Բացի մետաքսագործութենէ՝ գիտեն և բրդից գործել գեղեցիկ գորգ և կապերտներ:

ԽԲ

Ղարադաղլու

Սարովէն մեկնելով՝ այցելեցինք ի գիւղն *Ղարադաղլու*[155], որուն թուրքեր և ռուսներ *Խան-քէնդ* կանուանեն: Գիւղը կգտնուի Գանձակու արևելակողմ՝ Քիւրակ չայի ձախ ափին՝ Գանձակէն երկու ժամ հեռաւորութեամբ, և կբաղկանայ 86 տուն զուտ հայ բնակիչներէ՝ 189 արական, 174 իգական:

Ունի մի եկեղեցի՝ *Ս. Գէորգ* անուամբ, որ կառուցած է նոյն գիւղացի հանգուցեալ Դանիէլեան Ռոստոմը 1851 թուականին[156], անմահ յիշատակ իւր

153 Գտնվում է Կասում-Իսմայիլովի շրջկենտրոնից 22 կմ արևմուտք՝ Կուրակ գետի ձախ ափին (ծ. մ. բարձր է 240-250 մ):

154 Ավերվել է 1905 թ. (**Կարապետյան Ս.**, նշվ. աշխ., էջ 433):

155 Գտնվում է Կասում-Իսմայիլովի շրջկենտրոնից 21 կմ հյուսիս-արևմուտք՝ Կուրակ գետի ձախ ափին (ծ. մ. բարձր է 330-360 մ):

156 Սբ. Գևորգ եկեղեցու շինարարական արձանագրության համաձայն՝ կառուցվել է 1855 թ. (**Քաջիկեան**, Ճանապարհորդական յիշատակարան, «Արձագանք», 1886, № 19, էջ 280: Վրիրտկ.՝ **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 53: **Կարապետյան Ս.**, Հյուսիսային Արցախ, էջ 429):

մահկանացութեան, զի ժառանգ չէ ունեցեր, ինչպէս կվկայէ նոյն եկեղեցւոյ ատեանի մէջ նորա ամփոփուած գերեզմանի տապանագիրը: Ունի մի բարեհամբաւ քահանայ և երկու ապիկար տիրացուներ:

Ունի և մի վարժարան եկեղեցւոյ արևելեան կողմը՝ շինուած 1874 թուականին: Երեք տարւոյ չափ ունեցեր է ուսանողներ և այնուհետև խափանուեր է մինչև ցայսօր՝ տարիներու անպտղաբերութեան համար:

Գիւղը զարդարուած է պտղատու ծառաստաններով, որուն մէջ աւելի տեղ կբռնեն թթենիներու բազմութիւն շերամի համար, գիներեր որթատունկերու այգիներով: Ունի և բաւական վարելահող, որք ամէնն ալ կոռոգուին Քիրակչայի առատ ջրով, բայց ժողովուրդ դարձեալ աղքատ է: Պատճառը հարցուցի, անտնտեսագիտութի՞ւնն է արդեօք, գինեմոլութի՞ւնը, ծուլութի՞ւնը: Ո՛չ, պատասխանեցին, այլ հարկահանութեան ծանրութիւնը: Բայց որպէս ես նկատեցի, սոցա անյառաջադիմութիւն ծուլութեան արդիւնք է, որովհետև սոքա 1826 թուականէն, որպէս գաղթական ժողովուրդ, Պարսկաստանէն եկած այստեղ և ծուլութեան ժառանգական ախտը բերեր են հետերնին իրենց նոր հայրենիքը: Գալով սոքա այս երկիր՝ հեշտութեամբ չեն կարողացել ազատուել հին ունակութիւնէն: Բայց ներկայիս, խոստովանել պարտ է, որ նոցա մէջ ևս արթնացել է յառաջադիմութեան ձգտում և ոգին, զի նշաններն արդէն ցոյց կուտան և սկսեր են այգեգործական մշակութիւն, ամէն ոք տնկեր է իրեն համար այգի, և կշինեն հետզհետէ կանոնաւոր կարգով տներ նոր ձևի:

Կիներու և տղաքներու պարզ հանդերձանքներէն կերևին մաքրութեան նշաններ: Տնատեղերն ընդարձակ, որովհետև դիրքը դաշտային է՝ համեմատութեամբ այլ գիւղօրէից հետ, փողոցներ բաւական լայն և մաքուր են: Արդէն սկսեր են գեղեցիկ ճաշակով տներ շինել:

Գիւղիս արևելակողմ՝ Քիւրակ-չայի ձախ ափին, գետաձորի մէջ, կայ մի կաղնի խաչ՝ *Մատուռ* անունով ուխտատեղի՝ շրջապատուած 4 ցածր պատերով, որտեղ ուխտաւորներ խունկ, մոմ կվառեն, ուր չկայ ո՛չ խաչ, և ո՛չ ուրիշ պաշտելի մի նշան: Որուն կհովանաւորեն մեծ կաղնի, փշատի և փռշնի հինաւուրց ծառեր, որք առ երկիւղի պատժուելու՝ անձեռնմխելի մնացած են, ուստի և անոնցմէ քանիս գոսացած չորացած են, որոնց ճիւղերու վրայ ուխտաւորներ կկապեն շորի կտորտանքներ՝ ցաւի փարատելու համար:

Գիւղէս երեք ուսանող ունին Գանձակու քաղաքական ուսումնարանի մէջ:

ԽԳ.
Ջարգալար[157]

Ապա այցելեցինք Ղարադաղլուէն 1/4 ժամաւ հեռի *Ջարգալար* գիւղը, ըստ թուրքաց՝ Խոյլուլար, զի նորա բնակիչներ Խոյէն գաղթեր են այս գիւղ, որ կբաղկանայ 40 տուն զուտ հայ բնակիչներէ՝ 89 արական, 83 իգական:

Ունի փայտածածկ մի անշուք եկեղեցի՝ *Ս. Աստուածածին* անունով[158]:

Սեպհական քահանայ չունենալու համար իրենց հոգևոր պէտքերը կմատակարարէ Ղարադաղլուի քահանայն:

Առաջին անգամն է, որ կհանդիպենք մի այնպիսի գիւղի, որոյ մէջ ո՛չ մի կարդալ գիտցող կայ: Չունի գիւղէն դուրս որևիցէ մի վարժարանի մէջ ուսանող տղայ:

Այս գիւղը կգտնուի Քիւրակչայ գետի ձախ ափի վրայ՝ Ղարադաղլուէն երկու վերստ հեռու հարաւակողմ:

Ժողովուրդը երկրագործ է, բայց աղքատ, զի ունևոր տունն, ինչպէս իրենք կասեն, երեք լուծ անասուններ ունի: Կթի անասուններ նոյնպէս սակաւ են: Սոքա ունեն բաւական վարելահողեր և առատ ջուր: Գիւղը զարդարուած է պտղատու ծառաստաններով, փոքր մասն միայն կպարապի շերամապահութեամբ: Այգեգործութեան գաղափարը դեռ նոր է մուտք գործել սոցա մէջ՝ օրինակ վեր առնելով իրենց դրացի կալուածատեարց պ.պ. Մէլիքեանցներէ և Աթայեանցներէ, որք սոցա սահմանի մէջ տընկեր են մեծատարած այգիներ և զանազան մրգատու ծառեր: Ուստի և այս գիւղացիք, հետևելով նոցա օրինակին, արդէն սկսեր են տնկել որթատունկ այգիներ: Յուսալի է, որ այսուհետև տնտեսագիտութեան շնորհիւ մի քանի տարիէն յետոյ կփարթամանայ այս ժողովուրդ:

Քարոզներու ծարաւ այս ժողովրդեան մի համառօտ բանախօսութեամբ խրախուսեցի զարգանալ տնտեսագիտութեան մէջ՝ ցոյց տալով ճանապարհը բնական օրինակներով և ի միջի այլոց յորդորեցի զանոնք քանդել իրենց կիսափուլ եկեղեցին, շինել նորը՝ ի հիմանց գեղեցիկը և վայելուչը: Բարեպաշտ այդ ժողովուրդն յօժար կամօք ընդունեց մեր առաջարկութիւնը, իսկոյն նեթ ընտրեցին իրանց միջէն մի հոգաբարձութիւն՝ երեցփոխ Մինաս Հախնազարեանց, Սողոմոն Ալլահվերդեանց և Գրիգոր Յարութիւնեանց, որ հոգ տանեն եկեղեցւոյ կառուցման գործին վերայ իմ խնամքով ու խորհրդով:

157 Գտնվում է Կասում-Իսմայիլովի շրջկենտրոնից 22 կմ արևմուտք՝ Կուրակ գետի ձախ ափին (ծ. մ. բարձր է 375-410 մ):

158 Հավանաբար 1850-ական թթ. երկրորդ կեսի կառույց է: 1980-ական թթ. արդեն կիսավեր էր (**Կարապետյան Ս.**, նշվ. աշխ., էջ 425):

ԱԲՈՒՂԱՄՐԵՆՑ ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԻՄԱԳՐԵՐԸ

Ռաֆֆի Քորթոշյան

Աբուղամրենց Սբ. Գրիգոր կամ Գրիգոր Պահլավունու եկեղեցին կառուցվել է Անիի նոր հատվածի արևմտյան մասում՝ Ծաղկոցաձորի պռնկին:

Եկեղեցու մուտքի բարավորին 994 թ. նվիրատվական արձանագրության գոյությունը հուշում է, որ այն կառուցվել է մինչև նշված թվականը: Որմերին առկա արձանագրություններից թվակիր են ևս երկուսը, մեկը վերաբերում է եկեղեցուն հյուսիսից կից 1040 թ. կառուցված մատուռ-տապանատանը, իսկ երկրորդը 1599 թ. նվիրատվական բնույթի է: Հարկ է նշել, որ անթվակիր վիմագրերից 4-ը պատկանում են Ժ-ԺԱ դդ., իսկ 1-ը՝ ԺԹ դարին:

Եկեղեցու վիմագրական ժառանգության հրատարակման գործը՝ ի դեմս Սարգիս արք. Ջալալյանցի, սկսվել է 1853 թ.-ից: Վերջինիս ընթերցումները, սակայն, հիմնականում թերի են և աչքի են ընկնում մեծաթիվ վրիպակներով: Այնուհետև մի քանի արձանագրություն հրատարակել է ֆրանսիացի արևելագետ Մարի-Ֆելիսիտե Բրոսեն 1860 թ., ինչպես նաև ավելի ամբողջական և գրեթե անսխալ՝ Ներսես Սարգսյանը 1864 թ., Ղևոնդ Ալիշանը՝ 1881 թ., Մելիքսեդեկ քահանա Գևորգյանը՝ 1903 թ., Կարապետ Բասմաջյանը՝ 1923 և 1931 թթ.: Ցանկը եզրափակվում է Հովսեփ Օրբելու՝ «Դիվան հայ վիմագրության» աշխատությամբ 1966 թ.:

Սույն հոդվածում ներկայացվում է իրական գրչանկարներով 8 վիմագիր, ինչպես նաև՝ ուխտավորների՝ սվաղի շերտի վրա թողած և երբևէ ուշադրության չարժանացած մատիտագիր հիշատակագրություններ: 1874-1913 թթ. մատիտագրերում (որոշ մասն արված է անվանի անձանց կողմից) առկա տեղանունները կարևոր են հատկապես այցելուների աշխարհագրական շրջանակը քարտեզագրելու համար: Հետաքրքիր են նաև հիշատակագիրների՝ Հայկական հարցին վերաբերող մտորումները:

Վիմագրեր

ա Եկեղեցու արևելյան խորանի արտաքին պատին՝ լուսամուտից վեր, փորագիր 5 տող.

Ք(րիստո)ս ա(ստուա)ծ յորժամ | գաս փառոք հաւր | ի նորոգել զերկիր, | ողորմեա Գրիգորո ծա-|ռաի քո:

Հրատ. **Ջալալեանց Ս.**, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփխիս, 1853, էջ 13: **Brosset M.**, Les ruines d'Ani, capitale de l'Arménie sous les rois Bagratides, aux Xe et XIe s.: histoire et description, v. 1, St. Pétersbourg, 1860, p. 37. **Սարգսեան Ն.**, Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 136: **Ալիշան Ղ.**, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 53: **Մելքիսեդեկ քհ. Գէորգեանց Շիրակացւոյ**, Համառօտ տեղագրութիւն հնութեանց Մեծին Շիրակայ եւ մայրաքաղաքին Անւոյ (այսուհետև՝ **Գէորգեանց Մ.**, համապատասխան էջերով), Աղէքսանդրապոլ, 1903, էջ 41: **Բասմաջեան Կ.**, Անիի անցեալն ու ներկան, «Բազմավէպ», 1923, № 9, էջ 264: **Բասմաջեան Կ.**, Հայերէն արձանագրութիւնք Անւոյ, Բագնայրի եւ Մարմաշինու, Պարիս, 1931, էջ 13: **Օրբելի Հ.**, Դիվան հայ վիմագրության, պրակ I, Երևան, 1966, էջ 31:

Տարբերություններ. **Բրոսեի** մոտ *ծա|ռաի քո*-ի փոխարեն՝ *կա-|թուղ(իկոսի)*:

Վիմագիր *ա* (լուս.՝ Պ. Տոնապետյանի, 2013 թ., գրչ.՝ հոդվածագրի, 2022 թ.)

բ Եկեղեցու բարավորին՝ փորագիր 5 տող.

Յանուն ա(ստուծո)յ կամ ե|ղեւ իմ՝ Շուշանա տիկնա(ն)ց տիկ|նոջ, որ ետու զՄրուանա կուղպակե ի Ս(ուր)ք | Գրիգոր Ձ (80) դրամ, Լ (30) Սէդաի եւ Ծ (50) Մրուանա, ԺՁ (16) աւր ժա|մ ի Քր(իստոս):

Հրատ. **Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ., էջ 12: **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 53: **Գէորգեանց Մ.**, էջ 41: **Բասմաջեան Կ.**, նշվ. հոդվ., էջ 264-265: **Նույնի**՝ նշվ. աշխ., էջ 14: **Օրբելի Հ.**, նշվ. աշխ., էջ 31: **Սրապյան Կ.**, Մի տեղեկագիր Կարսի մարզի վերաբերյալ, «ԲՀԱ», 1970, № 2, էջ 114:

Ծանոթ. արձանագրության 3-5-րդ տողերի վրա փորագրվել է համար *գ* արձանագրությունը:

Ջալալյանցի մոտ արձանագրությունը հրատարակվել է թերի, իսկ **Սրապյանը** տվել է միայն առաջին երկու տողերը:

Տարբերություններ. **Ալիշանի** և **Գևորգյանցի** մոտ *կուղպակե*-ի փոխարեն՝ *կուղպակս*, *Լ*-ի փոխարեն՝ *Է*, *Ծ*-ի փոխարեն՝ *Ձ*: **Օրբելու** մոտ *կուղպակե*-ի փոխարեն՝ *կուղպակն*:

Վիմագրեր *բ, գ, դ, ե* (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2004 թ.)

Վիմագիր *բ* և *գ, դ, ե* (գրչ.՝ հոդվածագրի, 2022 թ.)

գ Եկեղեցու բարավորին՝ փորագիր 4 տող.

Կամաւքն ա(ստուծո)յ ի ՆԽԳ (994) թու(ականին), ես՝ Շուշան տիկնա(նց) | տիկին զիւգակից Գրիգորո իշխանի, ետու զՄրու|անա կուղպակս ի Ս(ուր)ք Գրիգոր, իսկ որ հակառ գա յիմոց կա(մ) յաւտարաց, ՅԺԸ (318)-իցն նզոված է հոգով եւ մարմնով եւ քա.:

Հրատ. **Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ., էջ 12: **Մարգսեան Ն.**, նշվ. աշխ., էջ 135: **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 52: **Գէորգեանց Մ.**, էջ 41: **Բասմաջեան Կ.**, նշվ. հոդվ., էջ 264: **Նույնի՝** նշվ. աշխ., էջ 13: **Օրբելի Հ.**, նշվ. աշխ., էջ 32:

Ծանոթ. **Ջալալյանցի** մոտ արձանագրությունը հրատարակվել է թերի՝ միայն երրորդ տողի կեսը և չորրորդ տողը:

Տարբերություններ. **Ջալալյանցի** մոտ *մարմնով եւ քա.*-ի փոխարեն՝ *մարմնով, ամէն*: **Մարգսյանի** մոտ *ՆԽԳ*-ի փոխարեն՝ *ՆԽԴ*: **Մարգսյանի**, **Ալիշանի** և **Գեորգյանցի** մոտ *մարմնով եւ քա.*-ի փոխարեն՝ մարմնով:

դ Եկեղեցու բարավորին՝ փորագիր 4 տող.

Կամաւքն ա(ստուծո)յ ես՝ Վահրամ իշխանաց իշխան, ետու զիմ որդոյն զԱպուխամրի ոգեբաժին եւ գ|նեցի Բ (2) կուղպակ զԼորագոյնին եւ զՈրսաւտին Ոշականց, ետու ի Ս(ուր)ք Գրիգորի եւ քան եկեղեցիքս, | որ ունին ի տարին Գ (3) քառասունք: Արդ էթէ ոք հակառ գա յիմոց կամ յաւտարաց, նզովեալ եղիցի|ի (ի) հաւրէ եւ յորդո եւ ի ս(ուր)ք հոգոյն, ՅԺԸ (318) հա(յրապետաց) եւ Ապուխամրի մեղացն պարտական եղիցի առաջի Ա(ստուծո)յ:

Հրատ. **Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ., էջ 12: **Մարգսեան Ն.**, նշվ. աշխ., էջ 135: **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 53: **Գէորգեանց Մ.**, էջ 41-42: **Օրբելի Հ.**, նշվ. աշխ., էջ 32: **Բասմաջեան Կ.**, նշվ. աշխ., էջ 19:

Ծանոթ. **Մարգսյանի** և **Ալիշանի** մոտ առկա են անշնչան վիրակներ: **Ջալալյանցի** մոտ արձանագրությունը հրատարակվել է թերի. չկա չորրորդ տողը:

Տարբերություններ. **Ջալալյանցի** մոտ *Բ*-ի փոխարեն՝ *երկու, զԼորագոյնին եւ զՈրսաւտին Ոշականց*-ի փոխարեն՝ *զաւրագու-*

նին, և զոր Մարտիրոս աւշականց, եւ քան եկեղեցիքս-ի փոխարեն՝ *և որքան եկեղեցիս, հակառ գա*-ի փոխարեն՝ *հակառակ կայցէ*:

ե Եկեղեցու բարավորին՝ փորագիր 2 տող.

Ես՝ Սարգիս Լարարաս, ետու զիմ տունս ի Ս(ուր)ք Գրիգոր, որ արնեն ինձ ժամ ի տարին ԺԵ (15) աւր: Իսկ, որ հակառ գ(ա) | եւ զիմ յիշատակս խափանէ յամենակալ Բանէն ա(ստուծո)յ յ... [հոգո]վ եւ մարմնով, ամէն:

Հրատ. **Սարգսեան Ն.**, նշվ. աշխ., էջ 135: **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 53: **Գէորգեանց Մ.**, էջ 42: **Բասմաջեան Կ.**, նշվ. աշխ., էջ 115: **Օրբելի Հ.**, նշվ. աշխ., էջ 32:

Տարբերություններ. **Սարգսյանի** մոտ *ժամ ի տարին ԺԵ աւր*-ի փոխարեն՝ *ժամ ... աւր*, իսկ *յամենակալ Բանէն ա(ստուծո)յ*-ի փոխարեն՝ *յամենա...նին ա(ստուծո)յ*: **Ալիշանի** և **Գեորգյանցի** մոտ *ժամ ի տարին ԺԵ աւր*-ի փոխարեն՝ *ժամ ... ԺԵ աւր, յամենակալ Բանէն ա(ստուծո)յ*-ի փոխարեն՝ *յամենակալ ...նին ա(ստուծո)յ*:

զ Եկեղեցու հյուսիսարևելյան նիստին՝ լուսամուտից ներքև, փորագիր 14 տող.

Ի ՆՀԹ (1040) թուականիս ես՝ Ապլղարիպ հայոց մարզպան, որդի Գրիգորո եւ | թոռն Ապուղամրի, հայոց իշխանաց, թէպէտ եւ անտես էի ի հաւրէ | իմէ, յաղագս կր(տ)սերութեան, այլ հարկեցա ի ծնողական սիրոյն եւ | շինեցի զայս հանգստարան հաւր իմո՝ Գրիգորո եւ եղբաւր իմո՝ Համ|զէի եւ քեռ իմո՝ Սեդաի եւ շինեցի սենակ Բ (2) զՍ(ուր)ք Ստեփանոս եւ զս(ուր)ք | [Քրիստափոր ե]ւ պայման քահանայիցդ այս է, որ զամէն ուրբաթ ի Ս(ուր)ք Սը|[տեփանոսն] ժամն իմ մաւրն՝ Շուշանա արասցեն եւ զշաբաթն իմ | հաւրն՝ Գրիգորո եւ ի Ս(ուր)ք Քրիստափոր զամէն ուրբաթ իմ քեռն՝ Սեդաի | եւ զշաբաթն իմ եղբաւրն արնէ, Համզէի եւ առաջաւորացն ու|րբաթին եւ աղցացն ուրբաթանոյն փոխան՝ յարձակ աւուրքն ա|ռասցեն Ը (8) աւր: Արդ եթե ոք ի քահանա(յ)ից եկեղեցեացդ զայդ ժամդ | խափանէ եւ կամ պղերգա եւ աւր անցնէ, նզովեալ լիցի ի հաւրէ եւ | յորդւո եւ ի ս(ուր)ք հոգւոյն եւ ՅԺԸ (318) հայրապետացն եւ բաժին նորա՝ ընդ | Յուդաի մատնչին առցէ իսկ կատարիչ գրոյս՝ աւրհնեալ լիցի: Գրիգոր:

Հրատ. **Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ., էջ 13: **Brosset M.**, նշվ. աշխ., էջ 37: **Սարգսեան Ն.**, նշվ. աշխ., էջ 135-136: **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 53-54: **Գէորգեանց Մ.**, էջ 42: **Պալաքեան Գ.**, Նկարագրութիւն Անիի աւերակներուն, Կ. Պոլիս, 1910, էջ 46: **Բասմաջեան Կ.**, նշվ. աշխ., էջ 27-28: **Օրբելի Հ.**, նշվ. աշխ., էջ 33: **Սրապյան Կ.**, նշվ. հոդվ., էջ 114:

Ծանոթ. վերջին տողի վերջին բառը փակագիր է և առկա է միայն **Բասմաջյանի** մոտ:

Ջալալյանցի, **Պալաքյանի** և **Սրապյանի** մոտ կան բազմաթիվ վրիպակներ: **Բրոսեի** մոտ հրատարակվել են արձանագրության միայն առաջին չորս տողերը: **Սարգսյանի** մոտ թերի է. վեցերորդ տողը առկա չէ, իսկ **Սրապյանի** մոտ չկան 9-14 տողերը:

Տարբերություններ. **Գեորգյանցի** մոտ *[Քրիստափոր ե]ւ*-ի փոխարեն՝ *Գրիգորի*:

է Արձանագրությունը չենք տեսել, փորագիր 2 տող.

ՌԽԸ (1599) [թուին]... Քրիստոս ա(ստուա)ծ. ողորմ|իայ Սարգս[ի.....

Հրատ. **Օրբելի Հ.**, նշվ. աշխ., էջ 31:

Վիմագիր *զ* (լուս.՝ Ա. Հակոբյանի, 2014 թ., գրչ.՝ հոդվածագրի, 2022 թ.)

ը Եկեղեցու հյուսիսարևմտյան նիստին՝ փորագիր 2 տող.

Գարեգին | տէր | Ոսկանա:

Հրատ. առաջին անգամ:

Վիմագիր *ը* (լուս.՝ հոդվածագրի, 2022 թ.)

Մատիտագրեր

1874-1877-1883 ամի: | Լուսանկար(իչ) Յ(ովհաննէս) Քիւրքճեան:

Ծանոթ. Հովհաննես Քյուրքճյանը (1855 թ. Կյուրին - 1903 Ճավա) հայ իրականության մեջ պատմական հուշարձանների լուսագրման հիմնադիրն է: 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում, որպես լուսանկարիչ, ծառայել է ռուսական բանակում: Զորքի հետ մտնելով Անի՝ լուսանկարել է քաղաքի հուշարձանները: Պատերազմի ավարտից հետո չորսհոգանոց սպասարկող խմբով մանրամասն լուսանկարել է մայրաքաղաքի ավերակները, ապա ստեղծել «Ավերք Հայաստանի. Անի» խորագրով 40 ստերեո լուսանկար: 1881 թ. մասնակցել է ազգային-ազատագրական շարժումներին, որի հետևանքով հալածվել է ցարական կառավարության կողմից և մեկնել Վիեննա: 1884 թ. տեղափոխվել է Ինդոնեզիա: 1891 թ. նրա անմիջական մասնակցությամբ հիմնադրվել է Հայոց խրախուսական միությունը: Ունի Հոլանդիայի պալատական լուսանկարչի կոչում (**Քոչար Վ.**, Հայ լուսանկարիչներ, Երևան, 2007, էջ 414-416):

1875, յունիս 21, | Հայրապէտ Զաքարեան՝ | **արտվինցի**:

Ծանոթ. Արտվին (այժմ՝ Արդվին)՝ Թուրքիայի համանուն նահանգի կենտրոնը:

1877, մայիսի 12 օրն, | Սմբատ Ա. Մարգարեանց: | Եկի Անի՝ ավիրած քաղաքն:

Յարութիւն | Մելոեան՝ **էջմիածնեցի**, | 1878 ամի 15 սեպ.:

Սիմէօն Պառաւեանց՝ **շուլաւերցի**: | Եկի այցելութե. ի 16 սեպտեմբերի 1878 ամի:

Ծանոթ. Շուլավեր (այժմ՝ Շահումյան)՝ քաղաքատիպ ավան Վրաստանի Մառնեուլի շրջանում:

Ազգային գործիչ և բարերար Սիմեոն Պառավյանցը Հովհ. Թումանյանի և Ղ. Աղայանի կնքահայրն է (**Թումանյան Հ.**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 9, Երևան, 1981, էջ 172-173): 1887 թ. գյուղացիների քվեարկությամբ ընտրվում է Շուլավերի գյուղապետ. «...մեծ յարգ ունի գիւղի հասարակութեան մէջ և որից սպասում են գիւղի համար նշանաւոր և անհրաժեշտ հերթական խնդիրների աջող լուծումը» («Մշակ», 1887, № 53, էջ 2): Այս պաշտոնին է հիշվում նաև 1895 թ. (ՀԱԴ, ֆ. 35, ց. 1, գ. 71, թ. 93): Նա գյուղի «դպրոցական շէնքերից՝ տղայոց դպրոցի շէնքը կառուցել է իր տանուտէրութեան օրով հասարակական եկամուտներից..., իսկ օրիորդաց դպրոցի շէնքը, Սուրբ Մեսրոպ եկեղեցու բակում, կառուցել էր իրեն սեփական ծախքով նրա ամուսին Գայիանէ Պառաւեանը, որի անունով և կոչւում է դպրոցը...» («Հորիզոն», 1916, № 211, 22 սեպտեմբերի, էջ 4): Վերջինս հիմնադրվել է 1894 թ. (ՀԱԴ, ֆ. 35, ց. 1, գ. 98, թ. 74-75; ֆ. 53, ց. 1, գ. 3917, թ. 175-176: «Ազգագրական հանդէս», 1901, VII-VIII, էջ 331): 1894-1896 թթ. իգական դպրոցի խնամակալներն էին Սիմեոն և Գայանե Պառավյանները (ՀԱԴ, ֆ. 35, ց. 1, գ. 77, թ. 125, գ. 98, թ. 74-75): Ս. Պառավյանը 1894-1895 թթ. հիշվում է նաև արական դպրոցի հոգաբարձուների կազմում (**Ակ.**, Նամակ Շուլավերից, «Մշակ», 1894, № 36, էջ 2: ՀԱԴ, ֆ. 35, ց. 1, գ. 71, թ. 93): Հայտնի է, որ 1893 թ. ստանձնել է գյուղի Սբ. Աստվածածին եկեղեցու երեցփոխանի պաշտոնը (ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 2906, թ. 79): 1896 թ. երկարատև հիվանդությունից չբուժվելով (**Թումանյան Հ.**, նշվ. աշխ., էջ 172-173)՝ մահանում է Ս. Պառավյանի կինը և հուղարկավորվում մարտի 17-ին «Ս. Սահակ և Մեսրոպ եկեղեցու գաւիթում գտնված՝ իր կառուցած օրիորդաց «Գայիանեան-Պառաւեան» դպրոցի առաջ...» («Մշակ», 1896, № 30, էջ 1: Տե՛ս նաև **Ասլանյան Ս.**, **Կարապետյան Ս.**, Շուլավեր, Երևան, 2002, էջ 99): Ս. Պառավյանը վախճանվում է 1904 թ. հունիսի սկզբին և ամսի 6-ին ամփոփվում տիկնոջ կողքին (**Գուրգէն**, Նամակ Շուլավերից, «Մշակ», 1904, № 121, 11 յունիսի, էջ 2):



Լուսանկարիչ Հովհաննես Քյուրքճյանը (արտատպ.՝ Քոչար Վ., նշվ. աշխ., էջ 414) և նրա մատիտագիրն այլ գրությունների շարքում (լուս.՝ հոդվածագրի, 2019 թ.)

Ալիշան | Պառաւեան՝ | **շուլաւերիցի**, | 1878:

Վասիլ Եղիազարեանց | և երկու հասարակ մահկանացուք: | 2 մայիսի, 1879 ամի, | չար..., չիմանաք, չծիծաղէք:

1879 ամի ի 8-ին օգոստոսին, | ... | Նազար Լազարով, եկայ ... | Անին ման եկայ:

Պէտրոս Աղուզում|ցեանց՝ **ղամարլիցի**, | 1880 ամի 10-ին յուլիսի:

Ծանոթ. Ղամարլի՝ այժմ Արտաշատ քաղաք:

1879-1881: Կարապետ Զալալեանց, | Լիոնիայ Մաղաքեանց, | Բագարատ Նաւասարդեանց, | Գէորգ Հէջուբեանց, | 1881/VII/13:

Ծանոթ. հասարակական գործիչ և բժիշկ Բագրատ Աբրահամի Նավասարդյանը (1852, Վաղարշապատ - 29.10.1934, Թիֆլիս) մասնակցել է 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմին Կովկասյան ռազմաճակատում որպես կամավորական: 1880 թ. Թիֆլիսում բացել է քաղաքի առաջին մասնավոր հիվանդանոցը,





Խմբանկար Մեծ Շուլավեր գյուղում, ձախից աջ՝ Սիմեոն Պառավյան, Հովհաննես Թումանյան, Մարտիրոս Նաիբ, Շաքար Միրզոյան և Վարդան Պողոսյան (լուս.՝ անհայտ հեղինակի, 1900-ական թթ.), վերջինիս մատիտագիրն այլ գրությունների շարքում (լուս.՝ հոդվածագրի, 2021 թ.) և Բագրատ Նավասարդյանին հիշատակող մատիտագիրը (լուս.՝ հոդվածագրի, 2019 թ.)

որտեղ չքավորների բուժումն անվճար էր: 1881 թ. Թիֆլիսում հիմնադրել է Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը՝ դառնալով նրա անփոփոխ պատվավոր նախագահը: 1882 թ. ճանապարհորդել է Արևմտյան Հայաստանում: Կարինի «Պաշտպան հայրենյաց» ազատագրական ընկերության հիմնադիրներից է: 1901 թ. Թիֆլիսում հիմնել է Մոսկվայի հնագիտական ընկերության կովկասյան բաժանմունքը: Հեղինակ է բազմաթիվ բժշկական հոդվածների: Նրա կերպարը Ռաֆֆին մարմնավորել է «Խենթ» վեպում (ՀՍՀ, հ. 8, Երևան, 1982, էջ 190): Մկրտիչ Ա Խրիմյան կաթողիկոսը, բարձր գնահատելով նրա հիմնած հիվանդանոցում հատկապես աղքատներին և թշվառներին օգնելու ջանքերը, 1905 թ. նոյեմբերի 24-ին կոնդակ է հղում բժշկապետին, որում նշում է. կամենալով «...իրապէս սատար հանդիսանալ մանաւանդ աղքատ դասակարգի, դուք ետուք զանդրանիկ օրինակ, հաստատելով «զԱռաջին մասնաւոր հիւանդանոցն» ի Տփխիս քաղաքի, հիմնադրութիւն, որոյ էր պտուղ անդուլ ջանից Ձերոց» (Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Է, Խրիմեան Հայրիկը եւ ցարական բռնապետութիւնը (1903-1907 թթ.), Երեւան, 2000, էջ 387): Բ. Նավասարդյանի գործունեությունը լուսաբանվել է ժամանակի մամուլում՝ «Արձագանք», «Մշակ», «Մեղու Հայաստանի», «Կոչնակ», «Հորիզոն» և այլն:

Վաղարշակ Բաբայեան, | 1881 ամի 31 յուլիսի:

Տիգրան Սաֆարեանց, | 1883 յունիս 26-ն:

Հայկ Մատակեան, | Խաչատուր Իսահակեան, | Յովհաննէս Քիւրքճեան, | 1883 օգոստ. 10:

Ծանոթ. իրավաբան Հայկ Մատակյանը մանկավարժ Գայանե Հովհաննիսյանի ամուսինն է (ՀՍՀ, հ. 6, Երևան, 1980, էջ 569): 1882-1884 թթ. կամավոր դասավանդել է Երևանի Գայանյան դպրոցում («Նոր-Դար», 1884, № 112, 6 յուլիսի, էջ 1): Ցարական իշխանությունները 1885 թ. սկզբին ամուսիններին աքսորում են Օդեսա, որտեղ էլ 1886 թ. սեպտեմբերի 26-ին վախճանվում է Հայկ Մատակյանը (**Գասպարյան Մ.**, Հայրենանվեր մանկավարժուհի Գայանե Հովհաննիսյան-Մատակյան, «Էջմիածին», 1958, Ը, էջ 52):

Հովհաննես Քյուրքճյանի մասին տե՛ս սույն հոդվածի էջ 36:



Հայկ Մատակյանի մատիտագիրը (լուս.՝ հոդվածագրի, 2019 թ.)

Աղէկսանդր | Տնկոզեանց, | 1884/6/10:

1884/VII/19, | պարօն | Արտեմ | Միրզօեանց:

Շահրիման Շահրիմանեանց, | տ. Նազլու Շահրիման{եան}եանց: | **Էջմիածնիցի**, | 1884, | յուլիսի 21:

Ես՝ Աղաբէկ Տ(է)ր-Քուզայե(ա)նց, | էկայ Լուսավորչայ եկէղէցին, | ավէրայկ տեսի, ի 1885 ամի, | յուլ(ի)սի 28: Աղաբէկ:

1885, Յոհաննէս Կարապետ|եան:

1886/4/5 եկա Անի, | **աղէքսանտրապօլցի** | Արշակ Ղարիպեանց:
Ծանոթ. Աղեքսանտրապոլ՝ այժմ Գյումրի քաղաք:

Զուրաբ Մ(ահտ)է(ս)ի-|Յովհաննէսեանց, | Հայկ Կիրակոսեանց | Մ(ահտ)է(ս)ի-Սարգսեանց, | 1887/6/7:

Դարեր անցան, դարեր | եկան, դեռ դու քնած ես մնացել, քո բոլոր | որդիքդ են որբացել, | քեզ յաւիտեան են մոռ|ացել, ով խեղճուկ Հայաստան: | Յովհաննէս | Տէր-Գէորգեան: | 1887 ամի 6/7:

Որբեր ենք անտ(է)ր հայոց աշխարհին, | չունիք հաստատ հայր ... մայր, | տանջում են մեզ բռնատերք ի մէջ(՞) | Խոր Վիրապին: | Մառսվեալ(՞) մայր չունիք նորօքէ | հօգին: | Արտագրեց **Աղէքսանտրապօլ գառի. | ղարալիցի** Նիկոլայ Տ(է)ր-Նէրսիսեան, | 1887 ամի 5 յունիսի: | Յիշատակ է գրողաց:
Ծանոթ. Ղարալի (այժմ՝ Կաքնաջուր)՝ գյուղ Լոռու մարզում:

Համազասպ | Կիրակոսեանց: | Ո՞ւր է, դու գիտե՞ս, փառքդ, | բաղտդ ու ազատ | կեանքդ: Ի հայր քո տարին: | 1887/6/7:

Մկրտիչ Զաքարեան, | 1887 թիւ 28 յունիս:

Աղէքսանդր | Մամիկոնեանց, | 1888 ամի 13 յուլիսի:

Ո՜հ, Անի, ցաւալի է և թշուառ | տեսարան: **Վերին ագուլեցի** | Մկրտիչ Ղազարեանց Տ(է)ր-Կարա|պետեանց, 1888, օգոստոսի 13-ի:
Ծանոթ. Վերին Ագուլիս (այժմ՝ Յուխարի Էյլիս)՝ գյուղ Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Օրդուբադի շրջանում:

Տխրալի էր ինձ տեսնել երբեմնեան | հռչակաւոր Անին այժմ աւերակ: | **Վերինագուլիսցի** Մկրտիչ Ղազարեանց, | Տ(է)ր-Կարապետեանց, | 1888 սեպտեմբերի 18-ին:

Յակովբ Տ(է)ր-|Կարապետեան՝ | **վերինագուլիսցի**, | 1889/6/4:

Աւագ | Բունիաթեանց, | 22 նոյեմբէրի, | 1889 ամի:



Համազասպ Կիրակոսյանցի և Հովհաննես Տեր-Գևորգյանի մատիտագրերը (լուս.՝ հոդվածագրի, 2021 թ.)

1890 ամի յուլիսի 6-ին | եկայ վողբալի | Անին: | Հմայեակ Վանեցեանց:

Այցելեցի ցավալի ավերակները | Անիին, **ախալքալակեցի** Յակոբ | Պապոեանց, 1890/7/25:
Ծանոթ. Հակոբ Պապոյանցը 1908/1909 թթ. Ախալքալաք քաղաքի ծխական դպրոցի հոգաբարձության անդամ էր («Մշակ», 1911, № 65, 29 մարտի, էջ 4): 1917 թ. հունիսի 18-ին ընտրվում է Ախալքալաքի Սբ. Խաչ եկեղեցու հոգաբարձության անդամ (**Օվի**, Հոգաբարձական ընտրություն, «Մշակ», 1917, № 151, 22 յուլիսի, էջ 4):

Տփխիսէցի Յր. | Ջանաղէանց, 1890 ամի սեպտէմ. 5:

Յարութիւն | Շահոյեանց՝ | **վաղարշապատցի**, | 1891 մայիսի 30:
Ծանոթ. ամենայն հավանականությամբ, 1918 թ. Վաղարշապատում ծնված ՀՍՍՀ վաստակավոր իռիգատոր Ռոբերտ Շահոյանի հայրն է (ՀՍՀ, հ. 8, Երևան, 1982, էջ 427):

Տուլկար Մկրտիչ | Բաղտասարեանց, 1891, 14 յուլիսի:
Ծանոթ. տուլկարը պարսկերենից թարգմանաբար նշանակում է հյուսն, իսկ թուրքերենից՝ շինարար փայտագործ:

1891 հոկտեմբեր 13: | Շահրիար Մելիք-Փարսադանեանց՝ **սիւնեցի**, | Յակովբ Փիրալեանց՝ **սղնախեցի**:
Ծանոթ. Սղնախ՝ գյուղ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանում:

Յարութիւն Բզնունիեանց, | Յոհանէս Ս(ա)հակի Յուլեանց: | Ի **վաղարշապատցի**, 1892 ամի 5 յունիսի:






Նիկոլայ Տեր-Ներսիսյանի, Հարություն Շահոյանցի, Հակոբ Պապոյանցի և Հակոբ Փիրալյանցի մատիտագրերը (լուս.՝ հոդվածագրի, 2021 թ.)

Գէորգ Տէր-|Յարութի(ւ)ն(եա)ն՝ | **դուրտուղուլի-ցի**, 1892 ամի 5 յունիսի:
Ծանոթ. Դուրտուղուլի՝ այժմ Արմավիր քաղաք:

Աղաջան Սրաբեանց, | ի **աղէքսանտրապօլ|ցի**, 1892 ամի 5-ն | յունիսի:

Կարապետ | Ս. Բմբուլեանց | և իմ երկու որդիք՝ Յակոբ և Աւետիս, և մայրն սոցա՝ | Հռոմսիմայ, եկինք, տեսինք և | ողբացանք: 1893 ամի և ի | 28-ն օգոստոսի: Արամեանց:

Էրէվանցի Գրիքոր Օհանէս Մելիք-Խոսրո(վ)եան, 1893 թվին 30-ին հոգաստոսի: | **Էրէվանցի** Գրիքոր Պէտրոսեանց՝ **գեամրէզցի**, 1893 թվին 30 հոգաստոսի: | **Էրէվանայ** չաստից Սրհակ Օհանով, 1893 թվին 30 հոգաստոսի: | Երէք եղբայր զին(ւ)որք ցանկանալով տէսնէլ | մէր աւէրակ Անին, եկանք, տէսանք:
Ծանոթ. Գեամրեզ (այժմ՝ Կամարիս)՝ գյուղ Կոտայքի մարզում:

Նիկոլայ Խաչատուրեանց, | 1894, 15 ապրիլ, | **Ղարաբաղ**:

...ք Արթինով(՞), | սուտ հայ Սկրտիչ Աբ|րահամեան Հայրապետեանց | և Յակոբ Կ(արապետ) Բմբուլեանց, | եկինք, տեսինք անբաղտ | Անին և ողբացինք: 1894 ամի և ի | 21 ապրիլի, | ...:

Հովասափ Սարգիսեան՝ բնիկ | **վանեցի**: Եկայ ի ս(ուր)ք Անի քաղաք, | ի 1894 մայիսի 4-ին:

Յարութիւն | Յակոբեան՝ **ալաշկեր|տ-թուփրաղալեցի**: | Եկայ ի քաղաքն Անի, | որ աւեր կայ, և շատ տրտում | եմ ի վերայ նորայ, | ի 1894 մայիսի 4-ին:
Ծանոթ. Ալաշկերտ-թուփրաղալե (այժմ՝ Էլեշքիրթ)՝ քաղաք Թուրքիայի Աղրը նահանգում:

Արշակունի, | Վրամշապուհ | եկիք ի 1894 ամի | 13 յունիսի: | **յԱղէքսանտրապօլցի**:

Բարսեղ Ս. Յովհաննիսեանց՝ | **գեորխանեցի**, 1894 ամի 13-ն յունիսի:
Ծանոթ. Գեորխանե (այժմ՝ Էշմեյազը)՝ գյուղ Թուրքիայի Կարսի նահանգում:

Սմբատ Սմբատե(ան)ց, | 1894 թ. օգոս.: | Ս. Սմբատեան:

Ղարաղալայ: | Աբրահամ Երանոսեան Եշիլբաշեան, Կոստանտին Ապաջիեան, | Աբրիտազ Յարութիւնով, | եկանք 1894:
Ծանոթ. Ղարաղալա (այժմ՝ Քարաքալե)՝ գյուղ Թուրքիայի Կարսի նահանգում:

Մնացական | Աղաբաբեան, | 1894:

Տիգրան Միքայէլեան՝ | **սամշիւլդեցի**: | 1895 | մայիսի 25:
Ծանոթ. Սամշյուլդե (այժմ՝ Սամշվիլդե)՝ գյուղ Վրաստանի Թեթրիծղարոյի շրջանում:

Սիրտդ | կտրատվում է, երբ | տեսնում է հայոց | անցեալ փառքի փշրանքները: | Ո՞հ, եթէ կերտվածքների քար ու | կիրը մարդու սիրտը կը ոգէվորէ, | արդիոք ինչ դրութեան մէջ կը լինի | մարդս, եթէ դարեր առաջ փառապանծ | Անին տեսնէր: | **Պարսկաստանցի** Յարութիւն | Դիլանեանց, (18)95 11 օգոստոսի:



Հարություն Դիլանյանցի մատիտագիրը (լուս.՝ հոդվածագրի, 2021 թ.)



Երվանդ Տեր-Գևորգյանին հիշատակող մատիտագիրը (լուս.՝ հոդվածագրի, 2021 թ.)

1895, | Սկրտիչ աբեղայ:

1895 թուվին մենք՝ **Շիրակ** գաւառի **Մօլլագէօք-չայ** գիւղի | բնակիչք՝ Հանբար Վարդանեան, Գրիգոր Նահապետեան(՞), | Երուանդ Տ(է)ր-Գէւորգեանց և Մէլիք Յ...եանց, | եկանք մէր մայր խեղճ Անին տէսնելու: Ո՞հ, | որքան դառն տէսարան:

Ծանոթ. Մոլլագոքչա՝ այժմ Մարալիկ քաղաք:

Մարալիկցի Երվանդ Տեր-Գևորգյանը հիշվում է 1914 թ.: 10 ռ. է նվիրել՝ հոգուտ հայ կամավորների («Գաւառի ձայն», 1914, № 114, 7 դեկտեմբերի, էջ 4):

Աղէքսանդր Ջանիբէկեանց, | 1896/X/1:

Մնացական Տէր-|Մարտիրոսեան, | 1897 12 յուլիսի:

Մնաս բարեաւ, իմ աւերակ, | տխուր Անի: | Աւետիկ Տ(է)ր-|Յովհաննէսեան տէ(ր) Սկրտչի՝ | **խլի-ղարաքիլիսեցի**, | 1897 թ., 20 | սեպ.:

Ծանոթ. Խլի-ղարաքիլիսե (այժմ՝ Ազատան)՝ գյուղ Շիրակի մարզում:

Աւետիկ Տ(է)ր-Յովհաննէսեան՝ | **խլի-ղարաքիլիսեցի**, | 1897 թ. 20 սեպտեմ.:

Ես՝ **բաբերդցի** | Պօղոս Սարգիսով, | եկայ ի քաղաքն Անի | 1897 սեպ. 20:

Ծանոթ. Բաբերդ (այժմ՝ Բայբուրթ)՝ Թուրքիայի համանուն նահանգի կենտրոնը:

Բաբերդցի Պօղոս | Սարգիսեան, եկայ ի քաղա|քն Անի՝ ուխտով, 1897 սեպ. 20:

Ես եմ՝ **բաբերդցի** Գաբրիէլ Նէրսէսեան, | **էջ-միածնէն** քայլելով եկած եմ | Անի աւերակ քաղաքն, | 1897 սեպտեմբեր 20: Երկու | հոգով:

Ողբացի, | (18)98/VIII/12: | **Աղքիլիսեցի** | Արշակ Տէր-Գէորգեանց, | Վարդան Սրխզեանց:

Ծանոթ. Աղքիլիսե (այժմ՝ Կրաշեն)՝ գյուղ Շիրակի մարզում:

Թաթևոս Աւագեանց և | Յովհաննէս և Զաբէլ Միրիմանեան, հոս այցելեցինք | Անի, 1898 ամի 16-ն օգոստոսի:

1899/VIII/5, Ստեփաննոս Գաբրիէլեան:

Մելքոն Ադամեանց՝ | **կաղզվանցի**, | 1900/6/2:

Ծանոթ. Կաղզվան (այժմ՝ Քաղրզման)՝ քաղաք Թուրքիայի Կարսի նահանգում:

Արտաշէս | Քանանեան, | 1900:

Ահարոնեան | Անտոն, | Արտաշէս Քանանեան: | **Կաղզուանցի**, | 1901 թ. 20-ն յուլ.:

Ծանոթ. Անտոն Ահարոնյանը 1912 թ. հիշվում է Ազգային համախորհրդակցության պատգամավորների ցուցակում՝ որպես դաշնակցական պատգամավոր Կաղզվանից (Հակահայկական խորհրդատվություններ (1912-1920 թթ.), Երևան, 2004, էջ 240):

Տիգրան Սարաֆեանց, | 1901/8/12:

Շմաւոն Ալթունեանց, | Կարապետ Փոլատեանց: | **Կարնեցի**, 1903 | յուլիս 13-ին: | Մտկից չանցած յանտիպել, | յաչողցրէց բաղտը մեզ տեսանել, | ուրախութեամբ եկանք Անի, | գնում էնք տրտում, թողնելով | կայծեր հայերիս սրտին, | մնաս բարեաւ, ա՜խ, տու Անի, քանթո|ղիտ տունը քանտուի:

Յոլակ Խաժակնեանց, | 28/VII/1903: | Ծառուկ | Արապանեանց:

Սմբատ | Աթամդալ(եան) Շա..., | 1904 թ. յունիս 15:

Հրաչիայ | Բասենցեանց, | 1905:

Եկայ Անի 1907 թ., VII/30, | **թազագիւղացի՝ Երևանի** գաւ., Յովհաննէս Խ. Յովհաննիսեանց: | 3 ընկեր էինք, որոնցից մէկը | Խաչատուր Ղազարեանն էր, միւսը Մարգար | Տ(է)ր-Մարգարեանցն էր՝ **երևանցին** և ես՝ Յ. Յովհ(աննիս)եանց:

Ծանոթ. Թազագյուղ (այժմ՝ Նոր Գյուղ)՝ գյուղ Կոտայքի մարզում:

Վիրաբույժ Հովհաննես Հովհաննիսյանը (1865-1935) ավարտել է Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետը 1891 թ.: 1895 թ. նշանակվել է Երևանի քաղաքային հիվանդանոցի գլխավոր բժիշկ: Կատարելագործվել է Մոսկվայի (1889), Բեռլինի



Անտոն Ահարոնյանի մատիտագիրն այլ գրությունների շարքում (լուս.՝ հոդվածագրի, 2021 թ.)



Հովհաննես Հովհաննիսյանի մատիտագիրը (լուս.՝ հոդվածագրի, 2019 թ.)

(1904), Վիեննայի (1906) և Փարիզի (1908) վիրաբուժական կլինիկաներում (ՀՍՀ, հ. 6, Երևան, 1980, էջ 571): 1910 թ. հիշվում է որպես Երևանի թեմական խորհրդի անդամ (Վավերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Ը, Մատթէոս Բ Իզմիրլեան, Երեւան, 2001, էջ 468): 1911 թ. Երևանում բացել է սեփական վիրաբուժական հիվանդանոց (ՀՍՀ, հ. 6, էջ 571): 1914 թ. նրան է վստահվում Հայկական հիվանդանոցի Երևանի նորաստեղծ բաժանմունքի կառավարումը («Հորիզոն», 1914, № 242, 31 հոկտեմբերի, էջ 3): Եղել է Կովկասյան հայկական բարեգործական ընկերության Երևանի բաժանմունքի նախագահ, Քաղաքների միության Երևանի կոմիտեի բժշկական բաժնի վարիչ, Երևանի բժշկական ընկերության նախագահության անդամ: Գրել է աշխատություններ վիրաբուժության տարբեր հարցերի վերաբերյալ (ՀՍՀ, հ. 6, էջ 571):

Բժիշկ Մ. Տեր-Մարգարյանը 1914 թ. մարտի 23-ին Երևանի թեմական դպրոցի սաների մասնակցությամբ կայացած ժողովում ընտրվում է դպրոցի հոգաբարձուների խորհրդի նախագահ (**Աւետիսեան Մ.**, Երեւանի թեմական դպրոցի 75-ամեայ յոբելեանը, «Հորիզոն», 1914, № 69, 30 մարտի, էջ 2):

1913 թ., **փալտրվ(ա)նցի** | Լէվոն Բալբեկ:
Ծանոթ. Փալտրվան (այժմ՝ Դուրաքլը)՝ գյուղ Թուրքիայի Կարսի նահանգում:

Փալտ(ր)վ(ան)ցի, | 1913 թ., Գալուս(տ) Համբարձումեան:

Մէսրոպ Ակաժանեանց՝ **ղզլարցի**, | և տէր Անտրիեազ Խրիստանեանց, | տէր Գեվօրգ Տէր-Կոստանեանց, | եկանք այս ողբալի տեղ և շատ լացինք:
Ծանոթ. Ղզլար՝ քաղաք Դաղստանում:

Իսահակ Տէր-Իսահակեանց՝ **երևանցի**: | Բայց իմ աղէտ, բայց վաղամէր, | էլ արտասուք ջերմագին, | կասեն սփոփանքով պատգամ, | ախ քո անբոյժ սուգն ու ոգին, | ով մայր Անի ...ան...:
Ծանոթ. Իսահակ Տեր-Իսահակյանցը 1896 թ., ի հիշատակ հանգուցյալ հոր՝ Աստվածատուր քահանա Տեր-Իսահակյանցի, 100 ռուբլի է նվիրել Երևանի թեմական դպրանոցին (**Անտոնյան Գ.**, **Արշակունի Ա.**, Նամակ խմբագրության, «Մշակ», 1896, № 49, էջ 2):

Էրզրումեցի Բագրատ Քիւչուքով: | **Բասէնցի** Ապրիհամ Վարթանով: | **Զանգիթափէցի** Սարո Մարտիրոսով:
Ծանոթ. Զանգիթափան, որպես Ալագյազի կամ Լենինականի գյուղերից, հիշվել է 1923 թ. «Խորհրդային Հայաստան» և 1939 թ. «Ավանգարդ» թերթերում, որից հետո այլևս չի հիշատակվել (Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, կազմ. **Հակոբյան Թ.**, **Մելիք-Բախշյան Ս.**, **Բարսեղյան Հ.**, հ. 2, Երևան, 1988, էջ 266):

Գարեգին | Ենգիբարեանց՝ | **վաղարշապատցի**:
Ծանոթ. գրականագետ Գարեգին Խաչատուրի Ենգիբարյանը (1863-1920) ավարտել է Մոսկվայի համալսարանը (ՀՍՀ, հ. 3, Երևան, 1977, էջ 514):

Մանուկ Խաչատրեանց՝ **վաղ|արշապատցի**: | Գեղամ Տէր-Մէսրովբեանց՝ | **զարնջեցի**: | Սկրտիչ Պօղոսեանց՝ | **զէյլացի**:
Ծանոթ. Զարնջա՝ գյուղ Արագածոտնի մարզում:
Զեյվա (այժմ՝ Առատաշեն)՝ գյուղ Արմավիրի մարզում:

Սաթու Սաթունեանց, | **Վաղարշապատ**:

Տխրալի էր | ինձ տեսնել մէր հռչակաւոր | Անին այժմ ա|ւերակ: **Ս(ուրբ) Էջմիածնի** | միաբան Կիւրեղ Սարկաւագեանց:

Կիւրեղ ք(ահանա) Սար|կաւագեանց:

Ս(ուրբ) Էջ(միածին) Կիւրեղ Սարկաւագեանց:

Միքաէլ | Դիլանեանց՝ | **ղուտնիղշլաղցի**:
Ծանոթ. Ղուտնիղշլաղ (այժմ՝ Հովտաշեն)՝ գյուղ Արարատի մարզում:

Ղուտնիղշլաղցի | Արամ, ...եղ, Մարտիրոս, | Ենոկ, Արշակ, | Վարդան:

Մնացական Աբգարեանց՝ | **ղափուլեցի**:
Ծանոթ. Ղափուլ (այժմ՝ Գուսանագյուղ)՝ գյուղ Շիրակի մարզում:

Աւ... ...ացպանյանց: | Օր. Աշխեն Տէր-Պողոսեանց՝ | **աղէքսանդրապօլցի**:

Արամ Կիրակոսեան(՞)՝ **բիթլիսցի**: | Ուրախութեամբ եկա ի ս(ուր)ք Անի, | բայց տեսնելով հայոց աւերակներ, | ես շատ լացի:







Իսահակ Տէր-Իսահակյանցի մատիտագիրն այլ գրությունների շարքում, Գարեգին Ենգիբարյանցի և Սահակ Առաքելյանի մատիտագրերը (լուս.՝ հոդվածագրի, 2021 թ.)

Մշեցի Արմենակ | Շատովեան, Անի քա... | փառք ...: | Արմենակ | Շահմուրատեան:

Հէրիք լաս, հէրիք ողբաս, իմ սիրուն Անի, գուցէ մի օր բաղտը դարձեալ ժպտա Ձեզ: | Երուանդ Գէորգ Բաղրամեանց, | Յովհաննէս Ամրջանեանց, | Սահակ Առաքէլեան՝ **սալմաստցի**:

Ծանոթ. Սալմաստ (այժմ՝ Սալմաս)՝ քաղաք Իրանի համանուն շրջանում:

Ցոնեցի բնակիչ | Թադէոս Անտոնեանց՝ | **Գօղթան** կավառից:

Ծանոթ. Ցոնա (այժմ՝ Ջեննեբ)՝ գյուղ Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Օրդուբադի շրջանում:

Հին-Նախիջեւանցի | Տէր-Յարութիւնեան:

Պրն. Խաչատուր Աբազեանց՝ | **ղազախեցի**:

Ծանոթ. Ղազախ (այժմ՝ Քազախ)՝ քաղաք Ադրբեջանի համանուն շրջանում:

Սմբատ Ճուղուր|եանց Վաղօտեան:

Սէրկօ Թուխիկեանց:

Արսէն | Տէր-Առաքել|եանց:

Բարսեղ | Դաւիթեանց:

Գէորգ Չօլախեանց:

Աւետիս Միրզայեանց, | Ղազար Ղազարեանց, | Կոստանտին Ղազարեանց, | Երուանդ Ղազարեանց, | Վարթան Նալբանտեանց, | Արշակ Ղազարեանց, | Աղաբէկ Սարգսեանց:

Թող իմ ակունք յուսով սպասեն, | [թո]ղ իմ ազգային ...անին պսակեն: Մինաս քինյ. Տէր-Պետրոսեան:

Ես՝ Շահանսար | Նալպանեանցս, | եկի ի քաղաքն | Անի, | ի եկէղեցին | սուրպ Լուսաւոր|ջի, թվին | փրկչի | **...:**

Մարտիրոս Տէր-Պետրոսով, | Եղիշ Մարտիրոսեան, | Աղասի(՞) Մարտիրոսեան, | Բաբկէն Տէր-Պետրոսեան:

Մի առ մի դիտեցի շրջակայ շ(էնք)երդ, | կործանուած է ամուր շէնքերդ Անի, | Յարութիւն | Վալեսեանց:

Չօ քարասիրտ մարդ, | միթէ հայը վախկոտ է, | լեզուդ քեզ քաշէ, | վալլայ, ամօթ է:

Ինչ քարսիրտ լինի տեսնողը պատկերն և հ...ավ | չարտասուէ, չլայ զգալով ցաւերն Հայաստանի: | Պարծանք, փառք, պատիվ իւր հարազատին՝ այժմ







Թադևոս Անտոնյանցի և հիննախիջևանցի Տեր-Հարությունյանի մատիտագրերը, ինչպես նաև անհայտ հեղինակի վերջին մատիտագիրը (լուս.՝ հոդվածագրի, 2019 թ.)

նվաղած: | Թշուառը չունի ոչ տուն, ոչ տեղ ու ոչ մի կտոր հաց: | Մնացեալը տխուր ներկան, թշուառ ապագան ..., | իմ խեղճ Անի: | Վանքեր քարուքանդ և Ա... և Մասիս ... | ում դիմէց լալով, նա խլեց հավատն(՞) Հայաստանի: | Ուսում, գիտութիւն, լուսաւորութիւն,| Անի այս միայն է լուսոյ լապտէր Հայաստանի, | թող խրախուսուի քո տ...ը անհաղթ(՞) կուրցքիցդ, | իբրեւ որդի և մայր հայոց:



Մատիտագրերում նշված տեղանունները (քրտզ.՝ հոդվածագրի, 2022 թ.)

ՍՈՎԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՀՐԱՎԱՐԻ ՎԻՄԱԳՐԵՐԻՑ ՄԵԿՈՒՄ

Էմմա Աբրահամյան

Այս փոքրիկ հոդվածով անդրադառնում ենք ՀՀ Սյունիքի մարզի Մեղրու շրջանի Վահրավար[1] գյուղի վիմագրերից մեկին, որը կարևոր է Հայաստանի ԺԹ դարի երկրորդ կեսի պատմության դրվագներից մեկի ուսումնասիրության առումով:

Խնդրո առարկա վիմագրի բովանդակությունից պարզվում է, որ այն կերտվել և կանգնեցվել է 1880 թ. ստեղծված աղետալի իրավիճակի՝ համատարած սովի հետևանքներից մեկի՝ հացամթերքի թանկությունը շեշտելու նպատակով: Սակայն մինչ արձանագրությանն անցնելը հայ ժողովրդին պատուհասած այդ աղետի մասին պատկերացում կազմելու համար անհրաժեշտ ենք համարում համառոտ նկարագրել ստեղծված կացությունը:

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի հետևանքով Հայոց աշխարհը հայտնվում է մի նոր փորձության՝ սովի ճիրաններում: Վերջինս արտահայտվում էր գլխավորապես կա՛մ ցանքատարածությունների ոչնչացման, կա՛մ դրանց չմշակման և կենսական անհրաժեշտության առաջին մթերքների թանկության, կա՛մ մահացության բարձր աստիճանի և արտագաղթի եղանակով: Խնդիրն արծարծել են թե՛ ականատեսները և թե՛ ժամանակի մամուլը: Սովի մասին հիշատակումներով առանձնանում է հատկապես Վանի նահանգը: Այս առումով կարևոր են 1876-1880 թթ. Վանի առաջնորդական փոխանորդ Երեմիա Տկանցի[2] տեղեկագրությունները: Օրինակ՝ 1880 թ. սկզբին ցավով գրում է. «1877 թուականէն սկսեալ մինչև 1879 թուականի վերջեր սոսկալի սովն տանջեց զՎասպուրական աշխարհս, որոյ վասն ունիմք ընդարձակ գրիչ: Զի եթէ կառավարութեան պաշտօնեայք մեր կիսոյ չափ հեռատեսութիւն ունենային և ասպատակութիւն և աւարառութիւն արգելելով երկրագործութեան խափանման պատճառ չտային, այն սովն տեղի չի պիտի ունենար: Բայց ավա՜ղ, զի մեք բողոքեցինք այս մասին և մեք լսեցինք»[3]: 1879 թ. նոյեմբերի 20-ին Կոստանդնուպոլսի պատրիարքարանին հղած գրությամբ էլ հաղորդում է սովի և արտագաղթի մասին. «Պատերազմի հարուածներուն անդուլ հարստահարութեանց, կառավարութեան անհոգութեան պատճառաւ սով տիրած է, ժողովուրդ յուսահատած կգաղթեն...»[4]:

1880 թ. մարտի 14/26-ին «Մշակ» թերթին Վանից ուղարկված նամակում նկարագրվում է սովի ճիրաններում հայտնված մարդկանց ծանր դրությունը. «...*Աղբակայ* մէջ սովն անբացատրելի կերպիւ սաստկացած է, 150 ոգի անդ սովամահ եղած են, հարիւրաւոր աղջկունք ի գիւղօրէից փախստական Վանայ քաղաքին փողոցներուն մէջ կը թափուին և կը պառկին, երեք հարիւր մանուկ անօթութենէ հիւանդ են...»[5]:

Առավել սահմռկեցուցիչ է Էրզրումի նահանգի համանուն գավառի *Մուտուրկա* գյուղում կատարվածը: Այստեղ ուշագրավն այն է, որ նամակագիրը հատկապես նշում է ստեղծված այն ծանր իրավիճակը, երբ մարդիկ ունակ էին ուտելու անգամ հարազատի միսը. «Այդ գիւղացի մի հայր, հասնելով սովից խելագարութեան, մորթում է իր սովից որբացած միակ երեխին և խորովելով նորան՝ սկսում է յագեցնել սովի տանջանքը»[6]:

Հիշատակելի է նաև նույն նահանգի *Խնուս* գավառում 1880 թ. մայիսի 24-ին արձանագրված հետևյալ տեղեկությունը. «...գարուն մտանք... իսկ սերմանողք հազուագիւտ են...: Մարդիկ ցորեն կը փնտռեն սերմանելու եւ հաց ուտելու, բայց չգտնուիր...: Եթէ գաւառիս բնակչաց օգնութիւն չհասնի, շատերը սովալլուկ պիտի կորսուին: Հիմա շատերը կանանչ խոտ ուտելով, ոմանք ալ քանի մը ամիսներէ հետէ սատկած անասնոց դիակներ ուտելով, եւ ոմանք ալ մուրալով կ'ապրին եւ այլք մեռած են անօթութենէ...: Այս աղետից վրայ աւելի ծանր են գաղթական չէրքէզաց ըրածները, որոնք ուր որ ցորեն գտնեն, յարձակելով կը յափշտակեն եւ կը տանին»[7]:

Ինչ վերաբերում է սովի հետևանքով կենսամթերքի գնաճին և դրա հետ կապված գողությունների թվաքանակի ավելացմանը, ապա դրանց վերա-

1 Գտնվում է Մեղրիից 8 կմ հյուսիս-արևմուտք, իսկ Ագարակից՝ 9,5 կմ հյուսիս՝ Վահրավար գետի աջակողմյան լեռնալանջին (N 38.950642, E 46.175814, ծ. մ. միջին բարձրությունը՝ 1287 մ):

2 Երեմիա վարդապետ Տկանց (1829-1885). հեղինակել է «Ճանապարհորդություն Բարձր Հայք և Վասպուրական 1872-1873 թվականներին» (Երևան, 1991, աշխատասիր.՝ Հ. Պողոսյանի): Նրա ձեռագրական ժառանգությունից մի աշխատություն էլ՝ «Տոհմային հիշատակարան» (գիրք Ը) խորագրով, հրատարակության է պատրաստել Հ. Մուրադյանը (Երևան, 2018):

3 Մաշտոցի անվան Մատենադարան, Զանազան հեղինակների ֆոնդ, **Երեմիա Տկանց**, վավ. 4182, թ. 56:

4 Նշվ. վավ., թ. 543:

5 **Կիլպէնկեան Ս.**, Նամակ Թիւրքիայից, «Մշակ», 1880, № 55, 2/14 ապրիլի, էջ 3:

6 «Մշակ», 1880, № 58, 5/17 ապրիլի, էջ 3:

7 **Միրաքեան Մ.**, Խնուսէն նամակ մը, «Աւետարեր», 1880, № 30, 27 յուլիսի, էջ 119: Տե՛ս նաև **Քոլոթոշյան Ռ.**, Խնուս, Երևան, 2021, էջ 20:





Վահրավարի վիմագիրը (լուս. և գրչ.՝ Ս. Դանիելյանի, 2016 թ.)

բերյալ բազմաթիվ ահազանգեր են հնչել ժամանակի մամուլում: Օրինակ, *Մեղրիից* «Մշակ» թերթին ուղարկված հաղորդագրության մեջ շեշտվում է, որ սովի հետևանքով առաջացած «թանգութեան պատճառով աւազակութիւնները օրըստօրէ բազմանում են»[8]: *Շուշիից* էլ գուժում են, թե «...ալիւրի պուդը[9] արժէ 4 ռուբլ: Քաղաքի հայ բնակիչներից մինչև 500 ընտանիք համարեա թէ ուտեստի պաշար չունեն»[10]: Նույն ժամանակաշրջանում *Նոր Բայազետում* «...ալիւրի պուդը, որ առաջ ծախվում էր 50 կոպէկով, այժմ արժէ 2 ր. 60 կ. և բարձր»[11], *Ագուլիսում՝* «Ցորենի պուդը. որ սովորաբար 40 կոպէկ արժէ..., բարձրացել է այժմ մինչև 7 ռուբլ»[12], իսկ *Իգդիրում՝* «...հացը օրըստօրէ թանգանում է. կորեկի մի խալվարը (30 պուդ), որ առաջ արժեր 2-3 ռուբլ, այժմ 150 ռուբլով չէ ճարվում: Ցորենի խալվարը ծախվում է 200 ռուբլով, միւս պաշարէղէնները դրանց համեմատ թանգ են»[13]:

Սալմաստից էլ տեղեկագրել են, թե «...հացի թանգութիւնը սովի կերպարանք է ստացել. տեղային ժողովուրդը մեծ նեղութեան մէջ է»[14]:

Օրինակներն այսպես անվերջ կարելի է շարունակել, սակայն այսքանն էլ բավական է պատկերացում կազմելու սովի և անդառնալի հետևանքների մասին:

Այժմ անդրադառնանք մեր բուն նպատակին՝ այն վիմագիր արձանագրությանը, որի բացառիկ բովանդակությունը ևս հավաստում է սովի տարածման հետևանքով հացեղենի թանկության մասին: Ճիշտ է, վիմագրում բառացի չի արծարծվում սովի մասին, սակայն գնաճն անուղղակիորեն կապված է դրա հետ:

ՀՀ Սյունիքի մարզում՝ Մեղրի քաղաքից մոտ 6 կմ հարավ-արևմուտք գտնվող Ագարակ ավանում՝ Շինարարների փողոցում՝ Ախպերջանյանների տան մոտ, ՀՃՈ հիմնադրամի արշավախումբը[15] 2016 թ. վավերագրում է ուղղանկյանը մոտ եզրագծով արձանագիր մի սալաքար, որը, ցավոք, «պոկված» է իր բնական միջավայրից: Ըստ տեղացիների վկայության՝ բերվել է նույն շրջանի՝ միջնադարյան հուշարձաններով հարուստ Վահրավար գյուղից: Վիմագիրը փորագրված է անվարժ գրչի ձեռքով, պահպանված չէ ո՛չ տողերի և ո՛չ էլ տառերի համաչափությունը: Ստորև ներկայացնում ենք ութ տողից կազմված արձանագրությունը.

Վասն 1880 դարուն | հացըն փութըն դառաւ | դասն մանէթ ուռուսաց | փող: Աստուած ազատէ, էլ չի | դեսնէք էնպէս հրաշքն: | Ես մեռնեմ, դարնամ հող, այս | գիրըս մնայ յիշատակող: Մկրտիչ | Առաքէլեան Մէլիք-Ախպերջանեանց:

Հրատ. **Մանուչարյան Ա.**, Հացի թանկության վիմագիր հիշատակություններ Մեղրու և Մարտունու շրջաններում, «Հայաստանի Հանրապետությունում 1993-1995 թթ. հնագիտական հետազոտությունների արդյունքներին նվիրված 10-րդ գիտական նստաշրջան. զեկուցումների թեզեր», Երևան, 1996, էջ 51:

Տարընթերցում. ***Մանուչարյանի*** մոտ *ազատէ, էլ չի*-ի փոխարեն՝ *ազատել չի, էնպէս*-ի փոխարեն՝ *էսպես, գիրըս*-ի փոխարեն՝ *գիրս, Առաքէլեան Մէլիք-Ախպերջանեանց*-ի փոխարեն՝ *Առաքելեան Մելիք-Ախպերջանեանց*:

Ծանոթ. հրաշք բառն օգտագործված է անբնական, չտեսնված երևույթ իմաստով (Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Գ, Երևան, 2004, էջ 310):

Մեր խոսքն ամփոփելով՝ կարելի է ասել, որ այս արձանագրությունը Հայաստանի ԺԹ դարի պատմության դեպքերից մեկի՝ 1877-1880 թթ. համատարած սովի ուսումնասիրման արժանահավատ և իր բովանդակությամբ սակավադեպ «քարե վավերագիր»-ներից է:

8 «Մշակ», 1880, № 57, 4/16 ապրիլի, էջ 3:
9 Ծանրության ռուսական չափ, որը հավասար էր 16,3 կգ:
10 «Մշակ», 1880, № 57, 4/16 ապրիլի, էջ 3:
11 «Մշակ», 1880, № 35, 5/17 մարտի, էջ 3:
12 «Մշակ», 1880, № 66, 24 ապրիլի/6 մայիսի, էջ 3:
13 «Մշակ», 1880, № 79, 14/26 մայիսի, էջ 2:
14 «Մշակ», 1880, № 44, 18/30 մարտի, էջ 3:

15 Հուշարձանագետ Սամվել Կարապետյանի առաջնորդությամբ:

ՁՈՒԱՏ ՆԱՀԱՏԱԿԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՏԱՊԱՆԱԳԻՐԸ ԴՍԵՂԻ ԲԱՐՁՐԱՔԱՇ ՍԲ. ԳՐԻԳՈՐ ՎԱՆՔՈՒՄ

Արսեն Հարությունյան

Վանքի տեղադրությունն ու հուշարձանախումբը. Պատմական Մեծ Հայքի Գուգարք նահանգի Տաշիր գավառում է գտնվում հնամենի Դսեղ գյուղը (այժմ՝ ՀՀ Լոռու մարզում), որից մոտ 2 կմ հյուսիս-արևելք՝ Մարց գետի ձախափնյա ձորալանջին, տեղակայված է միջնադարյան Հայաստանի հոգևոր-մշակութային կենտրոններից մեկը՝ Բարձրաքաշ Սբ. Գրիգոր վանքը: Հուշարձանախումբը, որը բաղկացած է կից երեք հիմնական շինություններից՝ միանավ թաղակապ ու գմբեթավոր եկեղեցիներից և քառամույթ-կենտրոնակազմ գավթից, մեզ է հասել կիսավեր և անմխիթար վիճակում: Հայտնի է, որ վանական համալիրը մասնակի նորոգվել է 1939 թ., իսկ ավելի ուշ՝ 1950 և 1969 թթ., այստեղ կատարվել են պեղման-մաքրման աշխատանքներ[1]:

Համալիրի կառույցներից ժամանակագրորեն վաղագույնը միանավ փոքր եկեղեցին է, որը, ըստ ուսումնասիրողների, առնվազն Թ-Ժ դդ. շինություն է[2]: Միանավ եկեղեցու հարավային պատին կից 1221 թ. սկսվել և ոչ ուշ, քան 1227 թ. ավարտվել է վանքի գլխավոր Սբ. Աստվածածին եկեղեցու կառուցումը Մամիկոնյան-Համազասպյան իշխանական տոհմի երևելի ներկայացուցիչներից Սարգսի որդու՝ Մարզպանի նախաձեռնությամբ[3], որի մասին է վկայում եկեղեցու հարավային պատին՝ արտաքուստ (գավթի մեջ) պահպանված վիմագիրը. «Թուին ՌՀ (1221)... ես՝ Մարզպան, որդի Սարգսի, թոռն Համազասպեանց, յազգէ Մամիկոնեանց, սկսա շինել զԲարձրաքաշս վանք եւ գերեզմանատեղ ինձ...»[4]: Ինչ վերաբերում է գավթի կառուցման ժամանակին, ապա 1969 թ. պեղման-մաքրման աշխատանքների ընթացքում հայտնաբերված ութ քարաբեկորների արձանագրության ընթերցումից պարզվում է, որ այն տեղի է ունեցել թաթար-մոնղոլների՝ Զաքարյան Հայաստանին տիրելուց հետո (1236 թ.). «Ի ժամանակի, յորում տիրեց թաթարն չորից ծագած երկրի արեւելից մինչեւ յարեւմուտս... սկիզբն շինութեան տանս եղեւ ի նեղ եւ դառն ժամանակի»[5]: Հավելենք, որ գավթի մյուս վիմագրերն անուղղակիորեն պարզում են, որ շինարարական աշխատանքները տևել են առնվազն մինչև 1246-1247 թթ.[6]:

Բարձրաքաշ Սբ. Գրիգոր վանքի հատակագիծը (չափ.՝ Ն. Քալանթարյանի և Գ. Գյուլամիրյանի, 2021 թ.)

Նորահայտ տապանագիրը. Սույն ուսումնասիրության խնդրո առարկան Բարձրաքաշ Սբ. Գրիգոր վանքի միանավ եկեղեցու արևելյան կողմում՝ անմիջապես պատին դեմ հանդիման վերջերս հայտնաբերված տապանաքարի արձանագրությունն է, որի վերծանության համաձայն՝ ննջեցյալը 1308 թ. թաթարների ձեռքով սպանված ոմն Զուատն է:

1 **Շախկյան Գ.**, Լոռի. պատմության քարակերտ էջերը, Երևան, 1986, էջ 36:

2 **Մարգսյան Գ.**, «Բարձրաքաշ» վանքը և նրա վիմագրությունը, «Էջմիածին», 1951, Է-Ը, էջ 58: Տե՛ս նաև **Շախկյան Գ.**, նշվ. աշխ., էջ 37: Դիվան հայ վիմագրության, պրակ IX (այսուհետ՝ ԴՀՎ IX), Լոռու մարզ, կազմ.՝ **Բարխուդարյան Ս.**, **Ղաֆադարյան Կ.**, **Սաղումյան Ս.**, Երևան, 2012, էջ 356:

3 Դեռևս վաղ միջնադարում մեծ համբավ ունեցող Մամիկոնյան իշխանական տունը տիրույթներ ուներ Տարոնում, Տայքում, Բագրևանդում և այլ շրջաններում, իսկ ավելի ուշ՝ ԺԲ-ԺԳ դդ., այս տոհմի շառավիղներից Մամիկոնյան-Համազասպյաններին տեսնում ենք հյուսիսարևելյան Հայաստանում, որոնց իշխանության աշխարհիկ կենտրոնը Դսեղ գյուղն էր, իսկ հոգևոր կենտրոնը՝ Բարձրաքաշ Սբ. Գրիգոր վանքը (տոհմի մասին մանրամասն տե՛ս **Քիւրտեան Յ.**, Դսեղի կամ Համազասպեան-Մամիկոնեաններու տունը, «Սիոն», 1970, № 3-4, էջ 157-176: **Նույնի՝** Դիտողություններ «Մամիկոնյան-Համազասպյան տոհմը Հյուսիսային Հայաստանում XII-XIII դարերում» հոդվածի մասին, «ԼՀԳ», 1971, № 5, էջ 93-96: **Շահինյան Ա.**, Մամիկոնյան-Համազասպյան տոհմը Հյուսիսային Հայաստանում XII-XIII դարերում, «ԼՀԳ», 1968, № 3, էջ 84-93: **Մարգսյան Գ.**, Նոր նյութեր Մամիկոնյան-Համազասպյան իշխանական տան վերաբերյալ, «ԼՀԳ», 1979, № 3, էջ 70-79):

4 ԴՀՎ IX, էջ 362, արձ. 802:

5 Նշվ. աշխ., էջ 382, արձ. 828:

6 Դսեղի և մասնավորապես Բարձրաքաշ Սբ. Գրիգոր վանքի վիմագրերից ավելի քան հինգ տասնյակը հրատարակվել է ինչպես տեղագրական-նկարագրական բնույթի աշխատություններում (Ս. Ջալալյանց, Ե. Լալայան, Հ. Ոսկյան), այնպես էլ փոքրածավալ ուսումնասիրություններում (Գ. Սարգսյան, Ս. Բարխուդարյան, Ա. Շահինյան, Գ. Կարախանյան): Վերջին տարիներին դրանք ամբողջացվել և նոր վիմագրերով համալրված հրատարակվել են «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի համապատասխան պրակում՝ 129 միավոր (տե՛ս ԴՀՎ IX, էջ 361-411, արձ. 799-927):

Միանավ եկեղեցու հատակագիծը (չափ.՝ Ն. Քալանթարյանի և Գ. Գյուլամիրյանի, 2021 թ.) և Զուատի տապանաքարը (լուս.՝ Ա. Նալբանդյանի, 2021 թ.), որը հատակագծում նշված է կարմիրով

Տապանաքարն ի հայտ է եկել ՀՀ ԿԳՄՍ նախարարության պետական ծրագրով «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի և ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի կողմից 2021 թ. Բարձրաքաշ Սբ. Գրիգոր վանքում իրականացված հնագիտական պեղումների ընթացքում[7]: Այն ակոսագծերով երիզված ուղղանկյունաձև հարթ սալատապան է (1,73 x 0,65 մ), որի մակերեսը հարդարում է խոշորատառ և կցագրերով աչքի ընկնող հնգատող արձանագրությունը.

ՉԾԷ (1308) Զու/ատ, սպ/ան թաթարն, / յիշ/եց(էք ի Քրիստոս):

Տապանագիրն անավարտ է: Թույլ գծանշված վերջին *Յ* գլխագիրն ինքնին հուշում է, որ փորագրիչն այն թերի է թողել, սակայն դա չի խանգարում բնագրի ամբողջացմանը, քանի որ բացակայում է վիմագրերի ավարտին բնորոշ «*յիշեցէք ի Քրիստոս*» բանաձևային խնդրանք-պատգամը:

Պատմական ակնարկ. Նախքան տապանագրի բովանդակությանն անդրադառնալը տեղին ենք համարում համառոտակի ներկայացնել Հայաստանում թաթար-մոնղոլական ժամանակաշրջանի ընդհանուր նկարագիրը՝ պարզելու համար նորահայտ տապանագրի կապը քննվող շրջափուլի հետ: Հայտնի է, որ դեռևս ԺԳ դարի 20-ականներից



Զուատի տապանագիրը (գրչ.՝ հոդվածագրի, 2021 թ.)

Վրաց թագավորությունը և Զաքարյան Հայաստանը հայտնվել էին նվաճողական նկրտումներով համակված թաթար-մոնղոլների առաջնորդ Թեմուչինի (Չինգիզ խանի) և խորեզմշահ Ջալալ ադ-Դինի ռազմական գործողությունների առանցքում: 1220-1225 թթ. տեղի ունեցած թաթար-մոնղոլական առաջին արշավանքի և Ջալալ ադ-Դինի ասպատակությունների հետևանքով Վրաց թագավորությունն ու Զաքարյան Հայաստանն արդեն իսկ զգալի վնասներ էին կրել, սակայն իրավիճակն ավելի է սաստ-

7 Մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում պեղման աշխատանքների ղեկավար հնագետ Արման Նալբանդյանին՝ տապանաքարի լուսանկարը և անհրաժեշտ տեղեկություններ տրամադրելու համար:

կանում երկրորդ արշավանքի ընթացքում, երբ մոնղոլ առաջնորդ Չարմաղան նոյինը (իշխան) 1231 թ. գրավում է նախ Ատրպատականը, ապա՝ Գանձակը (1232 թ.), իսկ 1236 թ. իր զորավարներից Չաղաթա նոյինի հետ ձեռնամուխ է լինում Զաքարյան Հայաստանի և Արևելյան Վրաստանի իշխանության ու գավառների գրավմանը[8]: «Չաղադա նոյինն էառ զԼոռէ քաղաք, և որք յայնր կողմանէ գաւառք»[9],– հաղորդում է պատմագիր Վարդան վարդապետը՝ հավելելով, որ «ի վեց հարիւր ութսուն և հինգ թուականէն հայոց (1236 թ.) մինչև յեօթն հարիւր չորեքտասան (1291 թ.), որում եմք մեք, զոր ինչ արարին ազգն նետողաց (նկատի ունի թաթարներին – Ա. Հ.), ընդ աշխարհս եւ ընդ իշխանութիւնս... գրեալ են մանրամասնաբար փառաւորեալ հայրն մեր Վանական վարդապետն, և հարազատն մեր Կիրակոս վարդապետն հօրն համանման...»[10]:

Մատենագիրներից Կիրակոս Գանձակեցին թեև մանրամասն հիշատակում է թաթար-մոնղոլների աշխարհակալ նկրտումները, գործած վայրագություններն ու նվաճումները, մասնավորապես՝ Գանձակ, Շամքոր, Լոռե, Անի և Կարս քաղաքների ավերումն ու գրավումը, սակայն Գուգարաց աշխարհում նրանց տիրապետության ստույգ ժամանակը չի որոշակիացնում[11]: Համանման են նաև Գրիգոր վրդ. Ակներցու տեղեկությունները, ըստ որի՝ Մուղանի ձմեռանոցում Չարմաղանը հարյուր տասն առաջնորդների գլխավորությամբ ժողով («ղուռութայ») է գումարում, որտեղ որոշվում է բաժանել «զերկիրս ի միմեանց վերայ»[12]: Առավել որոշակի է Մաշտոցյան Մատենադարանի (ՄՄ) 4160 ձեռագրում Պետրոս գրչի թողած հիշատակարանը (էջ 74բ), ըստ որի՝ «Գոյժ աղաղակի յոյժ լուաք յայսմ ամի, որ է ՈՁԵ (1236), յամսեանն յարաց Ժ (10), յաւուր կիւրակէի, եթէ զքաղաքաբերդն զԼաւռէ, զՍուրբ Մարի (Սուրմալու – Ա. Հ.) առին անաւրէն, այլասեռք զաւրք Տաթարին... և ետուն ճարակ սրոյ...»[13], կամ Հովհաննես Սարկավագի տոմարագիտական աշխատությանն առդիր Անանուն հեղինակի ժամանակագրությունը (ՄՄ 1973, 195ա-9բ), որն ավարտվում է թաթարների կողմից Կայան բերդի, Լոռե և Անի քաղաքների գրավման նկարագրությամբ. «ՈՁԵ (1236) թուին անառիկ բերդն, որ կոչի Կայեան և Լաւռէ քաղաք և Անի մայրաքաղաք Հայոց և այլ բնաւ աշխարհքս Հայոց, գաւառք և անառ բերդորեայք և քարայրք և անմուտ մայրիք ի միում ամ առան...»[14]:

Հայաստանում թաթար-մոնղոլական տիրապետությունը 1250-ական թվականներից այլ կերպ է դրսևորվում, մասնավորապես՝ Իրանի գրավումն իրագործելու նպատակով 1256 թ. հունվարին Մանգու խանի եղբոր՝ Հուլավուի գլխավորած բանակը մտնում է Իրան և շատ արագ հաջողում իր ձեռքը վերցնել մոնղոլական կուսակալության գերագույն իշխանությունը՝ հիմնելով մոնղոլա-իրանական նոր տերություն՝ Ատրպատական կենտրոնով, որը պատմության մեջ հայտնի դարձավ Իլխանություն (մեծ խանին հնազանդվող) անվամբ[15]: Նվաճողական քաղաքականություն որդեգրած իլխանական պետությունը գոյատևում է մինչև ԺԴ դարի կեսերը: Անժառանգ Աբու Սայիդ իլխանի (1316-1335 թթ.) մահից հետո, վերջինիս կտակի համաձայն, գահն անցնում է Արփա խանին, որից էլ իշխանությունը խլում է Ալի Փադիշահը[16]: Միաժամանակ իշխանության համար պայքար է սկսվում նաև Ջելաիրյան և Չոբանյան ավատատիրական տների միջև: Չոբանյաններին հաջողվում է իրենց դիրքերն ամրապնդել Ատրպատականում: 1344 թ. իշխանությունը գրաված Մելիք Աշրաֆը միանձնյա թագավորում է 13 տարի (մինչև 1357 թ.)՝ գործած բռնություններով ու բիրտ քաղաքականությամբ գերազանցելով նախորդներին: Նրա դեմ է դուրս գալիս Ոսկե Հորդայի Ջանիբեկ խանը և ներխուժում Ատրպատական, ինչով էլ նշանավորվում է Չոբանյանների դինաստիայի անկումը 1357 թ.[17]: Կարելի է արձանագրել,

8 Հայոց պատմություն, հ. II, Միջին դարեր (IV դար – XVII դարի առաջին կես), գիրք II. Հայաստանը զարգացած միջնադարում (IX դարի կես – XIV դարի սկիզբ), Երևան, 2014, էջ 267, 273-274: Տե՛ս նաև Վրաց ժամանակագրություն (1207-1318), թարգմանությունը հին վրացերենից, առաջաբանը և ծանոթագրությունները՝ **Պ. Մուրադյանի**, Երևան, 1971, էջ 70-72: **Гази А.**, Родословная история о татарах, т. 1, СПб., 1768. **Хондемир**, История монголов: от древнейших времен до Тамерлана, СПб., 1834. Թաթար-մոնղոլական երկրորդ արշավանքի, ի մասնավորի՝ 1236 թ. տեղի ունեցած դեպքերի աղբյուրագիտական մանրամասն քննությունը տե՛ս **Շահնազարյան Ա.**, Զաքարյան Հայաստանի նվաճումը մոնղոլների կողմից, «ՊԲՀ», 2004, № 2, էջ 142-160:

9 Հաւաքումն պատմութեան **Վարդանայ վարդապետի**, Վենետիկ, 1862, էջ 144:

10 Նշվ. աշխ., էջ 146-147:

11 **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ **Կ. Մելիք-Օհանջանյանի**, Երևան, 1961, էջ 235-262: Պատմագիրը միայն ակնարկում է, որ Գանձակի գրավումից չորս տարի անց (այսինքն՝ 1236 թ.) իրագործվում է մոնղոլների հրեշավոր ծրագիրը՝ իրար մեջ բաժանել ու տիրել Հայոց, Վրաց և Աղվանից գավառները. «Եւ այսպէս ամայի եկաց քաղաքն (Գանձակը – Ա. Հ.) զչորս ամս... Զկնի ամաց ինչ անցանելոյ աւերման քաղաքին Գանձակայ, այս զօր մոլեկան և խորամանկ իբրև վիճակաւ բաժանեալ զամենայն աշխարհս Հայոց, Վրաց և Աղուանից, իւրաքանչիւր գլխաւորի ըստ մեծութեան և փոքրկութեան...» (նշվ. աշխ., էջ 237-238):

12 **Գրիգոր վրդ. Ակներցի**, Պատմութիւն թաթարաց, Բ տպագրութիւն, առաջաբանը՝ **Ն. Պողարեանցի**, Երուսաղէմ, 1974, էջ 26:

13 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, կազմ.՝ **Մաթևոսյան Ա.**, Երևան, 1984, էջ 191, № 146/բ.: Հմմտ. **Ղարիբյան Ի.**, Լոռե բերդաքաղաքը և նրա պեղումները, Երևան, 2009, էջ 41:

14 Անանուն ժամանակագրություն (XIII դ.), Մանր ժամանակագրություններ, հ. I, կազմ.՝ **Հակոբյան Վ.**, Երևան, 1951, էջ 26: Համանման հիշատակություններ են պահպանվել նաև ՄՄ 8100 (244բ-6ա), ՄՄ 8481 (207ա), Վնտկ 99 (242ա) և այլ ձեռագիր աղբյուրներում:

15 Հայոց պատմություն, հ. II, էջ 297-298:

16 Նշվ. աշխ., էջ 526:

17 Նշվ. աշխ., էջ 528-530:

որ իլխանական պետության ոչնչացմամբ Հայաստանում վերջնականապես վերանում է նաև թաթար-մոնղոլական տիրապետությունը, որը, սակայն, իր տեղը զիջում է թուրքմենական ցեղախմբերին:

Տապանագրի բովանդակությունը. Դառնալով խնդրո առարկա նորահայտ տապանագրին՝ նախ ասենք, որ վիմագրերում, ի մասնավորի՝ տապանագրերում և խաչքարային արձանագրություններում, երբեմն նշվել է նաև ննջեցյալի մահվան բուն պատճառը, եթե դա արտառոց դեպք է եղել: Տարերային աղետների ու համաճարակների[18], ինչպես նաև դժբախտ պատահարների[19] և թշնամական հարձակումների հետևանքով զոհվածների մասին առաջին հավաստի տեղեկությունները պահպանվել են հենց վիմագրերում: Այս առումով ուշագրավ է Աղցքի պեղումներով վերջերս հայտնաբերված վաղմիջնադարյան երկլանջ տապանաքարի վիմագրում Ստեփանոս Աղցից Վանականի մահվան հանգամանքների փաստագրումը, որը երիտասարդ հասակում սրախողխող էր եղել. «...ի կէսաւուրց խողխողմամբ սրոյ վախճանեալ եւ արեամբ դարձեալ ի հող...»[20], կամ Կեչառիսի վանքի արևելյան գերեզմանոցում պահպանված 1220 թ. խաչքարի պատվանդանի արձանագրությունը պարզում է, որ Դեղ կրոնավորը խաչքար է կանգնեցրել իր եղբոր՝ Հովսեփ կուսակրոն քահանայի բարեխոսության համար, «...որ գնաց յԵր(ուսաղէմ) եւ ի ճանապարհի խողխողեցաւ սրով յայլազգեաց...»[21]: Անիի տապանատներից մեկի ներքնահարկի հարավային պատի 1348 թ. արձանագրության համաձայն՝ այդտեղ է հանգչում Կիրակոս վարդապետը, «...որ նահատակեցաւ յանաւրինաց...»[22], կամ նույն Անիի մերձակայքում Մեհևոնի որդի Կազերը եղբոր՝ թուրքերի ձեռքով նահատակված Սարգսի տապանի մոտ խաչքարմահարձան է կանգնեցրել՝ ի հիշատակ «...արենաթաւալ Սարգսի, որ յանաւրէն թուրքաց նահատակ եղեւ...»[23], իսկ Տարսոնի պատմության թանգարանից հայտնի սրը (բարոն) Ֆիլիպի պատկերաքանդակով տապանաքարի 1352 թ. արձանագրության համաձայն՝ «...ի փառաց խաչին, խոցաւ ի մէջ պատերազմին...»[24], այսինքն՝ նահատակվել է Կիլիկիայի հայկական թագավորության գոյապայքարում՝ մահմեդական ամիրայությունների հարձակումների ժամանակ: Օրինակներն այսպես կարելի է շարունակել, մինչդեռ անհրաժեշտ է վերոնշյալ պատմական ակնարկի համատեքստում պարզել Զուատի ինքնությունն ու սպանության հավանական պատճառը: Դրա համար նախ հստակեցնենք՝ ժամանակամերձ աղբյուրներում կա՞ արդյոք Զուատ անձնանվան այլ վկայություն:

Մեր պրպտումները հանգեցրին ուշագրավ արդյունքի[25]: Պարզվում է՝ ակադ. Հրաչյա Աճառյանը, մի ձեռագիր հիշատակարանի հիմամբ, վկայակոչում է այս անձնանունը. «Զուատ, ար[ական], ծագումն անհայտ - եղբայր Սարգիս աբեղայի, որ օրինակեց Ոսկեփորիկը Գլաձորում 1317 թ.: Այդ թվականից առաջ Զուատը նահատակվել էր անօրեններից՝ տակավին երիտասարդ հասակում»[26]: Անշուշտ, անվանի լեզվաբանի այս տեղեկությունը մեզ թույլ է տալիս հիշատակված Զուատին՝ վախճանված անօրեններից 1317-ից առաջ, և Բարձրաքաշ Սբ. Գրիգոր վանքում թաղված Զուատին՝ սպանված թաթարներից 1308 թ., նույնացնել: Մեր ենթադրություններում համոզվելու համար ուսումնասի-

18 Ջրահեղձ լինելու, երկրաշարժի և համաճարակի զոհ դառնալու վիմագիր վկայություններից տե՛ս ԴՀՎ IV, Գեղարքունիք. Կամոյի, Մարտունու և Վարդենիսի շրջաններ, կազմ.՝ **Բարխուդարյան Ս.**, Երևան, 1973, էջ 148, արձ. 601, էջ 155, արձ. 632, 633, էջ 156, արձ. 635: **Սաղումյան Ս.**, Աշտարակ. պատմական անցքեր, հուշարձաններ, վիմագիր արձանագրություններ, Երևան, 1998, էջ 254, արձ. 14, էջ 259-260, արձ. 23-30: **Գասպարեան Ռ.**, Միջնադարեան Առինջ գիւղը եւ նրա վիմական յուշարձանները, «Հանդէս ամսօրեայ», Վիեննա-Երեւան, 2005, № 1-12, սյուն 331, արձ. 39: **Մանուչարյան Ա.**, Վիմագիր հիշատակություններ խոլերայի համաճարակի մասին, «Հայ ժողովրդական մշակույթ», XIV, Երևան, 2007, էջ 172-176:

19 Այդպիսիք տե՛ս **Յովսէփեան Գ.**, Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս-Լիբանան, 1969, էջ 38-39: **Հարությունյան Ա.**, Վաղարշապատ. վանքերը և վիմական արձանագրությունները, Ս. Էջմիածին, 2016, էջ 134, արձ. 154:

20 **Սիմոնյան Հ.**, **Հարությունյան Ա.**, **Սաֆարյան Մ.**, **Քալանթարյան Ն.**, Ստեփանոս Աղցից Վանականի նորահայտ տապանագիրը, «Հուշարձան» տարեգիրք, հ. ԺԴ, Երևան, 2019, էջ 18:

21 **Յովսէփեան Գ.**, նշվ. աշխ., էջ 316, յաւելուած Ա, արձ. 50:

22 ԴՀՎ I, Անի քաղաք, կազմ.՝ **Օրբելի Հ.**, Երևան, 1966, էջ 67, արձ. 207:

23 Նշվ. աշխ., էջ 69-70, արձ. 213: Տե՛ս նաև **Մաթևոսյան Կ.**, Անին և անեցիները, Երևան, 2021, էջ 384:

24 **Քորթոշյան Ռ.**, Հանուն Կիլիկիայի հայկական թագավորության նահատակված սրը Ֆիլիպը, «Վարք», 2020, № 14, էջ 61:

25 Մատենագրությունից հայտնի է Սբ. Ներսես Ա Պարթևի աշակերտ Զուիթա (Զվիթ) քահանա Արտաշատցին, որի նահատակությունը հանուն հավատի մանրամասն նկարագրել է Փավստոս Բուզանդը: Պատմագրի հաղորդմամբ՝ Պարսից Շապուհ արքան հրամայում է նրան շղթայակապ հրապարակ բերել ու հարցնել. «...եթէ իցէ՝ յանձն առցէ պաշտել զօրէնս մոգութեանն, ոչ մեռցի: Իսկ նա ոչ առնոյր յանձն. այլ կամեցեալ մեռանել խնդութեամբ վասն Աստուծոյ...» (**Փաւստոս Բուզանդ**, Պատմութիւն Հայոց, բնագիրը՝ ըստ վենետիկեան 1933 թ. հրատարակութեան, առաջաբանը՝ **Կ. Իւզբաշեանի** եւ **Պ. Մուրադեանի**, «Մատենագիրք Հայոց», հ. Ա, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 373): Ավելի ուշ Սամուել Անեցին հիշատակում է նաև ոմն Զուատի, որը Բյուզանդիայի Վասիլ կայսեր բանակի դեմ դուրս եկած Լիպարիտ իշխանի եղբայրն էր. 1017 թ. «ընդատն եւ Զրւատն եղբարք հարազատք Լիպարտին, բազում քաջութիւնս ցուցին ընդդէմ կայսերն Յունաց Վասլի, բայց յետոյ խրեցաւ Ռատն ի մօրատն՝ եւ սպանաւ եւ կալեալ զՁրւատն տանէին: Իսկ թագաւորն Վրաց ետ զորդին իւր եւ թափեաց զՁրուատն» (**Սամուէլ Անեցի եւ շարունակողներ**, Ժամանակագրութիւն. Ադամից մինչեւ 1776 թ., աշխատասիրությամբ՝ **Կ. Մաթևոսյանի**, Երևան, 2014, էջ 183):

26 **Աճառյան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, հ. Բ, Երևան, 1944, էջ 215:

ռեցինք նաև 1317-1318 թթ. Գլաձորում Սարգիս աբեղայի ընդօրինակած Ոսկեփորիկ ձեռագրի հիշատակարանը (Վնտկ 265 [1108]), որտեղ Սարգիս գրիչն ընթերցողներին խնդրում է հիշել իր հոգևոր ու մարմնավոր ծնողներին, եղբայր Գրիգորին, նրա կողակից Մամախաթունին և վերջինիս ծնողներին, ինչպես նաև «...զարեամբ ներկեալ զեղբայրն մեր՝ Զուատն, որ տարաժամ հասակի սպանաւ յանաւրինաց եւ խառնեցաւ ընդ մարտիրոսացն...»[27]: Եթե այս և նորահայտ տապանագրում վկայված Զուատը միևնույն անձն են, իսկ դրա համար կան բավական համոզիչ փաստեր (անձնանվան և ժամանակային մերձավորությունը, անօրեններից սպանված լինելը), ապա ձեռագրական վկայության հիմամբ կարելի է արձանագրել, որ տարաժամ, այսինքն՝ վաղաժամ, երիտասարդ հասակում սպանված Զուատը Գլաձորի դպրոցում գործած Սարգիս աբեղայի եղբայրն է[28], և նրա սպանությունն անօրեններից գրիչը բնորոշել է իբրև նահատակություն, շնորհիվ որի՝ զոհը միացավ սուրբ մարտիրոսների դասին: Թերևս հենց այս պատճառաբանությամբ էլ նույն Զուատի անունը հիշատակված ենք գտնում նաև Հայոց նոր նահատակ-վկաների անվանակարգում՝ իբրև «մանուկ» հասակում անօրենների ձեռքով կյանքից հեռացած նահատակ, որի մասին է հաղորդում իր իսկ եղբայր Սարգիս աբեղան[29]:

Զուատի շիրիմն ու սպանության հավանական պատճառը. Թերևս սխալված չենք լինի, եթե ասենք, որ Զուատի շիրիմը Բարձրաքաշ Սբ. Գրիգոր վանքում նաև ուխտատեղի էր, որտեղ որոշակի պաշտամունք է եղել այս նահատակի նկատմամբ, ինչպիսիք առավելապես հայտնի են Թուխ Մանուկ սրբավայրերի դեպքում[30]: Ազգագրագետ, բանահավաք Գարեգին եպս. Սրվանձտյանցի բնորոշմամբ՝ Թուխ Մանուկ են կոչվում նաև այն վայրերը, որտեղ հավատքի համար նահատակվածն արյուն է թափել կամ թաղվել է այդտեղ[31]: Այս միտքը տրամաբանական է համարում նաև Ռաֆֆին, ըստ որի՝ Թուխ Մանուկ սրբավայրերը տարբեր ժամանակներում նահատակված քրիստոնյա մարտիրոսների թաղման վայրերը պիտի լինեն[32]: Իսկապես, հաճախ Թուխ Մանուկ են դիտվել ոչ միայն մատռանման կառույցներն ու գերեզմանական փոքր շինությունները[33], այլև սուրբ Գիրքը, տապանաքարը, խաչքարը, մենհիրը, նույնիսկ հոգևոր կառույցների առանձին ճարտարապետական մանրամասները[34], իսկ այն, որ հնուց ի վեր մեր ավանդախոսները պատմել են այլազգի թշնամիների, նրանց վայրագությունների, ավերի ու ավարի, ինչպես նաև նրանց դեմ մարտնչած հայ քաջերի գործած սխրանքների ու հերոսական նահատակությունների մասին, հայտնի փաստ է[35]: Այս տեսանկյունից ևս Բարձրաքաշ Սբ. Գրիգոր վանքում նահատակի գերեզմանի (տապանաքարի) պաշտամունքի հավանականությունն ավելի իրատեսական է դառնում:

Մեր այս ենթադրության օգտին է նաև Գրիգոր եպս. Կարնեցու նահատակության մասին պատմությունը, ըստ որի՝ 1321 թ. հունիսի 20-ին Թամուրտաշ թաթար զորավարը Կիլիկիայից գալիս է Կարին և տեղի Գրիգոր եպիսկոպոսի ու նրա հորեղբոր՝ Պապ քահանայի հանդեպ բռնանում՝ ասելով, թե եկեղեցիները կողոպտված են: Բռնակալը հրամայում է նրանց թլփատել, իսկ եպիսկոպոսի հաստատամտությանն ի պատասխան՝ կարգադրում է նրան գանահարել՝ «ջիղերը կտրելով, եւ աղով վէրքերը շփելով, որոնց արիութեամբ համբերեց եպիս-

27 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանի Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Բ, յօրինեց **Բ. Մարգսեան**, Վենետիկ, 1924, սյուն 857-858: Տե՛ս նաև **Ալիշան Ղ.**, Սիսական. տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, 1893, էջ 133: Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԴ դար, մասն Ա (1301-1325 թթ.), կազմեցին՝ **Լ. Խաչիկյան**, **Ա. Մաթևոսյան**, **Ա. Ղազարոսյան**, Երևան, 2018, էջ 318, № 293: Ձեռագրի վենետիկյան նկարագրության մեջ Զուատ անձնանվան կողքին նկարագրողը նշել է նաև *կամ Ուատն* տարբերակը, որի հետևությամբ էլ Գլաձորի համալսարանին վերաբերող ձեռագրաց հիշատակարանների համահավաքում Ա. Աբրահամյանն անձնանունը կարդում է *զՈւատ* ձևով (տե՛ս **Աբրահամյան Ա.**, Գլաձորի համալսարանը, Երևան, 1983, էջ 163):

28 Հնագետ Իգիթ Ղարիբյանի համոզմամբ՝ Սարգիս աբեղան, որը հետագայում նաև րաբունի է դարձել, թաղված է Թանահատի Սբ. Ստեփանոս եկեղեցու արևելյան կողմում: Այստեղ պահպանված 1344 և 1356 թթ. տապանաքարերի վրա վկայված է Սարգիս քահանայի անունը, որոնցից մեկը, ըստ հնագետի, 1317/8 թ. ձեռագիրն ընդօրինակող Սարգիս գրիչն է (տե՛ս **Ղարիբյան Ի.**, Գլաձոր. տեղադրությունը, պեղումները, վիմագիր արձանագրությունները, Երևան, 1983, էջ 58): Մենք հակված չենք նրանցից մեկին նույնացնելու Զուատի եղբայր և գրիչ Սարգիս աբեղայի հետ ոչ միայն նրա համար, որ տապանագրերում Սարգիսն իբրև քահանա է հիշվում, այլև տապանագրերից մեկում «տարաժամ» վախճանվելու մասին նշումը նկատառելով, քանզի 1317/8 թ. ձեռագիր ընդօրինակած աբեղայի 1356 թվակիր տապանին դժվար թե նշվեր, որ վաղաժամ կամ երիտասարդ հասակում է կյանքից հեռացել:

29 Հայոց նոր վկաները (1155-1843), գիտական հրատարակութիւն, աշխատութեամբ **Յ. Մանանդեանի** և **Հ. Ամատեանի**, Վաղարշապատ, 1903, էջ 120:

30 Թուխ Մանուկ սրբավայրերի մասին ընդհանուր պատկերացում կազմելու համար տե՛ս «Թուխ Մանուկ» նստաշրջանի նյութեր-ժողովածուն (Երևան, 2001):

31 **Սրվանձտյանց Գ.**, Գրոց ու բրոց, Երկեր, հ. 1, Երևան, 1978, էջ 79-80:

32 **Ռաֆֆի**, «Գրոց ու բրոց կամ Սասունցի Դավիթ» գրքույկի առիթով, տպված Կ. Պոլսում, 1874 ամի Գ. վ. Սրվանձտյանցի աշխատասիրությամբ, Երկերի ժողովածու, հ. 9, Երևան, 1964, էջ 108-109:

33 **Մնացականյան Ա.**, «Թուխ Մանուկ» հուշարձանների մասին, «ՊԲՀ», 1976, № 2, էջ 190:

34 **Հովհաննիսյան Կ.**, Թուխ Մանուկ սրբավայրերը (պատմաազգագրական ուսումնասիրություն), պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 2020, էջ 8:

35 **Ղանալանյան Ա.**, Ավանդապատում, Երևան, 1969, էջ ՂԱ: Ավանդություններում կա նաև հակառակ երևույթը, երբ Թուխ Մանուկն այլազգի կամ այլադավան երեխա է, որին սպանել են քրիստոնեություն ընդունելու համար (տե՛ս **Հովհաննիսյան Կ.**, Թուխ Մանուկը բանահյուսական սկզբնաղբյուրներում, «Էջմիածին», 2016, Բ, էջ 92):

Բարձրաքաշ Սբ. Գրիգոր վանքի՝ ծայր հյուսիսում գտնվող միանավ եկեղեցու արևելյան հատվածը մինչև 2021 թ. պեղումները (լուս.՝ Ռ. Քորթոշյանի, 2012 թ. և Ս. Կարապետյանի, 2017 թ.)

կոպոսը»[36]: Մոտալուտ վախճանը կանխատեսելով՝ Գրիգոր եպիսկոպոսը գաղտնի հաղորդություն է ստանում, որից հետո գլխատվում է քաղաքի հրապարակում: Մարմինը երեք օր անթաղ մնալուց հետո հրամայում են ամփոփել Սբ. Սարգիս եկեղեցու մոտ: Իբրև այս պատմության նմանօրինակ՝ Մաղաքիա արք. Օրմանյանը վկայակոչում է նաև Զուատի՝ տարաժամ սպանվելու և մարտիրոսների դասին խառնվելու մասին ձեռագրական հիշյալ տեղեկությունը[37], որը խնդրո առարկա տապանաքարի ի հայտ գալուց հետո ավելի իմաստալից է դառնում:

Մատենագրական աղբյուրների և ավանդախառն զրույցների շարքը լրացնում է նաև բուն պատմությունը, ինչի հիմամբ առավել պարզորոշ է դառնում Զուատի սպանության հավանական պատճառը: Բանն այն է, որ 1304-ից Իլխանության գահն անցնում է Ղազան խանի եղբայր Ուլջեյտու խանին (1304-1316 թթ.), որը մահմեդականություն ընդունելուց հետո կոչվեց Մուհամմադ Խուդաբանդա կամ, ինչպես քրիստոնյաներն են կոչել, Խարբանդա, որ «թարգմանի Իշու ծառայ»[38]: Սկզբում քրիստոնյաների նկատմամբ մեղմ քաղաքականություն վարելուց հետո «Խուդաբանդան 1307 թ. վերականգնեց դավանանքի համար քրիստոնյաներից գանձվող ջիզյա հարկը և բռնությամբ փորձեց նրանց դարձնել մահմեդական»[39]:

Հայաստանում ԺԴ դարասկզբին տեղի ունեցած պատմաքաղաքական անցքերն ու ժողովրդի կրած զրկանքները լայնորեն արտացոլվել են հատկապես ձեռագիր մատյանների հիշատակարաններում: Այսպես, Աղթամարում 1306 թ. ընդօրինակված ՍՄ 6273 ձեռագրի հիշատակարանում Դանիել կրոնավոր գրիչն արձանագրում է, որ գրչագիրն ավարտել է «...յաշխարհակալութեան նետողական ազգին, յորում միահամուռ ամենեքեան ընթացան զհետ զոչնչին եւ գտանին զոչինչ, դարձան ի մոլար օրէնս Մահմեդի, որ արձակ ճանապարհաւ տանի ի կորուստ. եւ բռնադատեն զամենեսեան դառնալ ի սնոտի եւ ի պատիր յոյսն իւրեանց, հալածեն, նեղեն եւ տառապեցուցանեն՝ զոմանց զինչսն յափշտակելով, զոմն տանջելով, զոմն հայհոյելով, զխաչս եւ զեկեղեցիս նախատելով...»[40]: Հիշատակարանի մեջբերված հատվածում հստակ է կրոնական անհանդուրժողականությունը, որն առավել ցայտուն է դրսևորվում կրոնափոխվել չցանկացողների համար հարկային պարտավորությունների սահմանմամբ: Այսպես, ՍՄ 3074 ձեռագրի 1307 թ. նախագաղափար օրինակի հիշատակարանում կարդում ենք, որ Խուդաբանդան ձգտել է մահմեդականացնել հայ և վրացի քրիստոնյաներին, ավելին՝ «...առաքեաց ընդ ամենայն երկիր իշխանութեան իւրոյ՝ դնել նշան խայտառակութեան քրիստոնէից եւ հարկ առնուլ ըստ մարդաթուի Խ. (40) արծաթէ մինչ ի Ժ (10)՝ ըստ կարի»[41]:

Այսպիսով, ավելի քան պարզ է, որ Զուատի սպանության հավանական պատճառը պիտի հավատափոխության և դավանանքի սպառնալիքը լիներ, որին էլ ընդդիմացել է նահատակը և խառնվել «ընդ մարտիրոսացն»: Սրանով պիտի պայմանավորել նաև նրա՝ ժամանակի առավել հայտնի Բարձրաքաշ Սբ. Գրիգոր վանքի հինավուրց եկեղեցու մոտ թաղվելու, իսկ տապանագրում թաթարներից սպանված լինելու մասին հիշատակությունը՝ ի հուշ և վկայություն գալիք սերունդներին:

36 **Օրմանեան Մ.**, Ազգապատում, հ. Բ, Ս. Էջմիածին, 2001, սյունակ 2146:

37 Նույն տեղում:

38 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԴ դար, մասն Ա, էջ 117, № 109:

39 Հայոց պատմություն, հ. II, էջ 525:

40 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԴ դար, մասն Ա, էջ 101, № 93:

41 Նշվ. աշխ., էջ 117, № 109:

ՓՐԿՎԱԾ ՄԱՄՆԻԿՆԵՐ ՀՈՇՈՏՎԱԾ ՄՇԱԿՈՒՅԹԻՑ

Ռաֆֆի Քորթոշյան

Սկիզբը՝ № 15-ում

Հոդվածաշարի նպատակն է գոնե թղթի վրա փրկել հիմնականում գանձախույզներից (Թուրքիայի Հանրապետությունում գործող) ձեռք բերված լուսանկարներից մեզ հայտնի դարձած անշարժ և շարժական հուշարձանների պատմական, ինչպես նաև գրչագրական արժեք ունեցող արձանագրությունները՝ համոզված լինելով, որ դրանց մեծագույն մասն անխուսափելիորեն արժանանալու է հայկական ոչնչացված բյուրավոր հուշարձանների ճակատագրին:



Խաչքար *Լա* (գրչ.՝ հոդվածագրի, 2021 թ.)

Լա Խաչքար. ամբողջական է, սակայն տեղահան: Ըստ գանձախույզի՝ գտնվում է Արճեշ գավառի Արիքելիքյոյ գյուղի տարածքում: Ունի կանոնավորին մոտ եզրագիծ և զուսպ հարդարանք: Փորագիր արձանագրությունը՝ 6 տող.

Ես՝ Գրիգոր ...|խմսա, ար|արի զխաչս | զ... | ՊԸ (1359) | թուակա|նիս, | յանուն Մա|րիամա Ա|ղախ(ա)ն(ի), յ(ի)շ(ե)ց(էք) Ք(րիստո)ս:

Ծանոթ. ցավոք, մեզ չհաջողվեց պարզել նշված Արիքելիքյոյ տեղանվան ճշտությունը:

Հնարավոր է նաև ընթերցման մեկ այլ տարբերակ՝ *Մարիամա աղախն(ոյ)*:

Խաչքարեր *Լբ* և *Լգ* (գրչ.՝ հոդվածագրի, 2021 թ.)

Լբ Խաչքար. ամբողջական է, սակայն տեղահան: Գտնվելու վայրն անհայտ է: Ունի կանոնավորին մոտ եզրագիծ և ուշագրավ կերտվածք: Ըստ գրչագրական, ոճական և գեղարվեստական առանձնահատկությունների՝ թվագրում ենք ԺԳ-ԺԴ դարերով: Փորագիր արձանագրությունը՝ 5 տող.

Ես՝ Ղազու|րի որդի | Սարգիս, որ ըս | խայչս կազմեց, | յան(ուն):

Լգ Խաչքար. ամբողջական է, սակայն տեղահան: Գտնվելու վայրն անհայտ է: Ունի անկանոն եզրագիծ և զուսպ հարդարանք: Փորագիր արձանագրությունը՝ 6 տող.

Կանգնե|ցաւ | խաչս բարէ|խաւս առ ա(ստուա)ծ | Մսըրմէլիքին: | Թվ(ին) ՊԾԹ (1410 թ.):

Լդ Խաչքար. ամբողջական է, սակայն տեղահան: Ըստ գանձախույզի՝ գտնվում է Խոշաբ գավառի Զեյնիս գյուղում (այժմ՝ Թեփեգյորեն): Ունի անկանոն եզրագիծ, հսկայական չափեր և զուսպ հարդարանք: Փորագիր արձանագրությունը՝ 4 տող.

Թվ(ին) ՉԿԵ (1516) | Ակոբ, | յիշե(ցէք) | Ք(րիստո)ս:

Ծանոթ. խաչքարը Մեծ եղեռնից հետո հիմնովին ոչնչացված Զեյնիսի հայոց գերեզմանոցի վերջին մնացորդներից է: Հայտնի է՝ գերեզմանոցում, որը տարածված էր ԺԴ դարով թվագրվող Սբ. Աստվածածին եկեղեցու շուրջը (**Wunsch J.**, Die Quellgebiet des Ostlichen Tigrisarms, Petermann's Geographische Mitteilungen (Gotha), 25, 1889, p. 117. **Միրախորեան Մ.**, Նկարագրական Ուղևորութիւն ի հայաբնակ գավառս Արեւելեան Տաճկաստանի, մասն Բ, Կ.Պոլիս, 1884, էջ 42: **Էփրիկեան Հ. Ս.**, Պատկերազարդ բնաշ-

խարիկ բառարան, հ. Ա, Վենետիկ, 1903-905, էջ 781-782)՝ գյուղի ամենաբարձր վայրում (**Վիանշ Յ.**, Տիգրիսի արեւելեան ճիւղին աղբերակունքը, «Հանդէս ամսօրեայ», 1889, № 11, էջ 235), ըստ 1911 թ. տվյալների, եղել են հարյուրավոր «հայ դամբարաններ» (Զէյնիս գիւղացիք, Նամակ խմբագրութեան, «Աշխատանք», 1911, № 14, էջ 7):

 լե Խաչքար. ամբողջական է, սակայն տեղահան: Ըստ գանձախույզի՝ հայտնաբերվել է Արճեշ գավառի Արջոնց (այժմ՝ Յաղլըք) գյուղից: Ունի անկանոն եզրագիծ և ուշագրավ հարդարանք: Փորագիր արձանագրությունը՝ 4 տող.

Մոկացի Իրիցկին զԽանգայդէն, | թվ(ին) | ՌԾ (1601), | յ(ի)շ(եցէք) Ք(րիստո)ս:

Ծանոթ. խաչքարը Մեծ եղեռնից հետո գյուղի՝ հիմնովին ոչնչացված հայոց 2 գերեզմանոցների վերջին մնացորդներից է: Դրանցից մեկը գտնվում էր Արջոնից վանքի արևելքում, որի տեղում եկվոր քրդերը կառուցել են բնակելի տներ և զանազան նշանակության տարբեր շինություններ, իսկ երկրորդի տարածքում թուրքական պետությունը՝ գյուղի դպրոցը: Հայտնի է, որ Արջոնցը մինչև Մեծ եղեռնը եղել է զուտ հայաբնակ: 1878 թ. ուներ 125 (ԳԱԹ, Թորոս Ազատյանի ֆոնդ, բաժ. 57/III, թ. 13), 1894 թ.՝ 133 («Հնչակ», 1896, № 5, էջ 40), 1913 թ.՝ 33 («Աշխատանք», 1913, № 34, էջ 4), իսկ 1915 թ.՝ 61 բնակիչ (**Մխիթարեան Օ.**, Վանի ինքնապաշտպանութիւնը, «Հայրենիք», 1924, № 2, էջ 79):



Խաչքարեր *լդ* և *լե* (լուս.՝ 2018 և 2021, գրչ.՝ հոդվածագրի, 2021 թթ.)

լզ Խաչքար. ամբողջական է, սակայն տեղահան: Գտնվելու վայրն անհայտ է: Ունի անկանոն եզրագիծ և զուսպ հարդարանք: Փորագիր արձանագրությունը՝ 5 տող.

Տ(է)ր ա(ստուա)ծ | Յ(իսու)ս Ք(րիստո)ս, | թվ(ին) ՌՄԻԷ (1778): | Գրիգ[որին] | բար(է)խաւ(ս): | Յիշեցէք Ք(րիստո)ս:

Խաչքար *լզ* (լուս.՝ 2018, գրչ.՝ հոդվածագրի, 2021 թ.)

լէ Շրջիկ վեմ-քար. բեկորված սալիկի մի երեսին առկա են բազմաթիվ խաչաքանդակներ, իսկ մյուսում՝ նորոգման վեցտողանի արձանագրություն: Հայտնաբերվել է 2014 թ.[2] Սասունի Մարաթուկ Սբ. Աստվածածնի[3] ավերակներից: Ըստ գրչագրական և ոճական առանձնահատկությունների՝ թվագրում ենք ԺԸ-ԺԹ դարերով: Փորագիր արձանագրությունը՝ 6 տող.

Յ(իսուս)ի Ք(րիստոս)ի ծ(ա)ռ(այ) ես՝ տ(է)ր Պ/[ե]տրոս, և իմ ... տիր(ա)ցու | Ստեփ(ա)ն[ոս] ...|թն. նորոգ(ե)ց[աք] ...|թ ա(ստուա)ծ ի փառս իւր հ[ամարես]/ցէ, ևս տ(է)ր Յովանէսն:

Ծանոթ. ամենայն հավանականությամբ, օգտագործվել է Սասունի՝ եկեղեցի չունեցող փոքրիկ գյուղերում պատարագ մատուցելու համար՝ մշտապես պահվելով Մարաթուկ լեռան գագաթի Սբ. Աստվածածին վանքում:

Նմանատիպ շրջիկ վեմ-քար Սիրիայի Լաթաքիա քաղաքի Սբ. Աստվածածին եկեղեցում (լուս.՝ հոդվածագրի, 2011) և շրջիկ վեմ-քար *լէ* (լուս.՝ 2014, գրչ.՝ հոդվածագրի, 2021 թ.)

2 Հայտնաբերել է Սասունի հայերի միության նախագահ Ազիզ Դաղջին և հանձնել Բաթմանի թանգարանին:

3 Եկեղեցու հիմնադրումը, ըստ «Սասնա ծռեր» դյուցազնավեպի, վերագրվում է Մեծ Մհերին (**Բաղալյան Գ.**, Արևմտյան Հայաստանի պատմաժողովրդագրական նկարագիրը Մեծ եղեռնի նախօրեին, «Վէմ», 2016, № 1, հունվար-մարտ, էջ XXV): Սակայն մեր օրերում պահպանված շինության մնացորդները, ըստ ճարտարապետական առանձնահատկությունների, կարելի է թվագրել ԺԶ-ԺԷ դարերով: Հայտնի է, որ լեռը սրբազան է համարվել հավասարապես Սասունի քուրդ և հայ բնակչության համար («Արաքս», 1894-1895, գիրք Ա, էջ 84): Դրա «գագաթը երկու մասի կը բաժնուի խորանայարկ. աջ Մարաթուկ եւ ձախ Մարաթուկ, զոր տեղացիք կանուանեն Մեծ ու Փոքր Մարաթուկ»: Եկեղեցին կառուցված էր Աջ Մարաթուկի գագաթին (**Մուրատեան Մ.**, Աւանդութիւններ Սասնոյ ուխտատեղեաց մասին, «Հայաստանի կոչնակ», 1922, № 7, էջ 237-238: Տե՛ս նաև **Մուրատեան Մ.**, Սասնոյ սրբավայրերն ու աւանդութիւնները, «Բազմավէպ», 1934, էջ 65):

լը Սկուտեղ. ըստ գանձախույզի՝ գտնվում է Երզնկա քաղաքում: Արձանագրությունը՝ 3 տող.

ՌՄԳ (1856-1857 թթ.) | Իքնատոս|ի որդի Պարաղամ:

Սկուտեղ *լը* (լուս.՝ 2018 թ.)

լթ Արձանագիր սալիկ-տապանաքար. ամբողջական է, սակայն տեղահան, ըստ գանձախույզի՝ հայտնաբերվել է Եդեսիա քաղաքից: Ունի կանոնավոր եզրագիծ: Ելնդագիր արձանագրությունը՝ 9 տող.

Ի թլուոյն Ք(րիստո)սի 1868: | Յիշատակ է տապանս | այս հանգուցեալ քէ|ղէճի Սարգսի որդի | քէղէճի տիրացու Նե|ռսէսին, որ եւ յիշող|քըդ յիշեալ լիջիք | ի Ք(րիստո)սէ ա(ստուծ)ոյ մերօ է, | ամէն:

Ծանոթ. Քելեճի թուրքերենից թարգմանաբար նշանակում է մեծ կամ փոքր եղջերավոր անասունի գլուխ (քյալլա) պատրաստող խոհարար:



Սալիկ-տապանաքար *լթ* (լուս.՝ 2022 թ.)

խ Խաչքար. ամբողջական է, սակայն տեղահան: Ըստ գանձախույզի՝ հայտնաբերվել է Բաղեշ գավառի Դատվան բնակավայրի մոտակայքից: Ունի անկանոն եզրագիծ և ուշագրավ հարդարանք: Փորագիր արձանագրությունը՝ 7 տող.

Տ(է)ր ա(ստուա)ծ | Յ(իսու)ս Ք(րիստո)ս, | թվ(ին) ՌՅԾԳ (1904): | Կա(նգն)եց(ա)ւ խ(ա)չս | բ(ա)ռեխսս առ ա(ստուա)ծ | վաս(ն) Օհանէսին և | Նուբարին:

Շարունակելի

Խաչքար *խ* (լուս.՝ 2022 թ.)

ՈՒՇԱԳՐԱՎ ՏԱՊԱՆԱՔԱՐ ՂԶԼԱՐԻՑ

Սամվել Կարապետյան

2012 թ. սեպտեմբերի 8-19-ը մեր հիմնադրամի փոքրիկ արշավախումբը կյանքի կոչեց դեռևս 1980-ականներից ծրագրված դաղստանյան ճամփորդությունը:

Ուսումնասիրվեցին Ղզլար, Մախաչկալա (Պետրովսկ), Դերբենտ քաղաքների և Ղարաբաղը, Մոլլախալիլ, Բիլիջ գյուղերում պահպանված հայկական տարաբնույթ հուշարձաններ՝ եկեղեցիներ, գերեզմանոցներ, գերեզմանական հուշարձաններ, բնակելի տներ: Հավաքագրվեցին հայերեն բազմաթիվ արձանագրություններ:

Բավական ուշագրավ բովանդակություն ունի Ղզլար քաղաքի ԺԹ-Ի դդ. հայոց գերեզմանոցի (N 43.869967; E 46.716750) տապանագրերից մեկը՝ փորագրված ուղղանկյուն բարձր տապանաքարի երկայնական երկու նիստերին.

Հատված Ղզլարի հայոց գերեզմանոցից (լուս.՝ հոդվածագրի, 2012 թ.)

Տապանաքարի արձանագիր նիստերը (լուս.՝ հոդվածագրի, 2012 թ.)

Յիշեա տէր ըզհոգիս ծառայիս քոյ, | որ եմ ես՝ ի երկրէն Աղուանու և ի Շուշի գավա|ռէն և ի ներքիշինեցի՝ Լըղարանց Խաչատուրի որ|դի Սարգիսն, որ գերութեամբ անկեայ աստ՝ ի Ղըզ|լար, ծառայեցայ ամըս եօթն և պանդուխտե||ցայ ամըս 40 և ապա առ տէր փոխեցայ | թվին 1824 և մայիսի 8-ին, որ էի ամեօք | 72: Արդ, աղաչեմ հանդիպօղացդ, որ ի ընթե|ռնուլն ձեր մէկ հայր մերիս ասէք զողորմիս, | ա(ստուա)ծ և ըզձեզ ողորմեսցէ:

Ծանոթ. Ներքիշենը գտնվում է Արցախի Շահումյանի շրջանում՝ Սևջուր գետի աջ և ձախ ափերին՝ ծ. մ. 865-980 մ բարձրության վրա: Հայտնի է նաև օտարոտի Աղջաբենդ անվամբ: 1938 թ.-ից վերանվանվել է Շահումյան:

Հավելենք, որ Լղարանց (Հովհաննիսյան) ազգատոհմի ներկայացուցիչներ բնակվել են նաև Ներքիշենից մոտ 10 կմ հյուսիս-արևմուտք գտնվող Մանաշիդ գյուղում:

Արձանագրությունը պարզում է, որ հանգուցյալը ծնվել է 1752 թ. այժմ բռնազավթված Շահումյանի շրջանի Ներքիշեն ավանում: 1777 թ. 25 տարեկանում գերեվարվել է (թերևս լեզգիական արշավանքներից մեկի ժամանակ): Յոթ տարի գերության մեջ մնալուց հետո էլ՝ շուրջ 40 տարի, թափառել է և ի վերջո վախճանվել ու ամփոփվել Ղզլար քաղաքի հայոց գերեզմանոցում:

ՔՅՈՒՐԱԹԱՂ

Էմմա Աբրահամյան

Այս փոքրիկ հոդվածում դաշտային[1] և գրադարանադիվանական նյութերի հիման վրա ներկայացնում ենք Արցախի Հանրապետության Հադրութի շրջանի Քյուրաթաղ գյուղի համառոտ պատմությունը: Պետք է նշել, որ միջնադարյան աղբյուրներում անտեսված այս բնակավայրի պատմությունը հյուսելիս օգնության են հասնում պահպանված պատմաճարտարապետական հուշարձանները (եկեղեցի, խաչքարեր, արձանագրություններ, աղբյուր և այլն), որոնք հայի ինքնության խոսուն քարե «վկաներն» են:

Տեղադրություն. գտնվում է Արցախի Հանրապետության Հադրութ քաղաքից 6 կմ հյուսիս-արևելք, իսկ Ստեփանակերտից՝ 37 կմ հարավ-արևելք՝ Արևասարի արևելահայաց լանջի ստորոտում:

Անվանում. հայտնի է նաև Դուդուկչի, Խորքյուրաթաղ, Կիրաթաղ, Հյուքյուրաթաղ անվանաձևերով:

Ըստ գյուղանվանն առնչվող մեկնաբանություններից մեկի՝ ծագել է բարբառային քյուրա՝ կրակ բառից, որն էլ, ա հոդակապով միաձուլվելով թաղ արմատին, ստացել է Կրակի թաղ նշանակությունը: Դրա առնչությամբ էլ ավանդաբար փոխանցվել է մի պատում, որի համաձայն՝ «Քյոհնա Քյուրաթաղը պօցուրումըն ա լալ՝ Վընէսա ղալէն քըշտէն: Վընէսա ղալան էր պօցուր պէրթ ա, լի՞, ընդըղան սաղ տըէղէրը ըրվաս ա: Վէր Ըրախսէն թիրափան դուշմաննէն բիդի էս ղօլէրքը ուզըէցալ ըն ըն կյան, Վընէսա ղալան դաստի տըէսալ ըն, քյուրա ըրալ, հանցու Քըթէշ պէրթան կըրակը տըէսնան, կըլխու ըղնին: Ըտի, վէր ամմէն դօնում էտ քյուրան ժողվուրթէն ըզադալ, շէնին անըմը տիրալ ըն Քյուրաթաղ»[2]:

Պատմություն. ինչպես արդեն նշեցինք, Քյուրաթաղին առնչվող պատմական տեղեկությունները բավական աղքատիկ են: Այդ «մութը» լուսավորում են գյուղում և նրա մերձակայքում պահպանված նյութական մշակույթի տարաբնույթ հուշարձանները և վիմական արձանագրությունները, որոնք էլ փաստում են գյուղի ծաղկուն և բարգավաճ վիճակն առանձնապես ուշ միջնադարում:

Գրավոր աղբյուրներից հայտնի է, որ 1905-1906 թթ. հայ-թրքական ընդհարումների հետևանքով Քյուրաթաղը ևս հայտնվել էր Հադրութի շրջանի ավերված գյուղերի թվում[3]: Օրինակ՝ 1905 թ. օգոստոսի 23-ին «...մահմետական խուժանը յարձակվել է Քիւրաթաղ (Դուդուկչի) գիւղի վրա և իսպառ կողոպտել է այդ գիւղը»[4]:

Գյուղի մուտքը (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2019 թ.)

Երկրորդ աշխարհամարտի տարիներին գյուղից մասնակցել է 112 հոգի, որից զոհվել կամ անհետ կորել են 62-ը[5]:

Ողջ մնացած հերոսներից էր Հեռավոր գործողության ավիացիայի օդաչու, մայոր *Աշոտ Ջումշուդի Գասպարյանը* (Կասպարով) – 29.12.1909-7.06.1993): Պատերազմի տարիներին կատարել է շուրջ 300 մարտական թռիչք. «Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար» 1944 թ. նոյեմբերի 5-ի հրամանագրով արժանանում է Խորհրդային Միության հերոսի կոչման՝ միաժամանակ ստանալով Լենինի շքանշան և «Ոսկե աստղ» մեդալ: Պարգևատրվել է նաև Կարմիր աստղի, Կարմիր դրոշի երկու, Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշաններով[6]: Ի դեպ, 1946-1958 թթ. եղել է հայրենի գյուղի կոլտնտեսության նախագահը:

Արցախյան ազատամարտի տարիներին՝ 1990 թ., գյուղում Ռ. Ղարայանի և Է. Նավասարդյանի հրա-

1 Դաշտային ուսումնասիրությունները կատարվել են ՀԵՌԻ հիմնադրամի կողմից 2002 և 2019 թթ.: Նախատեսվում էր գյուղի՝ տապանաքարերով հարուստ գերեզմանոցն ուսումնասիրել 2021 թ., որը, ցավոք, իրականություն չդարձավ:

2 **Մարգսյան Ա.**, Արցախի բանահյուսությունը, Երևան, 2015, էջ 184 (պատմել է քյուրաթաղցի 67-ամյա Սեդա Ղարայանը 2000 թ., գրի է առել լեզվաբան Արմեն Մարգսյանը):

3 «Տարազ», 1905, № 27, էջ 286:

4 **Խուբլարեան Մ.**, թղթ., «Մշակ», 1905, № 176, 3 սեպտեմբերի, էջ 3:

5 **Թարսեղյան Ս.**, Արցախ-Ղարաբաղը Մեծ Հայրենականում (1941-1945 թթ.), Ստեփանակերտ, 2015, էջ 376-377:

6 Մանրամասն տե՛ս նշվ. աշխ., էջ 136-141:

մանատարությամբ կազմավորվում է կամավորական ջոկատ, որի հիմքի վրա էլ 1992 թ. ստեղծվում է Հադրութի պաշտպանական շրջանի վաշտերից մեկը[7]:

Արցախի այլ բնակավայրերի նման, ցավոք սրտի, գյուղը նույնպես կրում է մարդկային կորուստներ ինչպես խաղաղ բնակչության, այնպես էլ հայրենի հողի պաշտպանության և ազատության համար արդար պայքարի ելած ազատամարտիկների շրջանում:

Հայրենիքին իրենց կյանքը նվիրաբերած քյուրաթաղի հերոսներից են՝

Ռուդիկ Ալավերդյան (08.04.1959-19.01.1994, Կարախանբեյլի). ամփոփված է հայրենի գյուղի գերեզմանոցում.

Արտիկ Ալբերտի Ղարայան (12.04.1969-30.03.1993).

Ռուբիկ Համբարձումի Գասպարյան (06.12.1936-08.11.1993, Ֆիզուլու շրջ. Բոյուք Բահմանլու գյուղ).

Ռուսլան Ալեքսեյի Մարտիրոսյան (09.06.1975-24.07.1993, Ֆիզուլու շրջան).

Գառնիկ Գասպարյան (23.01.1972-30.08.1993, Ֆիզուլու մոտ). վերջին երկուսը հետմահու արժանացել են ԱՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի[8]:

Խորհրդային Միության հերոս քյուրաթաղցի Աշոտ Գասպարյանի հայրենասիրական ոգին փոխանցվում է Արցախյան ազատամարտի մասնակիցներ նրա որդուն՝ **Նելսիկին** (07.02.1947-02.04.1993, Ազոխ) և թոռանը՝ Նելսիկի որդուն՝ 18-ամյա **Աշոտին**[9]:

2016 թ. Ապրիլյան քառօրյա պատերազմի զոհերից էր փոխգնդապետ, հրետանու պետ **Ռոման Վլադիկի Պողոսյանը** (1979-2016): Ի դեպ, 2016 թ. սեպտեմբերին Գառնիկ Գասպարյանի անունը կրող դպրոցի ռազմագիտության կաբինետը, ի հիշատակ հերոսի, կոչվում է նրա անվամբ:

2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի սանձազերծած 44-օրյա պատերազմում գյուղից Ղարայանների ընտանիքն ունենում է 3 զոհ՝ **Գարեգինն** ու երկու որդիները՝ 23-ամյա **Վազգենը** և 21-ամյա **Դավիթը**: Հետմահու «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանի են արժանանում Գարեգին և Դավիթ Ղարայանները, իսկ Վազգեն Ղարայանին շնորհվում է «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշան:

Որպես հայաբնակ գյուղ՝ Քյուրաթաղը գոյատևում է մինչև 2020 թ. «սև» նոյեմբերը:

Բնակչություն. գյուղի՝ առավել վաղ շրջանի բնակչության թվաքանակի վերաբերյալ տեղեկություններ մեզ հայտնի են՝ սկսած միայն ԺԹ դ. առաջին կեսերից, երբ բնիկների շարքերը համալրում են Ղարադաղից փոխադրված հայերը: Ըստ բանավոր ասության՝ գյուղի բնիկ ազգատոհմերից էին Շահնազարյանները, Բեգլարյանները և Գասպարյանները:

Վիճակագրական տվյալների համադրումը ցույց է տալիս, որ գյուղն ընդհանուր առմամբ արձանագրել է շարունակական աճ՝ ամենաբարձր ցուցանիշն արձանագրելով 1922 թ.:

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1841[10]	7	12	8	20
1886[11]	22	93	102	195
1889[12]	26	112	114	226
1897[13]	33			
1908[14]				335
1909[15]		101	175	276
1912[16]		120	179	299
1914[17]				270
1922[18]	70	215	190	405
2002[19]	63			277
2018[20]	69			316

Անվանի քյուրաթաղցիներից արժանահիշատակ է հնագետ-դրամագետ *Ասլան Միքայելի Շահնազարյանը* (1877-1955)[21]:

7 Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994 թթ., հանրագիտարան, Երևան, 2004, էջ 666:

8 Նշվ. աշխ., էջ 152, 707, 746, 802, 811:

9 Մանրամասն տե՛ս **Յ. Մ.**, Դուդուկչի գիւղի զաւակը, «Բագին», 1993, № 9-12, էջ 112-113:

10 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 305, թ. 46:

11 "Свод статистических данных извлеченных из посемейных списков населения Кавказа", Тифлис, 1888, с. 108-109.

12 **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, Բագու, 1895, էջ 71: Ի դեպ, ըստ արխիվային մի վավերագրի (ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 8583, թ. 42-43)՝ նույն թվականին գյուղն ուներ 165 բնակիչ (83 ար., 82 իգ.):

13 **Ա-Դօ**, Հայ-թուրքական ընդհարումները Կովկասում (1905-6 թթ.), Երևան, 1907, էջ 231:

14 "Кавказский календарь на 1910 г.", Тифлис, 1909, с. 249.

15 ՀԱԴ, ֆ. 56, ց. 18, գ. 764, թ. 239-240:

16 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 11608, թ. 327 շրջ.-328:

17 "Кавказский календарь на 1915 г.", Тифлис, 1914, с. 122.

18 ՀԱԴ, ֆ. 57, ց. 3, գ. 492, թ. 1-2: Ի դեպ, հաշվարկված է նաև Մեծ եղեռնը վերապրած 5 տուն հայերի (25 բնակիչ՝ 10 ար., 15 իգ.) թվաքանակը (Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1813-1933 թթ.), Երեւան, 2001, էջ 760):

19 Տեղեկությունը հավաքել ենք մեր այցելության ժամանակ:

20 **Բալայան Վ.**, Արցախի Հանրապետության բնակավայրերի պատմության ուրվագծեր, Երևան, 2020, էջ 256:

21 «Էջմիածին», 1955, հունիս, էջ 62: Ա. Շահանազարյանը նախնական կրթությունը ստացել է հայրենի գյուղում, ապա ուսումը շարունակել Շուշիի թեմական դպրոցում, Գևորգյան ճեմարանում, Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետում: 1911 թ.-ից սկսվել է նրա մանկավարժական գործունեությունը (Տփղիսի Ներսիսյան և Ղուկասյան օրիորդաց դպրոցներ, Շուշիի թեմական դպրոց, Գևորգյան հոգևոր ճեմարան, Թեհրանի և Սպահանի հայոց դպրոցներ): 1933 թ. Իրանից վերադառնալով Մայր հայրենիք՝ աշխատանքի է անցնում Հայաստանի պատմության թանգարանում, որտեղ էլ 1946 թ. ստեղծում է դրամագիտական կաբինետը և մինչև կյանքի մայրամուտը վարում նշյալ բաժնի վարիչի պաշտոնը: Հեղինակ է բազմաթիվ հոդվածների:

Եկեղեցին հարավ-արևմուտքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2002 թ. և Ս. Դանիելյանի, 2019 թ.)

Դպրոց. հիմնադրման ստույգ տարեթիվը հայտնի չէ, սակայն գործունեության առաջին վկայությունը վերաբերում է 1886 թ., երբ նախակրթարանում ուսանում էր 15 աշակերտ[22]: Երկու տարի անց քյուրաթաղցի մանուկների առջև իր դռներն է բացում եկեղեցական-ծխական դպրոցը, որտեղ մեկ ուսուցչի օգնությամբ կրթություն էր ստանում 20 երեխա[23]: Հայկական դպրոցների վերաբացվելու թույլտվությունը ստանալուց երկու տարի անց՝ 1907/08 ուստարում, որպես միդասյա երկսեռ դպրոց, Վրույր Առաքելյանի դասատվությամբ սկսում է գործել նաև Քյուրաթաղի կրթարանը (45 աշակերտ, որից 12-ը՝ աղջիկ)[24]: 1924 թ. փետրվարին գումարված հասարակական ժողովում որոշվում է կառուցել դպրոցի շենք և այն կոչել Լենինի անունով[25]: Սակայն 1924/25 ուստարում փակվում է[26]: Պետք է նշել, որ գյուղում միաժամանակ գործում էր անգրագիտության վերացման կայան, ուր հաճախում էր 30 մեծահասակ:

1925 թ.-ից սկսվում է դպրոցի կառուցումը, որը, սակայն, նյութական միջոցների բացակայության պատճառով 1927 թ. դեռ ավարտին չէր հասել[27]:

1929 թ. կոչ է արվում դպրոցի շենքի շինարարությունն ամբողջացնելու նպատակով աջակցել քյուրաթաղցիներին. «Պատերն արդեն պատրաստ են, կտուրը ծածկելու համար թիթեղն էլ կառավարությունն է բաց թողել, բայց դեռ պատերի սվաղը, պատուհանների ապակիներն ու հատակի և առաստաղի տախտակները պակասում են: Գյուղացիք այլևս ուժ չունեն այդ պատրաստելու: Անհրաժեշտ է օգնության հասնել քյուրաթաղցիներին...»[28]:

2001/02 ուսումնական տարում Քյուրաթաղի ութամյա միջնակարգ դպրոցում ուսանում էր 45 աշակերտ:

2008 թ. կառուցվում է դպրոցի նոր շենք, որը գտնվում էր «...գյուղից փոքր-ինչ հեռու, և այնտեղ հասնելու համար աշակերտներն ու ուսուցիչները ամեն օր պետք է անցնեն դժվարամատչելի և հողածածկ ճանապարհով»[29]:

Եկեղեցի. գյուղի արևմտյան թաղամասում է գտնվում 1683 թ. կառուցված եկեղեցին (N 39.574828; E 47.050417, ծ. մ.՝ 716 մ), որի պատմության վերաբերյալ տեղեկությունները խիստ սուղ են: Այն հանգամանքը, որ եկեղեցին 1841-1844 թթ. վավերագրերում հիշվում է Սբ. Հովհաննես[30], իսկ ԺԹ դարավերջին՝ արդեն Սբ. Աստվածածին[31], թույլ է տալիս ենթադրել, որ կառույցը նշյալ ժամանակաշրջանի միջակայքում վերանորոգվել է և վերաօծվել նոր անվամբ: Հայտնի է, որ 1893 թ. հոկտեմբերին թալանվել է[32]:

1922 թ. վերջերին դեռևս գործում էր[33], իսկ 1925 թ. արդեն փակ էր[34]:

1927 թ. գյուղի հասարակության որոշմամբ եկեղեցին վերածվում է ակումբի[35]:

Խորհրդային տարիներին եկեղեցու շենքը որպես պահեստ էր ծառայում: 2012 թ. արդեն բավականաչափ քայքայված կառույցը վերանորոգվում է արմատներով քյուրաթաղցի գեորգևսկաբնակ Արմեն Դավթյանի օժանդակությամբ:

Ճարտարապետություն. եկեղեցին երկթեք ծածկի ներքո առնված եռանավ բազիլիկ է (արտաքին չափ.՝ 13,4 x 9,6 մ), որի սլաքաձև թաղերը պահում

22 **Ավանեսյան Ա.**, **Հարությունյան Գ.**, Արցախի կրթական համակարգը, հ. 1, Երևան, 2014, էջ 373:
23 Նույն տեղում:
24 Նույն տեղում:
25 **Շ. Վարդունի**, Դիզակ, «Կոմունիստ» /Բաքու/, 1924, № 46, 28 փետրվարի, էջ 3:
26 **Գասպարյան Ս.**, Քյուրաթաղ գյուղի կյանքից, «Խորհրդային Ղարաբաղ», 1925, № 13, 12 ապրիլի, էջ 3:
27 **Սուլիչ**, Հարկավոր է օգնություն, «Խորհրդային Ղարաբաղ», 1927, № 15, 16 ապրիլի, էջ 5:
28 **Արզաղ**, Դպրոցը կիսատ է մնացել, «Կոմունիստ» /Բաքու/, 1929, № 86, 15 ապրիլի, էջ 3:

29 Գրականության և համակարգչային տեխնիկա՝ Արցախի դպրոցներին, «Պոլիտեխնիկ», 2011, № 3, մարտ, էջ 4:
30 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 305, թ. 46; ց. 12, գ. 533:
31 **Բարխուտարեանց Մ.**, նույն տեղում:
32 ՀԱԴ, ֆ. 56, ց. 2, գ. 1391, թ. 64:
33 **Հայմ.**, Ժողովրդական գույքի հափշտակիչները, «Կոմունիստ» /Բաքու/, 1925, № 204, 9 սեպտեմբերի, էջ 3:
34 Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 760:
35 **Աղաջան**, Դեպի ուր է գնում գյուղը, «Կոմունիստ» /Բաքու/, 1927, № 302, 28 դեկտեմբերի, էջ 3:

Եկեղեցին արևելքից, հյուսիս-արևմուտքից, արևմուտքից և ներքին տեսքը դեպի արևելք (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2019 թ.)

Եկեղեցու ներքին տեսքը դեպի հարավ-արևելք և հյուսիս-արևելք (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2019 թ.)



Եկեղեցու շքամուտքը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2002 թ., գրչ.՝ Ս. Դանիելյանի, 2022 թ.)

են մեկ զույգ սյուների վրա հենված թաղակիր կամարները: Կիսաշրջան եզրագծով խորանի երկու կողմերում առկա է մեկական ավանդատուն: Հյուսիսային որմի մեջ մկրտության խորշն է՝ ավազանով հանդերձ: Շքամուտքը բացված է հարավային ճակատից: Ի դեպ, խորհրդային տարիներին որպես հացահատիկի պահեստ գործածելու նպատակով մուտքից փոքր-ինչ արևելք բացել են ավելի լայն դուռ: Ունի դեպի ներս լայնացող 7 լուսամուտ, որից 3-ը բացված են արևելյան, 2-ը՝ հարավային, 1-ական՝ հյուսիսային և արևմտյան ճակատներից: Հարավային լուսամուտներից ցած առկա է մեկական ուղղանկյուն փոքր խորշ: Հյուսիսային պատն արտաքուստ կիսով չափ հողածածկ է: Կառուցված է գլխավորապես անմշակ և կիսամշակ տեղական քարով, կրաշաղախի միացությամբ: Սակավ քանակությամբ օգտագործված սրբատաշ քարով են շեշտվել շքամուտքը, լուսամուտները, թաղակիր կամարները և սյուների քիվերը: Հարդարանքի տարրերից առանձնանում է շքամուտքն իր նրբագեղ զարդահյուսերով: Որմերին ագուցված են հիմնականում եկեղեցու կառուցման ժամանակ կերտված խաչաքանդակներ, որոնց կից փորագրված են արձանագրություններ: Շարվածքում օգտագործված են նաև ավելի վաղ շրջանի խաչքարեր:

Վիմագրեր. եկեղեցու որմերին պահպանվել է 10 արձանագրություն, որոնցից երկուսը բովանդակային առումով առնչվում են շինարարությանը, իսկ մյուսները նվիրատվական բնույթի են: Ներկայացվող վիմագրերը հրատարակվում են առաջին անգամ: Դրանցից միայն եկեղեցու կառուցմանը վերաբերող վիմագիրն է ընթերցվել քաղվածաբար, որն էլ, սակայն, առ այսօր անտիպ էր:

Եկեղեցու որմերին վերաօգտագործված ավելի վաղ շրջանի խաչքարեր (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2019 թ.)

ա Արձանագրություն. եկեղեցու կամարակալ քարին՝ 12 տող.

Շին(ե)ց(ա)ւ | ս(ուր)ք եկ(ե)ղ(ե)ցիս | թվ(ին) ՌՃԼԲ (1683) | ի թ(ա)գ(ա)ւ(որու)թե(ան) Սիւլ|էիմանին, կ(ա)թ(ո)ղ(ի)կ(ո)սութե(ան) | Երեմիայի: | Մեք՝ Խօր|քիւրայթա|ղայ մեծ եւ | փոքր ժ(ո)ղ(ո)վ(ու)ղոս | շինեցինք: | Տանուտէրն | գեղիս Ղասում/(ի)ն յ(ի)շ(ա)տ(ա)կ է:

Ծանոթ. քաղվածաբար ընդօրինակել է Խաչիկ վրդ. Դադյանը (ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 107, թ. 27):

Արձանագրության վերջում հավանաբար ավելի ուշ հավելվել է *1102 թ.*:

բ Արձանագրություն. եկեղեցու հարավային մուտքի արևելյան անկյան հարավահայաց մասում՝ 7 տող.

Խաչկալս | յիշատա|կ է խօջա | Վարդանի | կոդակից | Ղզըլին, | թվ(ին) ՌՃՂԲ (1743):

Ծանոթ. Ղզըլ անձնանվան միակ հիշատակությունը նույն թվականից է (Յուցակ ժողովածուաց **Դաղեան Խաչիկ** վարդապետի (1878-1898), մասն Բ, կազմ.՝ **Յ. Թօփճեան**, Վաղարշապատ, 1900, էջ 35ա):

գ Խաչքար. եկեղեցու հարավային ճակատին՝ մուտքից արևմուտք՝ վերնամասում, արձանագրությունը՝ 2 տող.

Յիշ(ա)տ(ակ) է ս(ուր)ք խ(ա)չս Մաք|ումին եւ (ի)ր կ(ե)ն(ա)կցին:

Խաչքար գ (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2002 թ., գրչ.՝ Ս. Դանիելյանի, 2022 թ.)

դ Խաչքար. եկեղեցու հարավային ճակատին՝ մուտքից արևելք՝ վերնամասում, արձանագրությունը՝ 2 տող.

Յիշ(ա)տ(ա)կ է ս(ուր)ք խ(ա)չս Ղա(ս)ումին: Յիշ(ա)տ(ակ) է ս(ուր)ք խ(ա)չս Լելումին, | թվի(ն) ՌՃԼԲ (1683):

Խաչքար դ (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2002 թ.)



Խաչքար դ (գրչ.՝ Ս. Դանիելյանի, 2022 թ.)

Ծանոթ. կարծում ենք՝ խոսքը եկեղեցու շինարարական արձանագրության մեջ նշված տանուտեր Ղասումի մասին է:

ե Խաչքար. եկեղեցու արևելյան ճակատին՝ կենտրոնական լուսամուտից հարավ, արձանագրությունը՝ 3 տող.

Յիշատ(ա)ք աջալ | էղէք Յովանէսին, | թիվ ՌՃԼԲ (1683) էր:

Ծանոթ. *աջալ*՝ մահ (Ղարաբաղի բարբառային բառարան, կազմ.՝ Ա. Սարգսյան, Երևան, 2013, էջ 64), ըստ այդմ՝ *աջալ էղէք*՝ մահացած:

Խաչքար ե (լուս. և գրչ.՝ Ս. Դանիելյանի, 2019, 2022 թթ.)

զ Խաչքար. եկեղեցու արևելյան ճակատին՝ կենտրոնական լուսամուտի հյուսիսային կողմում, արձանագրությունը՝ 3 տող.

Յիշ(ա)տ(ա)կ է ս(ուր)ք խ(ա)չս | Շահզ(ա)տե(ին), թվ(ին) ՌՃԼ|Բ (1683):

է Խաչքար. եկեղեցու արևելյան ճակատին՝ կենտրոնական լուսամուտի հարավային կողմում, արձանագրությունը՝ 2 տող.

Յիշ(ա)տ(ակ) է ս(ուր)ք խ(ա)չս Խ(ա)ն|զ(ատի)ն, թվ(ի)ն ՌՃԼԲ (1683) էր:

ը Որմնախաչ. եկեղեցու խորանի հյուսիսային անկյունը հյուսիսային սյանը միացնող կամարի արևմտահայաց կոր մակերեսին, արձանագրությունը՝ 4 տող.

Յիշ(ա)տ(ակ) է ս(ուր)ք | խ(ա)չս | Վանո(ւ)|մին:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դ.:

թ Որմնախաչ. եկեղեցու հարավային սյունն արևմտյան պատի հարավային որմնասյանը միացնող կամարի արևմտահայաց կոր մակերեսին, արձանագրությունը՝ 3 տող.

Յիշ(ա)տ(ա)կ է | ս(ուր)ք խ(ա)չս | Մարտիրոս(ի)ն:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դ.:



Խաչքարեր *զ* և *է* (լուս. և գրչ.՝ Ս. Դանիելյանի, 2019, 2022 թթ.)



Որմնախաչ *ը* (լուս. և գրչ.՝ Ս. Դանիելյանի, 2019, 2022 թթ.)

Որմնախաչ *թ* (լուս. և գրչ.՝ Ս. Դանիելյանի, 2019, 2022 թթ.)

Արձանագրություն ժ և 2012 թ. նորոգման ցուցանակը (լուս.՝ Ա. Հայրապետյանի, 2020 թ.)

Քույր և եղբայր Շահնազարյանցների հուշակոթողը (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2019 թ.)

ժ Արձանագրություն. խորանի հարավային անկյունը հարավային սյանը միացնող կամարի արևմտահայաց կոր մակերեսին՝ 3 տող.

Յ(ի)շ(ա)տ(ա)կ է ս(ուր)ք, / Քզլաղ/էն(՞), խ(ա)չս:

Ծանոթ. վիմագրական կանոնները խախտված են. *ս(ուր)ք* և *խ(ա)չս* բառերը գրված են ոչ ճիշտ հերթականությամբ:

ժա Արձանագրություն. նույն տեղում՝ նախորդից ցած, սալիկին՝ 6 տող.

Ս(ուր)ք Աստվածածին / եկեղեցին / վերանորոգվել է / Արմեն Դավթյանի / կողմից / 2012 թ.:

Եկեղեցու արևելյան կողմում էր գտնվում Քյուրաթաղի հին ազգատոհմերից մեկի՝ քույր և եղբայր Շահնազարյանցների հիշատակին կերտված հուշակոթողը:

Տապան Անինկայ՝ / որդի Շահնազար / Շահնազարեանցի, / գանք 22 ամաց, / վախճ. 1907 մարտի / 18: / Քոյր և եղբայր: // Տապան Բեկլարին՝ / որդի Շահնազար / Շահնազարեանցին, / գանք 37 ամաց, / վախճ. 1908, 6 / ապրելի: / Վարպետն է Տող գիւղացի / Առաքել Յովսէփեանց:

Քահանա. փոքրաքանակ բնակչությամբ Քյուրաթաղը երբևիցե սեփական քահանա չի ունեցել. այնտեղ հովվում էին հարևան Պլեթանցի հոգևոր հայրերը: Նրանցից էր *Բաղդասար Մելքոնյան Խանդությանցը* (ծնվ. 1779 թ.), որը քահանայագործել է 1818 թ.-ից առնվազն մինչև 1844 թ.[36]:

1893 թ. գյուղաբնակների հոգևոր պետքերը հոգում էր *Ստեփաննոս Ավետիսյան Տեր-Ստեփանյանցը*[37]:

Հայտնի է, որ 1912 թ. գյուղը քահանա չուներ[38]:

Տեղեկություններից մեկն էլ պարզում է, որ 1922 թ. քահանայագործում էր դպրոցավարտ մեկ քահանա[39]:

Փառքի (ՀՄՊԶ) և Արցախյան առաջին ազատամարտի հուշարձաններ. եկեղեցու հյուսիսային կողմում՝ ավելի բարձրադիր տեղանքում (N 39.575011; E 47.050364, ծ. մ.՝ 719 մ), կառուցված է Մեծ Հայրենական պատերազմում զոհված կամ անհետ կորած 62 քյուրաթաղցիների հիշատակը հավերժացնող հուշարձանը[40]:

Վերոնշյալ հուշարձանին կից է Արցախյան ազատամարտում ընկած քյուրաթաղցի հերոս հայորդիներին նվիրված հուշակոթողը:

2016 թ. ապրիլի 13-ին՝ ծննդյան օրը, հայրենի գյուղի գերեզմանոցում է ամփոփվում Ապրիլյան քառօրյա պատերազմում նահատակված հրետանու պետ, փոխգնդապետ Ռոման Վլադիկի Պողոսյանը (1979-2016): Ծառայության ընթացքում արժանացել է բազմաթիվ պատվոգրերի և մեդալների: Դրանցից են «Անբասիր ծառայության» 1-ին և 2-րդ աստիճանի, Վ. Սարգսյանի անվան, ՀՀ ԶՈՒ 20-ամյակին նվիրված մեդալները: Մինչև ապրիլի 10-ը համարվել է անհետ կորած: Ապրիլի 11-ին Կարմիր խաչի միջազգային կոմիտեի միջոցով հանձնված զոհվածների մեջ է եղել նաև Ռոման Պողոսյանի մարմինը:

Հուշակոթողին.

Պողոսյան Ռոման Վլադիկի, 1979-2016:

Սալատապանին՝ 7 տող.

Դու գնացիր հանուն մեզ, / հանուն երկրի փրկության, / պատերազմը տարավ քեզ՝ / թողնելով մեզ առանց քեզ: / Մահը քեզ տարավ / իմ տաքուկ գրկից, / բայց քեզ չի հանի / իմ սրտի միջից:

36 ՀԱԴ, ֆ. 56, ց. 12, գ. 531-533, 538: Ձեռնադրվել է 1818 թ. մարտի 14-ին Գանձասարի վանքում, իսկ 1839 թ. մարտի 20-ին՝ ստացել ավագ քահանայի կոչում:

37 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 8889, թ. 155 շրջ.-156:

38 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 11608, թ. 360 շրջ.:

39 Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 760:

40 **Քարսեղյան Ս.**, նշվ. աշխ., էջ 376-377:

Փառքի (ՀՄՊՁ), Արցախյան առաջին ազատամարտի հուշարձանները և Ռոման Պողոսյանի շիրիմը (լուս.՝ Գ. Ալեքսանյանի, 2019 թ.)

Հեռի աղբյուրը և արձանագրությունը (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2019 թ.)

Հեռի (Հեռու) աղբյուր. գտնվում է գյուղի հարավ-արևմտյան եզրին (N 39.573828; E 47.049458, ծ. մ.՝ 713 մ): Ունի պարզ կառուցվածք: Ակը բացված է ոչ այնքան բարձր լայնակի պատի մեջ, որին աջ կողմից կից է երկայնական հենապատը՝ բազմակտոր նովի ամբողջականությունը պահպանելու նպատակով: Հենապատի՝ ակին մոտ հատվածում բացված է ուղղահայաց դիրքով միմյանց զուգահեռ ուղղանկյուն երկու խորշ: Նովի եզրին՝ ակի հանդեպ, առկա է նեղ ջրհոս-փողրակ, որի շնորհիվ կարգավորվում է ջրի մշտական մակարդակը: Շինարարական արձանագրությամբ քարը տեղադրված է ակից վեր՝ ամենաերևացող տեղում: Վերջինս և նովի ճակատային քարերը սրբատաշ են, իսկ մնացած հատվածներն անմշակ և կոպտատաշ քարից են՝ կրաշաղախի միացությամբ:

Արձանագրություն. փորագիր 4 տող.

Աղբուրս շ(ի)նէ/ցին Ճիւրաթա/դա ժողովուրդ / թ(վին) 1913: Վար(պետ)՝ Ի. Բ. Ա. Բ.:

Ի դեպ, արմատներով քյուրաթաղցի ռուսաստանաբնակ Վալերի Կազարովի նյութական աջակցությամբ 2013 թ. կառուցված արտեզյան ջրհորը հնարավորություն է տվել գյուղին ապահովելու խմելու և ոռոգման ջրով:

Հարկ է նշել, որ գյուղամիջում է գտնվում նաև Պոտուն (Պետրոսի), իսկ բնակավայրից ոչ հեռու՝ Ցուրտ աղբյուրը[41]:

Գյուղամերձ հնավայրեր. Քյուրաթաղի մերձակայքում պահպանվել են միջնադարյան գյուղատեղիներ: Դրանցից է Տնջրին աղբյուրը (N 39.578611; E 47.075642, ծ. մ.՝ 564 մ), որի մնացորդները տարածվում են գյուղից 2 կմ հյուսիս-արևելք: Գյուղատեղիի պատմական անունը մոռացության է մատնվել, ներկայիս անունը ստացել է տարածքում առկա աղբյուրից: 2000-ական թթ. տեղում դեռևս պահպանվում էր խաչքարերով գերեզմանոցը:

Հաջորդը Հականոր գետակի աջ ափին տարածված համանուն գյուղատեղին է՝ Քյուրաթաղից 1 կմ հարավ-արևելք (N 39.568128; E 47.055128, ծ. մ.՝ 748 մ): Այս հնավայրի պատմական անունը ևս հայտնի չէ: Նոր անունը ստացել է ավելի ուշ շրջանում, ըստ ամենայնի՝ հակ և նոր բառերի՝ ա հոդակապով կազմությամբ: Տարածքում պահպանվել են գերեզմանոցը և հազիվ նշմարելի եկեղեցու մնացորդը:

Մեկ այլ գյուղատեղի էլ՝ Մրղուզ (Մուրղուզ) անվամբ, տարածվում է 5 կմ հյուսիս-արևելք (N 39.591614; E 47.106206, ծ. մ.՝ 469 մ):

Բացի գյուղատեղիներից՝ Քյուրաթաղից 1,6 կմ հարավ-արևմուտք գտնվում էր տեղացիների շրջանում Հանգած եղցի անվամբ հայտնի տեղամասը (եկեղեցին չի պահպանվել):

41 **Արղազ**, Ջուր տվեք, «Կոմունիստ» /Բաքու/, 1929, № 86, 15 ապրիլի, էջ 3:

ՀՃՈՒՀ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Բնության և պատմության հուշարձաններով հարուստ Հայաստանի գողտրիկ անկյուններից են Խոսրովի արգելոցը և նրան հարակից գոտին: Այս ուղեցույցը կարող է օգտակար լինել այն զբոսաշրջիկների համար, ովքեր ցանկություն ունեն ծանոթանալու արգելոցի բուսական, կենդանական աշխարհին, երկրաբանությանը և պատմական հուշարձաններին:

«ԽՆՈՒՍ» հատորը լույս ընծայվեց Հայաստանում և Սփյուռքում հայագիտության և մշակույթի զարգացմանը մշտապես սատարած երջանկահիշատակ **Հարություն Սիմոնյանի** (5 մայիս 1921, Այնթապ - 2 սեպտեմբեր 2007, Ժենուլիե, Շվեյցարիա) մերձավորների սիրահոժար մեկենասությամբ:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ԵՆՔ ՀԱՅՏՆՈՒՄ

- «**Save Armenian Monuments**» կազմակերպությանը
- «**Թուֆենկյան**» և «**Ford**» հիմնադրամներին
- ՀՃՈՒՀ հոգաբարձուների խորհրդի անդամ **Մարգրիտ Հախնազարյանին**
- ՀՃՈՒՀ բարեկամ **Վահագն Նազարյանին**

ՀՃՈՒ հիմնադրամին աջակցելու համար

CALOUSTE GULBENKIAN FOUNDATION

ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ
ՀՈՎԱՆՆԱՅԻ
ԳԱԼՈՒՍՏ
ԿՈՒԼՊԵՆԿՅԱՆ
ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ

ՆԱԽԱՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՀՈՎԱՆՆԱՅԻՆ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ,

RAA-USA ԱՍՈՒՆՑԵՅԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ ՀՈՎԱՆՆԱՅԻՆ

RESEARCH ON ARMENIAN
ARCHITECTURE

ԵՐԵՎԱՆ - YEREVAN
2022

ISSN 1626-2003